

**«ԱՅԼԵՎՍ ԵՐԲԵՁ.
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»**

**«НИКОГДА БОЛЕЕ.
АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»**

**«NEVER AGAIN.
ARMENIA CANNOT AFFORD TO LOSE ANY WAR»**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

25-ЛЕТНИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

THE 25TH ANNIVERSARY OF THE REPUBLIC OF ARMENIA

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՐԲ
ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՐԲ**



ՀԱՊԿ-ի Հավաքական անվտանգության խորհրդի նիստ.
Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյան (կենտրոնում),
Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտին,
Տաջիկստանի Հանրապետության Նախագահ Էմոմալի Ռահմոն,
ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժա,
Բելառուսի Հանրապետության Նախագահ Ալեքսանդր Լուկաշենկո,
Ղազախստանի Հանրապետության վարչապետ Բակիջան Սաֆինտաև
և Ղրղզստանի Հանրապետության Նախագահ Ալմազբեկ Աբամբաև
Երևան, 2016 թ. հոկտեմբերի 14



Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է
Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) գագաթնաժողովին
Նիդեռլանդներ, Մաաստրիխտ, 2016 թ. հոկտեմբերի 20



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3 (89). 2016

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոբանջյան Հ. Ս.**
քաղաքական գիտությունների
դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր,
ՌԴ Ռազմական գիտությունների
ակադեմիայի ընտրված
խկական անդամ,
հակահարեկչության գծով
գիտնական-փորձագետ (ԱՄՆ)
(նախագահ)
- Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
- Ալեքսանյան Ա. Ջ.**
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապրիանով Է. Ա.
Ավետիսյան Վ. Ն.
Դավթյան Ա. Մ.
Իսախանյան Մ. Ռ.
Խաչատրյան Կ. Ա.
Խաչատրյան Տ. Վ.
Խաչատուրով Յու. Գ.
Ղահրամանյան Ա. Բ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
- Յուլյան Ն. Ի.**
Նազարյան Ա. Ս.
Շահնազարյան Թ. Ն.
Շիրինյան Մ. Ա.
Պողոսյան Բ. Պ.
Սարգսյան Վ. Ռ.
Սեդրակյան Ս. Գ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Տոնոյան Գ. Է.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

- Հ. Ս. Քոբանջյան,** Հայաստանի անկախության
25-ամյակը. հայկական պետականության պահ-
պանման և կայուն զարգացման ապահովման
նպատակով Ղարաբաղում պատերազմի զսպման
ռազմավարության նկատմամբ նորամուծական
մոտեցումներ 9
- Ն. Հ. Հովհաննիսյան,** Հայաստանի Հանրապե-
տությունը կայացած արդիական պետություն է և
միջազգային հանրության լիիրավ անդամ 18
- Ա. Բ. Չարարյան,** ՀՀ արտաքին քաղաքակա-
նության ձեռքբերումներն ու մարտահրավերները . . 29
- Թ. Ն. Մանասերյան,** ՀՀ տնտեսական զարգաց-
ման առանձնահատկությունները և հեռանկար-
ները 37
- Գ. Ա. Պողոսյան,** Պետականության գաղափա-
րի հասարակական ընկալումը ՀՀ-ում 55
- Պ. Ա. Չոբանյան,** Արցախում հայոց պետակա-
նության ավանդույթները և դրանց դերը ԼՂՀ
կազմավորման գործում 65
-
- ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
- Ա. Գ. Դավթյան, Ա. Գ. Իսրայելյան,** Ռուսաստա-
նի և Թուրքիայի հարաբերությունները էներգետիկ
ոլորտում նրանց վարած քաղաքականության
համատեքստում 74
-
- ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**
- Ա. Հ. Ներզեքյան,** Կիբեռզսպումը որպես կիբեռ-
անվտանգության ապահովման կարևոր գործիք . . . 87

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Սարգսյան, Ա. Դ. Հովսեփյան, Վտանգավոր հետևանքների կանխումը ՋԶԷՌ-440/270 ռեակտորի ճնշման փոխհատուցիչը և առաջին կոնտուրը միացնող խողովակաշարի վթարման դեպքում 95

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հ. Մ. Գրիգորյան, Մարդասիրական իրավունքի միջազգային նորմերի լուրջ խախտում և պատերազմական հանցագործություն հասկացությունների հարաբերակցությունը 102

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. Շահվերդյան, Ֆեյսբուք սոցիալական ցանցում ՀՀ ռազմական տեղեկույթի և բանակային թեմաներով նյութերի տարածման հարցի շուրջ 112

ՈԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Գ. Գալստյան, Մ. Վ. Սարգսյան, Թ. Թ. Մադոյան, Նեյրոցիրկուլյատոր ասթենիայով հիվանդների տազմապախոշվության վիճակի հետազոտություն 118

ՈԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ 124

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ. Ս. Չիլինգարյան, Ա. Ա. Մարտիրոսյան, Լ. Հ. Պասկիկյան, Զ. Վ. Փիրոյան, Համարի բառարան 126

ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
 - Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Լ. Ս. Արզումանյան*, բանասիրական գիտությունների դոկտոր,
 - Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ս. Ա. Գալստյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Ս. Գ. Գալստյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 - Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Կ. Ս. Դանիելյան*, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
- Բ. Ն. Հարությունյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 - Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Հ. Հ. Մաթևոսյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
 - Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ս. Մ. Մարգարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Մ. Մ. Միրիչյանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Կ. Ս. Մոսոյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Յու. Ս. Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Յ. Սալադյան*, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 - Ռ. Ա. Սաֆրասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Ա. Հ. Սիմոնյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
 - Հ. Ս. Սիսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 3 (89). 2016

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котангжян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алексян А. Дж.*, *Априамов Э. А.*, *Варганян А. Г.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Исаханян М. Р.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартиросов Л. А.*, *Назарян А. С.*, *Погосян Б. П.*, *Саргсян В. Р.*, *Седракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Хачатрян К. А.*, *Хачатрян Т. В.*, *Хачатуров Ю. Г.*, *Шахназарян Т. Н.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

25-ЛЕТИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Г. С. Котангжян. 25-летие независимости Армении: инновационные подходы к стратегии сдерживания войны в Карабахе с целью сохранения и устойчивого развития армянской государственности . . . 9 (15)*

Н. О. Оганесян. Республика Армения – состоявшееся современное государство и полноправный член международного сообщества . . . 18 (27)

А. Б. Закарян. Достижения и вызовы внешней политики РА 29 (36)

Т. Н. Манасерян. Особенности и перспективы экономического развития РА 37 (53)

Г. А. Погосян. Общественное восприятие идеи государственности в РА 55 (63)

П. А. Чобанян. Традиции армянской государственности в Арцахе и их роль в деле формирования НКР 65 (72)

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

А. Г. Давтян, А. Г. Исраелян. Отношения России и Турции в контексте проводимой ими политики в энергетической сфере 74 (85)

КИБЕРБЕЗОПАСНОСТЬ

А. О. Нерзетян. Киберсдерживание как важный инструмент обеспечения кибербезопасности 87 (93)

ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

С. А. Саргсян, А. Д. Овсепян. Предотвращение опасных последствий в случае повреждения трубопровода, соединяющего компрессор давления с первым контуром реактора ВВЭР-440/270 95 (101)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

Г. М. Григорян. Соотношение концепций серьезного нарушения международных норм гуманитарного права и военного преступления 102 (110)

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

А. М. Шахвердян. К вопросу распространения в социальной сети Facebook военной информации РА и материалов на армейские темы 112 (117)

ВОЕННАЯ МЕДИЦИНА

С. Г. Галстян, М. В. Саргсян, Т. Т. Магоян. Состояние тревожности у лиц с нейроциркуляторной астенией 118 (123)

НОВОСТИ В ВОЕННОЙ ОБЛАСТИ 124

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян, А. А. Мартиросян, Л. Г. Папикян, К. В. Пироян. Словарь номера 126 (128)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА;
Л. С. Арзуманян, доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА;
Г. Е. Багдасарян, академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА;
К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;
А. А. Мантасян, академик НАН РА;
М. М. Маргарян, доктор политических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
Р. А. Сафрастян, академик НАН РА,
О. Я. Саядян, доктор географических наук, профессор,
А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;
Ю. С. Чилингарян, академик НАН РА

«**HAIKAKAN BANAK**» («**ARMENIAN ARMY**»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 3 (89). 2016

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Apreamov E. A.*, *Avetisyan V. N.*, *Ayvazyan L. G.*, *Davtyan A. M.*, *Idinyan R. A.*, *Isakhanyan M. R.*, *Kaghramanyan A. B.*, *Khachatourov Yu. G.*, *Khachatryan K. A.*, *Khachatryan T. V.*, *Margaryan V. H.*, *Martirossov L. A.*, *Nazaryan A. S.*, *Poghosyan B. P.*, *Sargsyan V. R.*, *Sedrakyan S. G.*, *Shahnazaryan T. N.*, *Shirinyan M. A.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Vardanyan A. G.*, *Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

CONTENTS

THE 25TH ANNIVERSARY OF THE REPUBLIC OF ARMENIA

- H. S. Kotanjian.* The 25th anniversary of Armenia's independence: innovative approaches to the strategy for containing war in Karabakh aimed at the maintenance and sustainable development of the Armenian statehood 9 (16)*
- N. H. Hovhannisyan.* The Republic of Armenia: a successful modern state and full member of the international community 18 (28)
- A. B. Zakaryan.* RA foreign policy achievements and challenges ... 29 (36)
- T. N. Manaseryan.* The peculiarities and perspectives of the RA economic development 37 (54)
- G. A. Poghosyan.* Public perception of the idea of statehood in the RA 55 (64)
- P. A. Chobanyan.* The traditions of Armenian statehood in Artsakh and their role in the formation of the NKR 65 (73)

INTERNATIONAL RELATIONS

- A. G. Davtyan, A. G. Israyelyan.* The Russia—Turkey relations within the context of their policies in the energy sphere 74 (86)

CYBERSECURITY

- A. H. Nerzetyan.* Cyberdeterrence as an essential cybersecurity tool . 87 (94)

* Numbers in brackets mean the page of the text in English.

ENERGY SECURITY

S. A. Sargsyan, A. D. Hovsepyan. Prevention of hazardous aftermaths of the damage of the pipeline connecting the pressurizer with the first circuit of the WWER-440/270 reactor 95 (101)

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

H. M. Grigoryan. The correlation of the concepts of a serious violation of international norms of humanitarian law and a war crime 102 (111)

INFORMATION SECURITY

A. M. Shahverdyan. On the issue of sharing the RA military data and material on army topics in the Facebook social network 112 (117)

MILITARY MEDICINE

S. G. Galstyan, M. V. Sargsyan, T. T. Madoyan. The anxiety state in patients with neurocirculatory asthenia 118 (123)

SOMETHING NEW IN MILITARY FIELD 124

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan, A. A. Martirosyan, L. H. Papikyan, Q. V. Piroyan. Volume Dictionary 126 (129)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian,* Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
L. S. Arzumanyan, Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
Yu. S. Chilingarian, Full Member, NAS RA;
K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyunian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA;
Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;
A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
25-ԱՄՅԱԿԸ

25-ЛЕТИЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

THE 25TH ANNIVERSARY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԱՐԱԲԱՂՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՍՊՄԱՆ ՌԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հ. Ս. ՔՈԹԱՆԶՅԱՆ, գեներալ-լեյտենանտ, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր (ՀՀ), ԱՄՆ-ի ՊԱՀ-ի հրավիրված առաջատար պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ

Նշելով Հայաստանի անկախության հարցով 1991 թվականի սեպտեմբերի 21-ին կայացած հանրաքվեի 25-րդ տարեդարձը և հաշվի առնելով Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության դեմ ս. թ. ապրիլին Ղարաբաղում սանձազերծված Չորսօրյա պատերազմի դասերը՝ մենք պարտավոր ենք մտածել նոր ռազմական տեխնոլոգիաներով և զինված պայքարի վարման ու դրա դինամիկայի վերահսկման թվային գործիքներով հագեցած նոր սերնդի պատերազմների դարաշրջանում հայոց պետականության պահպանման և զարգացման համար երաշխիքների ստեղծման մասին:



Աշխարհը, թևակոխելով 21-րդ դար, պահանջում է «սակավ շոշափելի, սակայն շատ ավելի հզոր գեների՝ գիտելիքների վիրաբուժորեն ճշգրիտ կիրառում»: Այս առումով տեղեկության-համակարգչային դարն առանձնանում է իրեն հատուկ բնութագրիչներով, որոնք աշխարհի ականավոր մտածողները կոչ են անում հաշվի առնելու արյունահեղ պատերազմների զսպման և կանխման գործում¹:

Պատերազմների վարման ու կանխման միջոցների տեղեկության հագեցվածության դարաշրջանում, մի կողմից, տեխնոլոգիական նորամուծությունների կիրառման և, մյուս կողմից, մարտական գործողությունների նախապատրաստման վրա քաղաքական-դիվանագիտական ներգործության մեթոդների խելացի համակցումը հնարավորություն է տալիս մշակելու մի այնպիսի հայեցակարգ, ըստ որի՝ ագրեսիայի զսպումը կատարվում է պատերազմին նախապատրաստումն ազդարարող ռազմական ուժի կուտակման ու տեղաշարժերի նկատմամբ արդյունավետ տեղեկատվական վերահսկողության

միջոցով: Նման ռազմավարության շնորհիվ հնարավորություն է ստեղծվում, որպեսզի խաղաղապահության ոլորտում գործող միջնորդ կողմերը հակամարտության մասնակիցներին տրամադրեն երկու կողմերի կամ նրանցից մեկի՝ խաղաղությանն սպառնացող նախապատրաստումների վերաբերյալ ռեալ տեղեկույթ այն նպատակով, որ դրանց հակեն հրաժարվելու պատերազմին նախապատրաստումից և հակառակորդի ֆիզիկական ոչնչացմանը կողմնորոշվածությունից: Տվյալ մոտեցումը, եթե այն խաղաղարարական գործընթացում կիրառեն հեղինակավոր միջազգային միջնորդները, առավել ևս՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետությունները, ըստ էության նախատեսում է սառեցված զինված հակամարտության կողմերի որոշումների կայացման վրա ազդելու նպատակով խելացի ուժի կիրառում: ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահներ ՌԴ-ի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի դեպքում տեղեկատվական ոլորտում նրանց ունեցած գերակայությունը աշխարհի այդ առաջատար տերություններին հնարավորություն է տալիս կողմերին հաջողությամբ հետ պահելու պատերազմի վերսկսումից այնպիսի իրավիճակներում, երբ ուժի գործադրումը նպատակահարմար չէ: Նման հակամարտություններում սովորաբար նպատակը լինում է ոչ թե հակառակորդի ջախջախումը (ոչնչացումը) կամ տարածքի գրավումը, այլ նրա քաղաքականության փոփոխումը: Միջնորդի դեր ստանձնած մեծ տերությունների այդպիսի ռազմավարությունը հնարավորություն է տալիս հակամարտող կողմերի գաղտնի պատրաստությունները տեղափոխելու միջնորդ պետությունների, նրանց ներկայացրած հեղինակավոր միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև հենց հակամարտող սուբյեկտների կորզած և վերահսկած բաց տեղեկույթի ոլորտ:

Տվյալ համատեքստում Ղարաբաղյան զինված հակամարտության դեպքում հույժ կարևոր է հենվել նրա դինամիկայի ռազմավարական քաղաքական-անվտանգային գնահատականի վրա՝ հասկանալով, որ ՀՀ-ԼՂՀ-ի և ԱդրՀ-ի միջև սպառազինությունների մակարդակի անհաշվելիչության հնարավոր աճման պայմաններում չի կարելի ապավինել մարտական գործողությունների վերսկսման կանխմանը ավանդական ռազմական զսպման եղանակով: Անհրաժեշտ է գիտականորեն իմաստավորել Ղարաբաղում պատերազմի վերսկսումը զսպելու նպատակով միջազգային հանրության հետ համագործակցության նկատմամբ այն նորամուծական մոտեցումները, ըստ որոնց մարտական գործողությունների ծավալմանը կողմերի նախապատրաստման մասին ազդարարող ռազմական ուժի վտանգավոր տարաշարժների մշտազննման (մոնիտորինգի) համար կարող են կիրառվել միջազգային հանրության բարձր տեխնոլոգիական միջոցները: Խոսքը վերաբերում է ՊԱՀՀ-ում մեր մշակած մեթոդաբանությանը, ըստ որի՝ Ղարաբաղյան հակամարտության գոտում ուժերի փոփոխման վտանգավոր դինամիկայի խորագնման (գոնոսթի) գործում պետք է ներգրավվեն ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահներ, Անվտանգության խորհրդի մշտական անդամներ ՌԴ-ն, ԱՄՆ-ը և ՖՀ-ն՝ վերազգային տիեզերական տարածությունից վերահսկման իրենց ուղեծրային հեռադիտական (դիստանցիոն) միջոցների գործադրմամբ:

Միջազգային տիեզերական իրավունքը միջազգային հանրությանը հնարավորություն է տալիս մերձերկրային տիեզերական տարածությունից վերահսկելու հակամարտության գոտում պատերազմական գործողությունների վերսկսմանը զորքերի պատրաստման դինամիկան, այդ թվում՝ զորքերի ու ռազմական տեխնիկայի մոբիլիզացումը և կուտակումը, սպառնալից վերադասավորումը: Վերահսկողության այս եղանակը, որի դեպքում հեռազնունդը ազգային օդային տարածքից (դիստանցիոն դիտում) տեղափոխվում է վերազգային տարածություն, կարող է օգտագործվել որպես պատերազմի կանխման վերաբերյալ խորհրդարկումների (կոնսուլտացիաների) ու բանակցությունների կիրառմամբ քաղաքական-դիվանագիտական զսպման միջոց:

Երկիրը տիեզերքից խորագնելու վերաբերյալ սկզբունքների հռչակագիրը նախատեսում է, որ «Միջազգային համագործակցության խրախուսման և ակտիվացման համար, հատկապես՝ զարգացող երկրների կարիքների հաշվառմամբ, տիեզերքից Երկրի հեռահար խորագնում կատարող պետությունը, ըստ խնդրանքի, խորհրդարկումներ է անցկացնում այն պետության հետ, որի տարածքը խորագնվում է»², իսկ Տիեզերական տարածության, ներառյալ՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ուղղությամբ պետությունների գործունեության սկզբունքների մասին պայմանագիրը նախատեսում է, որ «Տիեզերական տարածությունը, ներառյալ՝ Լուսինը և այլ երկնային մարմիններ, ենթակա չէ ազգային յուրացման ո՛չ դրանց նկատմամբ ինքնիշխանության հռչակման եղանակով, ո՛չ օգտագործման կամ զավթման ճանապարհով, ոչ էլ որևէ այլ միջոցով»³:

Միջնորդ խաղաղարար տերությունների ուղեծրային խորագնական միջոցների կիրառմամբ պատերազմի վերսկսումը զսպելու այս նորամուծական հայեցակարգի կիրառումը կարող է արդյունավետ եղանակ լինել շարունակվող Ղարաբաղյան հակամարտության դեպքում, մի հակամարտության, որն ավելի քան քառորդ դար մարմրում է մրրկահույզ Միջին Արևելքի անմիջական հարևանությամբ: Այն նաև ռազմավարական կարևորություն ունի տարածաշրջանային անվտանգության համար, ինչը պայմանավորված է Հայաստանին, Ադրբեջանին, Կրաստանին, Իրանին և Թուրքիային հայաբնակ Ղարաբաղի մերձությամբ: Ուստի Ղարաբաղում ռազմական գործողությունների յուրաքանչյուր վերսկսում կարող է ցեղասպանության մի նոր ողբերգական էջ բացել Արևելքն ու Արևմուտքը կամրջող այս տարածաշրջանում, որտեղ Իսլամական պետության դահիճները քրիստոնյաների, հրեաների, եզդիների և ահաբեկչական ջիհադի մեջ չներգրավված մահմեդականների նկատմամբ այսօր իրագործում են ցեղասպանություն:

Այս առումով կարևոր է խորհել ժամանակակից պատմությունից մարդկության դեմ կատարված ցեղասպանական հանցագործությունների ենթարկված ժողովուրդների քաղած դասերի մասին. հայերն այդ ժողովուրդների շարքում են: Հատկանշական է, որ Հոլոքոստի անվանի հետազոտողներից մեկը՝ Երուսաղեմի Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի գործադիր

տնօրեն, «Ցեղասպանության հանրագիտարանի» գլխավոր խմբագիր, դոկտոր Իսրայել Չառնին նշում է. «Հայոց ցեղասպանությունը ուշագրավ է շատ առումներով, ներառյալ այն փաստը, որ արյունալի 20-րդ դարում դա զանգվածային ցեղասպանության վաղ օրինակ է, որը շատերը Հոլոքոստի «փորձ» են համարում»⁴:

Հայ ժողովրդի համար «Այլա երբե՛ք» սկզբունքի հրատապությունը ևս մեկ անգամ երևան եկավ ԽՍՀՄ-ում Վերակառուցման շրջանում իր հայ բնակիչների դեմ Ադրբեջանի ձեռնարկած ջարդերի ժամանակ⁵: Դրանք կազմակերպվել էին ի պատասխան ինքնորոշման և Ադրբեջանական ԽՍՀ-ից համաձայն այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրության դուրս գալու ուղղությամբ Լեռնային Ղարաբաղի հայության նախաձեռնած խաղաղ քաղաքական գործողություններին⁶:

1991 թ. նոյեմբերի 23-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդն ընդունեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) լուծարելու մասին օրենք: Ի պատասխան այդ ապօրինի ձեռնարկման՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում միջազգային չափանիշներին ու 1991 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքին խիստ համապատասխանությամբ և միջազգային դիտորդների մասնակցությամբ անցկացվեց անկախության հարցով հանրաքվե: ԼՂՀ ադրբեջանական փոքրամասնությանը հնարավորություն տրվեց մասնակցելու հանրաքվեին, սակայն Բաքվի ցուցումով նա հրաժարվեց այդ հնարավորությունից⁷: Հետագա իրադարձությունները վերացրին հանրաքվեի արդյունքները ԽՍՀՄ կենտրոնական մարմինների հետ համաձայնեցնելու անվերապահ պահանջը, քանի որ 1991 թ. դեկտեմբերի 21-ին ստորագրվեց Խորհրդային Միության լուծարման մասին Ալմա Աթայի հռչակագիրը⁸: Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում անցկացված հանրաքվեն օրինական է, իսկ դրա արդյունքներով ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ լեգիտիմ:

Ադրբեջանի Հանրապետությունը 1992 թ. Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմ սանձազերծեց, իսկ 1994 թ. Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը ստորագրեցին հրադադարի համաձայնագիր, ինչպես նաև 1995 թ.՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում հրադադարի հաստատունացման մասին եռակողմ պայմանագիր: Այս համաձայնագրերը հակամարտող կողմերը և Ղարաբաղյան հակամարտության գծով ԵԱՀԿ Մինսկի խումբը ճանաչեցին որպես իրենց էությանը անժամկետ և հակամարտության գոտում երկարատև զինադադարի հաստատման համար հիմք:

2016 թ. ապրիլի 2-ին՝ 1994 թ. հրադադարի կնքումից 22 տարի անց, Ադրբեջանի Ձինված ուժերը Ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի երկայնքով ձեռնարկեցին լայնամասշտաբ հարձակում, որի հիմնական նպատակն էր ձախողել հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու ԵԱՀԿ Մինսկի խմբի առաքելությունը, զավթել Լեռնային Ղարաբաղը և նրա հայկական

բնակչությանը ենթարկել ցեղասպանության: Նման վարքն զգալի չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ չկան շփման գծով ռազմական գործողությունների վերսկսման դինամիկայի վերահսկման մեխանիզմներ: Ադրբեջանը շարունակում է լայնամասշտաբ տարածաշրջանային պատերազմի սանձազերծման սպառնալիքով մոլորեցնել միջազգային հանրությանը և շանտաժի ենթարկել ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահ պետություններին՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ ԱՄՆ-ին, Ռուսաստանին և Ֆրանսիային, որոնք դիվանագիտական եղանակով համադասում են Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը:

Ադրբեջանը շարունակաբար մերժում է տեխնիկական և մարդկային պրոֆեսիոնալ ռեսուրսների օգտագործմամբ հրադադարի մշտազննման վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահների առաջարկությունները, որոնց իրագործման շնորհիվ հնարավոր կլիներ զսպել ռազմական գործողությունների վերսկսումը: Մինչդեռ ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահ պետությունները, Հայաստանի Հանրապետության առաջարկությամբ, արդեն մի քանի տարի շարունակ քննարկում են այդ մեխանիզմների՝ որպես վստահության ամրապնդման միջոցի ներդրման հնարավորությունը:

2016 թ. մայիսին Վիեննայում ԱՄՆ-ի պետքարտուղարի, Ռուսաստանի արտգործնախարարի և Ֆրանսիայի՝ եվրոպական հարցերով պետքարտուղարի մասնակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև կայացած հանդիպման արդյունքներով ձեռք բերվեց հակամարտության շփման գծի երկայնքով հրադարարի հրաձգային խախտումների հետաքննության մեխանիզմների վերաբերյալ համաձայնություն: Սա պատեհաժամորեն ընդունված որոշում է, որովհետև զուտ ռազմական զսպման հնարավորությունները խիստ նվազել են, քանի որ կողմերից մեկը ակտիվ կերպով գնում է հարձակողական սպառնազինություն՝ խախտելով ուժերի հաշվեկշիռը:

Վիեննայում 2016 թ. մայիսին կայացած հանդիպման արդյունքները տվյալ համատեքստում պետք է դիտվեն որպես ոչ միայն հրադադարի ռեժիմը երկու հակամարտող կողմերի ազգային օդային տարածքներից վերահսկելու վերաբերյալ համաձայնություն, այլև երկու հակամարտող պետությունների ազգային ինքնիշխանություններից դուրս գտնվող տիեզերական տարածությունից հարձակողական սպառնազինության կուտակման և զորքերի տեղաշարժի միջոցով պատերազմին պատրաստումը վերահսկելու մեխանիզմների վերաբերյալ ՀՀ-ի և ԱդրՀ-ի հետ հաջողված միջազգային խորհրդարկություն⁹:

Այս տեսակետից օգտակար կլիներ, եթե ԵԱՀԿ Մինսկի խմբի Համանախագահները բանակցություններ սկսեին Ղարաբաղյան հակամարտության գոտում պատերազմի վերսկսման համար հարձակողական սպառնազինության կուտակումը և զորքերի տեղաշարժը մշտազննելու, վերահսկելու և շա-

հագրագիտ կողմերին իրազեկելու նպատակով իրենց տրամադրության տակ եղած մերձերկրային ուղեծրային ապարատները կիրառելու հարցով:

Պատերազմների սանձազերծմանը զորքերի նախապատրաստման տեղեկության վերահսկողության ժամանակակից տեխնոլոգիական միջոցների հիմքի վրա զսպման այս քաղաքական-դիվանագիտական ռազմավարությունը միջազգային հանրության զինանոցում ներառելու դեպքում կարող է առաջ գալ փոքր և միջին տարածաշրջանային պետությունների զինված ուժերի օպտիմալ կառուցվածքի հարցը վերաիմաստավորելու անհրաժեշտություն: Նրանցից շատերը կարող են բավարարվել այնպիսի զինված ուժերով, որոնք ունակ լինեն անհրաժեշտության դեպքում հակառակորդին որոշակի քաղաքական զիջումներ պարտադրելու ըստ միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի՝ առանց ոչնչացմանը նպատակաուղղված լիամասշտաբ պատերազմներ վարելու:

Միջնորդ խաղաղարար տերությունների կողմից իրենց տնօրինության տակ եղած համապատասխան տեխնոլոգիաների օգտագործման դեպքում հակամարտող կողմերի անգամ համեստ ռազմական բյուջեները կարող են «բավարար» լինել, որպեսզի նրանք առանց խաղաղության համար սպառնալիք ներկայացնող հարձակողական սպառազինությունների մրցավազքի պահպանեն իրենց պատշաճ պաշտպանունակությունը:

Այսպիսով՝ տիեզերական տարածությունից խորհրդարկված խորագննական միջոցները սաստման նպատակով օգտագործելու և Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսումը քաղաքական-դիվանագիտական զսպման եղանակով կանխելու նկատմամբ տվյալ նորամուծական մոտեցումը կարող է դառնալ այն արդյունավետ գործիքը, որը մերձակա անկայուն տարածաշրջանում ծանրակշիռ դերակատարների աղետալի ներգրավմամբ տեղի ունեցող այլ՝ Ղարաբաղյան հակամարտության նման, ընդդիմամարտություններում կիրառվի լայնամասշտաբ ռազմական գործողությունների դրանց վերաճումը կանխելու համար:

¹ Stu *J. S. Nye*. *Soft Power: The Means to Success in World Politics*. New York, 2004:

² Stu «Принципы, касающиеся дистанционного зондирования Земли из космического пространства». Приняты резолюцией 41/65 Генеральной Ассамблеи от 3 декабря 1986 г. (http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/earth_remote_sensing.shtml):

³ Stu «Договор о принципах деятельности государств по исследованию и использованию космического пространства, включая Луну и другие небесные тела». Принят резолюцией 2222 (XXI) Генеральной Ассамблеи от 19 декабря 1966 г. (http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/outer_space_governing.shtml):

⁴ Stu «The Widening Circle of Genocide». «Genocide: A Critical Bibliographic Review», Vol. 3. Ed. by Israel W. Charny. New Branswick, London, 1994, P XIX:

⁵ Stu *Jacques Derrida, Isaiah Berlin, Alain Finkielkraut, Richard Rorty, and Adrian Lyttelton, et al.* An Open Letter on Anti-Armenian Pogroms in the Soviet Union. Joint

initiative of the Helsinki Treaty Watchdog Committee of France and intellectuals from the College International de Philosophie, Paris, 27 September 1990. «The New York Review of Books» (<http://www.nybooks.com/articles/1990/09/27/an-open-letter-on-anti-armenian-pogroms-in-the-sov/>):

⁶ Տես «Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» № 1410-1 от 3 апреля 1990 г.». «Ведомости Съезда народных депутатов СССР, Верховного Совета СССР», 1990, № 15; «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագիր»: Ընդունված է 1991 թ. սեպտեմբերի 2-ին (<http://www.nkr.am/hy/declaration/10/>):

⁷ Տես «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին արձանագրություն»: Ընդունված է 1991 թ. դեկտեմբերի 10-ին (<http://www.nkr.am/hy/referendum/42/>):

⁸ Տես «Алма-Атинская Декларация». Алма-Ата, 21 декабря 1991 г. (<http://cis.minsk.by/page.php?id=178>):

⁹ Տես «Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France». OSCE Secretariat. Communication and Media Relations Section. Vienna, 16 May 2016 (<http://www.osce.org/mg/240316>):

25-ЛЕТИЕ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ: ИННОВАЦИОННЫЕ ПОДХОДЫ К СТРАТЕГИИ СДЕРЖИВАНИЯ ВОЙНЫ В КАРАБАХЕ С ЦЕЛЬЮ СОХРАНЕНИЯ И УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ*

Г. С. КОТАНДЖЯН, генерал-лейтенант, доктор политических наук (РФ), профессор (РА), приглашенный ведущий профессор НУО США, действительный избранный член Академии военных наук РФ, член Научно-экспертного совета ОДКБ, Начальник Национального исследовательского университета МО РА

РЕЗЮМЕ

В эпоху информационного насыщения средств ведения и предотвращения войн умная комбинация технологических новаций с методами политико-дипломатического воздействия на процесс подготовки боевых действий позволяет разработать концепцию сдерживания за счет эффективного информационного контроля за накоплением и перемещением военной силы, сигнализирующих о подготовке к ведению войны. Смысл подобной стратегии состоит в возможности посредничающих в миротворчестве сторон снабжать конфликтующие стороны реальной информацией об угрожающих миру приготовлениях обоих противников или одного из них с тем, чтобы склонить их к отказу от приготовлений к войне и ориентации на физическое уничтожение противника.

В этом смысле исключительно важно исходить из стратегической политико-безопасностной оценки динамики Карабахского вооруженного конфликта с пониманием того, что при сложившейся тенденции эскала-

* Полный текст интервью на русском см. (<http://razmavaraget.wordpress.com>).

ции дисбаланса уровня вооружений между РА-НКР и Аз.Р рассчитывать на предотвращение возобновления боевых действий традиционным военным сдерживанием нереалистично. Требуют научного осмысления инновационные подходы к сотрудничеству с международным сообществом в сдерживании сторон от возобновления войны в Карабахе с привлечением высокотехнологических средств международного сообщества к зондажу опасных маневров военной силы, сигнализирующих о приготовлениях к развернутым боевым действиям. В НИУО МО РА разработана методология привлечения Сопредседателей Минской группы ОБСЕ – в лице постоянных членов Совета Безопасности России, США и Франции – к зондажу опасной динамики силы в зоне Карабахского конфликта с использованием средств наблюдения из наднационального космического пространства с применением орбитальных средств дистанционного наблюдения.

При использовании посредничающими державами-миротворцами находящихся в их распоряжении соответствующих технологий даже скромные военные бюджеты конфликтующих сторон могут оказаться «достаточными» для поддержания их обороноспособности – без угрожающей миру гонки наступательных вооружений.

Данный инновационный подход к сдерживанию, основанному на консультациях по использованию средств зондирования из космического пространства, и к предотвращению возобновления в Карабахе военных действий путем политико-дипломатического сдерживания может стать эффективным инструментом для применения в происходящих в сопредельном нестабильном регионе конфликтах, подобных Карабахскому, с катастрофическим вовлечением тяжеловесных акторов в целях предотвращения их перерастания в широкомасштабные военные действия.

THE 25TH ANNIVERSARY OF ARMENIA'S INDEPENDENCE: INNOVATIVE APPROACHES TO THE STRATEGY FOR CONTAINING WAR IN KARABAKH AIMED AT THE MAINTENANCE AND SUSTAINABLE DEVELOPMENT OF THE ARMENIAN STATEHOOD*

*H. S. KOTANJIAN, LTG, Doctor of Political Sciences (Russian Federation),
Professor (Republic of Armenia), Distinguished Visiting Member of Faculty
at the U.S. NDU; Full Elected Member of the Academy of Military Sciences,
the Russian Federation; Member of the CSTO Academic-Expert Council;
Head of the National Defense Research University, MoD, Armenia*

SUMMARY

In the era of information-saturated means of war making and its prevention, the smart combination of technological innovations along with the methods of political-diplomatic influence on the preparation for combat operations pave

* The full version of the interview in English see (<http://razmavaraget.wordpress.com>).

the way for developing a concept of containment through effective information control over military forces' accumulation and movement signaling war preparations. Such a strategy enables mediating parties-peacemakers to provide the conflicting sides with real information about the peace-threatening preparations of either opponents in order to incline them to abandon the preparations for war and the orientation towards the physical destruction of the enemy.

In this sense, it is essential to proceed from the strategic political and security assessment of the dynamics of the Karabakh armed conflict with the understanding that under the current trend towards the escalation of the arms imbalance between Armenia and the NKR on the one side, and Azerbaijan – on the other, it is unrealistic to rely on the prevention of the resumption of hostilities by traditional military deterrence. The innovative approaches to cooperation with the international community requires academic comprehension – aimed at preventing the sides from resuming the war in Karabakh with the utilization of high-tech tools of the international community for the sensing of dangerous maneuvers of military forces signaling the preparations for expanded military operations. This is about the methodology we developed in the National Defense Research University of Armenia for attracting the OSCE Minsk Group Co-Chair States, the Permanent Members of the UN Security Council – France, Russia, and the US – to sense dangerous dynamics of force in the Karabakh conflict zone through the sighting aid from the supranational outer space with the employment of orbital facilities of remote sensing.

If the mediating powers-peacekeepers used the relevant technologies in their possession, even the modest military budgets of conflicting parties could be “sufficient” to maintain their defense capabilities – without an arms race threatening the peace.

This innovative approach to deterrence with the consulted use of the outer space sensing toolkit and to prevention of hostilities' resumption in Karabakh through political-diplomatic containment could become an effective tool to be used in Karabakh-kind conflicts of the contiguous volatile region with the catastrophic involvement of the heavyweight actors, aimed at preventing their escalation towards large-scale hostilities.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՑԱԾ ԱՐԴԻԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ
ԼԻԻՐԱԿ ԱՆԴԱՄ

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի խորհրդական-վերլուծաբան

1. ՀԱՅԵՐԸ՝ ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՂԾ ԱԶԳ

Աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը՝ հայ ժողովուրդը, ունի իրեն բնորոշ մի շարք բարձրարժեք որակներ և յուրահատկություններ: **Նա պետութենաստեղծ ազգ է** և այդ առումով տարբերվում է շատ ու շատ ժողովուրդներից: Դարերի ընթացքում նա բազմիցս ստեղծել է իր պետությունը, կորցրել, նորից ստեղծել և նորից կորցրել: Բայց անկախ պետականություն ունենալու հայերի ծգտումը մնացել է անկտրում: Եթե թվարկելու լինենք հայոց պետություններն ըստ դինաստիաների, ապա կստացվի հետևյալ պատկերը՝ Երվանդունիների (մ. թ. ա. 570–մ. թ. ա. 201 թթ.), Արտաշիսյանների (մ. թ. ա. 189–մ. թ. 1 թթ.), Արշակունիների (66–428 թթ.), Բագրատունիների թագավորություններ (885–1045 թթ.): Հայերը կայսրություն ստեղծած սակավաթիվ ժողովուրդներից են. մ.թ.ա. 1-ին դարում նրա կայսրը՝ Տիգրան Մեծը, կրել է «Արքայից արքա» տիտղոսը:



Պետության գաղափարը հայության գեներում է, և ու՛ր էլ նա գնա, ո՛ր երկրում էլ հաստատվի, պետության գաղափարն իր հետ է տանում: Դրա վառ օրինակը Կիլիկիան է, որտեղ Մեծ Հայքից կենտրոնացած հայությունը 1080 թ. ստեղծեց իր նոր պետությունը՝ Կիլիկիայի Հայկական Թագավորությունը, որը գոյություն ունեցավ շուրջ 300 տարի՝ 1080–1375 թթ.: Հաստատվելով օտար երկրներում՝ հայկական հավաքականությունը որպես կանոն ակտիվ դերակատարում է ունեցել օտար ժողովուրդների պետական կառավարման համակարգում, այդ պետությունների ամրապնդման ու կայացման գործում, ինչը վկայում են բազմաթիվ օրինակներ:

867–1057 թթ. Բյուզանդական կայսրությունում իշխում էր Հայկական դինաստիան. կայսրությունը կառավարել է հայազգի կայսրերի տոհմը, որի հիմնադիրը եղել է Բարսեղ Առաջինը: Սակայն հայերի ղեկավար դերակատարումը չի սահմանափակվել միայն Բյուզանդիայով: Հայկական դինաստիան բախտորոշ դեր է ունեցել Ռուսիայի ճակատագրում՝ կապված 988 թ. քրիստոնեության ընդունման հետ: Բյուզանդիայի հայազգի համակայսրերի՝ Բարսեղ Երկրորդ Բուլղարասպան և Կոնստանտին եղբայրների քույր Աննան համաձայնվում է ամուսնանալ Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավո-

վիչի հետ՝ ի դիմաց քրիստոնեության նրա ընդունման: Իշխանն ընդունում է պայմանը: «Վերադառնալով մայրաքաղաք (Կիև-Ն.Հ.)՝ Վլադիմիրը հրամայում է ոչնչացնել կուռքերը, իսկ ժողովուրդը մկրտվեց Դնեպրում»¹: Ռուսիան ընդունում է ուղղափառ քրիստոնեություն, որը ռուսական պետության հիմքերի հիմքն է: Մյուս կողմից՝ եթե մի պահ ենթադրենք, որ Ռուսիան ընդուներ իսլամ, ապա դժվար է պատկերացնել, թե ինչպես կընթանար համաշխարհային պատմությունը: Հայոց իշխանուհի Աննան, որը դարձավ Ռուսիայի իշխանի առաջին տիկինը, բախտորոշ և դրական դերակատարում ունեցավ ոչ միայն Ռուսիայի, այլև համաշխարհային պատմության մեջ:

1074 թվականին ծանր դրության մեջ հայտնված Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆա ալ Մուլթանսիիը օգնության համար դիմում է Ակրի կառավարիչ հայազգի Բադր ալ Գամալ ալ Արմանին՝ նրան և սասունցի հայերից կազմված նրա 20 հազարանոց զորքը հրավիրելով Կահիրե՝ անհնազանդ թուրքական զվարդիականներին սանձահարելու և երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Ալ Արմանին (Հայր) շատ արագ և փայլուն կերպով կատարում է իր առաքելությունը. ջախջախում է թուրքական զորքերին և պատժում նրանց: Այնուհետև նա իր ձեռքում է կենտրոնացնում խալիֆայության կառավարման դեկր, որը նրա մահից հետո անցնում է որդուն՝ Աֆդալին, ապա՝ նրանց հայազգի հաջորդներին: Շնորհիվ նրանց հմուտ կառավարման՝ մի ամբողջ հարյուրամյակով կասեցվում է Ֆաթիմյան խալիֆայության (909–1171 թթ.) կործանումը:

Հայերը 19-րդ դարում ազդեցիկ դիրքեր են ունեցել Ցարական Ռուսաստանում, երբ Ալեքսանդր 2-րդը կայսրության ներքին գործերի նախարար նշանակեց Ռուսաստանի Պետական դումայի անդամ, հայազգի զորապետ Միքայել Լոռիս-Մելիքովին՝ նրան օժտելով բացառիկ իշխանությամբ: Նա փաստորեն դարձավ Ռուսաստանի վարչապետ դիկտատոր (1880–1881 թթ.), կայսրության երկրորդ դեմքը՝ կայսրից հետո: Լոռիս-Մելիքովը կայսրին ներկայացրեց վարչական և տնտեսական վերափոխումների մի ընդարձակ ծրագիր, ըստ որի՝ Ցարական Ռուսաստանը ինքնակալ միապետությունից վերածվում էր Սահմանադրական միապետության: Կայսրը հավանություն տվեց Լոռիս-Մելիքովի այդ ծրագրին և նույնիսկ 1881 թ. մարտի 13-ին ստորագրեց համապատասխան հրամանագիր, այսինքն՝ միայն մի քայլ էր մնացել Ցարական Ռուսաստանը սահմանադրական միապետության վերածելու համար, սակայն այդ նույն օրը՝ 1881 թ. մարտի 13-ին, Ալեքսանդր 2-րդը դարձավ ահաբեկչության զոհ²: Նրան հաջորդած Ալեքսանդր 3-րդը չեղյալ հայտարարեց բարեփոխումների վերաբերյալ իր հոր բոլոր հրամանները, իսկ զորապետ Լոռիս-Մելիքովը հեռացավ քաղաքական ասպարեզից:

¹ Сту «Принятие христианства на Руси» (<http://www.grandars.ru/shkola/istoriya-rossii/kreshchenie-rusi.html>); նաև՝ *Н. М. Карамзин. История государства Российского*, т. I (<http://www.kulichki.com/inkwell/text/special/history/karamzin/karahist.htm>):

² Сту «Միքայել Լոռիս-Մելիքով» (https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%AB%D6%84%D5%A1%D5%B5%D5%A5%D5%AC_%D4%BC%D5%B8%D5%BC%D5%AB%D5%BD-%D5%84%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84%D5%B8%D5%BE):

Հայերը նշանակալի դեր են խաղացել նաև շահական Իրանի պետական ու քաղաքական կյանքում (Մալքոն խան, Եփրեմ խան՝ Իրանի դիկտատոր) և Օսմանյան կայսրության պետական համակարգում (արտաքին գործերի նախարար Գաբրիել Նորատունկյան), ֆինանսական համակարգում և այլ ոլորտներում:

Բուն Հայաստանում հայոց պետականությունը վերականգնվել է 1918 թ. մայիսի 28-ին, երբ Արևելյան Հայաստանում հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը, կամ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որը 1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդայնացվեց, իսկ 1922 թ. դեկտեմբերի 30-ին մտավ նորաստեղծ Խորհրդային Միության կազմի մեջ, ինչով սկսվեց Հայաստանի Երկրորդ Հանրապետության շրջանը:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ.

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԼԻԻՐԱԿ ԱՆՂԱՄՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1991 թ. սեպտեմբերի 21-ը հայերի պատմության մեջ եղավ շրջադարձային: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ազատ, անկախ և ինքնիշխան պետություն: Դա կապված էր Խորհրդային Միության փլուզման հետ, որի փլատակների վրա քաղաքական ասպարեզ իջան 15 անկախ պետություններ, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը: Անկախ Հայաստանի առաջին Նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը (1991–1998 թթ.), երկրորդ Նախագահ՝ Ռոբերտ Քոչարյանը (1998–2008 թթ.), իսկ 2008 թ. ապրիլից մինչև օրս այդ բարձր պաշտոնում Սերժ Սարգսյանն է:

Այդ շրջադարձային պահից անցել է ընդամենը քառորդ դար: Դա համարվում է անցումային շրջան, որի հիմնական խնդիրներն են անկախ, արդիական ազգային պետության կայանալը և միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալն ու նրանում իր արժանի տեղ գրավելը:

Տարբեր պատմական դարաշրջաններում վերոնշյալ առանցքային խնդիրները լուծվել են տարբեր ուղիներով: 20-րդ դարը և 21-րդ դարի սկիզբը միջազգային կառույցների դարաշրջան է. ստեղծվել է այն կառույցների խիտ ցանցը, առանց որոնց անդամակցելու անհնար է արդի միջազգային հարաբերություններում միայնակ, մեկուսի պահպանել անկախություն և դառնալ միջազգային հանրության շատ թե քիչ ազդեցիկ անդամ: Այդ ցանցում առաջնայինն է Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), որին այսօր անդամակցում են աշխարհի 193 պետություն:

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ դարձավ 1992 թ. մարտի 2-ին³: ՄԱԿ-ին անդամակցելն առաջին և լուրջ քայլն էր Հայաստանի՝ միջազգային հանրության անդամ դառնալու ճանապարհին: ՄԱԿ-ի անդամակցությանը հաջորդեց Հայաստանի միջազգային ճանաչման գործընթացը: Դրանում իր կարևոր դերը խաղաց Հայաստանի ճանաչումը ՄԱԿ-ի Ան-

³ Տես «Դիվանագիտական բանբեր»: Հայաստանի արտաքին գործերի նախարարություն: Վենետիկ, 1993, էջ 8:

վտանգության խորհրդի հինգ մշտական անդամների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից: Շուտով դրանց միացան այնպիսի ազդեցիկ երկրներ, ինչպիսիք են Գերմանիան, Իտալիան, Հնդկաստանը, Ճապոնիան, Իրանը, Կանադան և Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի բազմաթիվ այլ պետություններ: Ճանաչմանը հաջորդեց դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի հետ: Այսօր ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ ունի մոտ 160 պետության հետ, ինչը Հայաստանի կարևորության և բարձր հեղինակության վկայությունն է: Եվ եթե դրան ավելացնենք, որ Հայաստանը դեսպանությունների մակարդակով դիվանագիտական ներկայացուցչություններ ունի աշխարհի մոտ 60 պետությունում, իսկ երեսուցից ավելի պետություններ դեսպանություններ են բացել Երևանում⁴, ապա պատկերն ավելի ամբողջական և տպավորիչ կդառնա: Լիտվան առաջինը հաստատեց Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ (1991 թ. նոյեմբերի 21-ին)⁵:

Քննարկվող հարցի տեսանկյունից կանոն է դիտարկել նաև Հայաստանի հարաբերությունները նրա անմիջական հարևանների՝ Թուրքիայի, Իրանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ: Վրաստանն առաջին երկիրն է աշխարհում, որը ճանաչել է Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ 1991 թ. հունիսի 27-ին⁶: Թուրքիան Հայաստանի անկախությունը ճանաչել է 1991 թ. դեկտեմբերի 24-ին⁷, Իրանը՝ 1991 թ. դեկտեմբերի 25-ին⁸, իսկ Ադրբեջանը մինչև օրս չի ճանաչել: Ինչ վերաբերում է դիվանագիտական հարաբերություններին, ապա Հայաստանի հետ նման հարաբերություններ դեսպանությունների մակարդակով հաստատել են միայն Վրաստանը և Իրանը, իսկ Թուրքիան և Ադրբեջանը՝ ոչ: Դեռ ավելին. այս վերջին երկուսը փակել են Հայաստանի հետ իրենց սահմանները և նրան ենթարկել հաղորդակցային շրջափակման՝ Հայաստանին ներկայացնելով երկու նախապայման: Առաջին. հրաժարվել Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջից, և երկրորդ. ԼՂՀ-ն վերադարձնել Ադրբեջանի ենթակայությանը: Հայաստանը մերժում է երկու նախապայմաններն էլ և համարում, որ հարևան երկրների միջև պետք է հաստատվեն նորմալ հարաբերություններ, և վիճելի հարցերը պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով՝ խարսխված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների վրա, ներառյալ՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքը⁹:

Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծվեց մի նոր միջազգային կառույց՝ Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ), որի կազմի

⁴ Տես նույն տեղում, էջ 4–5, նաև՝ «Հայաստանն ունի 157 երկրների հետ դիվանագիտական հարաբերություններ»: «Առաջին լրատվական», 03.03.2013 (www.1in.am/165161/ html):

⁵ Տես «Դիվանագիտական բանբեր», 1993, էջ 5:

⁶ Տես նույն տեղում, էջ 4:

⁷ Տես «Երկկողմ հարաբերություններ. Թուրքիա» (<http://mfa.am/hy/country-by-country/ tr/>):

⁸ Տես «Երկկողմ հարաբերություններ. Իրանի Իսլամական Հանրապետություն» (<http://mfa.am/hy/country-by-country/ir/>):

⁹ Տես *Nikolay Hovhannisyan. The Foreign Policy of Armenia. Yerevan, 1998:*

մեջ ընդգրկվեցին նախկին խորհրդային հանրապետություններից ինը. այդ թվում և Հայաստանը: Դա կարևոր էր ԽՍՀՄ վերացումից հետո ծանր դրության մեջ հայտնված բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների համար:

Հայաստանն անդամակցում է նաև մի շարք եվրոպական կառույցների, այդ թվում՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը, որի մեջ մտնում են բոլոր եվրոպական երկրները, ԱՄՆ-ը և Կանադան, թվով 55 պետություն¹⁰, Եվրոպայի խորհրդին (*Council of Europe*), որի կազմի մեջ մտնում են 47 պետություն¹¹: Հայաստանը 2004 թվականից մասնակցում է Եվրամիության «Եվրոպական հարևանության քաղաքականությանը», որը նախապայմաններ է ստեղծում Եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման համար:

Հայաստանը անդամ է նաև մի շարք այլ միջազգային կազմակերպությունների, ինչպես՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Արժույթի միջազգային հիմնադրամը. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը և այլն:

2015 թ. հունվարի 1-ին Հայաստանը մտավ Եվրասիական տնտեսական միության մեջ և Ռուսաստանի, Բելառուսի ու Ղազախստանի հետ դարձավ ԵՏՄ լիիրավ անդամ: Դա ինտեգրման ուղղությամբ համարձակ քայլ էր, որը միանշանակ չընկալվեց Հայաստանի և միջազգային, հատկապես՝ եվրոպական, հանրության կողմից: Սակայն ԵՏՄ-ին միանալը չի նշանակում կապերը խզել Եվրամիության հետ և կամ նրան մեջքով շրջվել: Նրանց միջև բազմապիսի շփումները շարունակվում են: Եվ ինչպես հայտարարեց ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանը, «Հաջողությամբ ավարտվել են ԵՄ–Հայաստան նոր շրջանակային համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների չորս փուլերը: ...Հույս ունենք մոտ ապագայում ավարտել բանակցությունները»¹²: Հայաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական տվյալների համաձայն՝ Հայաստանը տարբեր երկրների հետ ստորագրել է մոտ 2000 պայմանագիր և հուշագիր:

Հայաստանը՝ որպես պետություն, առաջին օրվանից հայտարարել է եվրոպական արժեքներին իր հավատարմության մասին, այսինքն՝ այնպիսի արժեքների, ինչպիսիք են ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, քաղաքացիական հասարակությունը և մարդու իրավունքների հարգումը:

Հայաստանի հեղինակության մեծացմանը և միջազգային դիրքերի ամրապնդմանը նպաստեց նաև այն, որ միջազգային հանրությունը ճանաչեց

¹⁰ Տես Հ. Քղթանջյան, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում: «Ռազմական անվտանգային հետազոտություններ», հ. 1: Ե., 2014, էջ 59:

¹¹ Տես «47 Member States». «Council of Europe» (<http://www.coe.int/en/web/portal/47-members-states>):

¹² Տես «Россия должна предотвратить большую войну в Закавказье». «Новое Время», 6 сентября 2016 (<http://www.nv.am/politika/52970-2016-09-06-06-03-14>):

Հայաստանին՝ որպես քրիստոնեությունը առաջինը պետական կրոն հռչակած պետության, մի իրադարձություն, որի 1700-ամյակը մեծ շուքով նշվեց 2001 թ.: Դա ընդունեցին բոլոր քրիստոնյա հարանվանությունները: Մեծ նշանակություն ունեցավ նաև 2016 թ. հունիսին Հռոմի Ֆրանցիսկոս 1-ին պապի կատարած այցելությունը Հայաստան, որը նա բնութագրեց որպես «ուխտագնացություն քրիստոնեությունը աշխարհում առաջինը պետական կրոն հռչակած երկիր՝ Հայաստան»¹³:

Հայաստանը, իրացնելով անկախ և ինքնիշխան պետության իր կարգավիճակը, կամքը և հաստատակամությունը, դարձել է արդի միջազգային հանրության լիիրավ, լեգիտիմ և գործունյա անդամ: Դա Հայաստանի՝ արդիական պետություն դառնալու ամենակարևոր հենասյուներից մեկն է:

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ Է, ԻՍԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՄԵՆԱՄԱՐՏՈՒՆԱԿ ԲԱՆԱԿԸ

Հայկական անկախ պետության գոյության առաջին օրվանից նրա ամենակարևոր խնդիրներից մեկը եղավ և շարունակում է մնալ Հայաստանի ու նրա բնակչության անվտանգության ապահովումը, նրա քաղաքական և տնտեսական զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, հայերի նկատմամբ ամեն տեսակի ցեղասպանատիպ սպառնալիքների կանխումը՝ նշանաբան ունենալով «Այլևս երբե՛ք» բանաձևը: Միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալը այդ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ձեռնարկած առաջին քայլն էր, սակայն՝ ոչ բավարար: Անվտանգությունը և հողը պաշտպանում են զենքով:

Հայաստանի անկախության հռչակումից չորս ամիս հետո՝ 1992 թ. հունվարի 28-ին, ստեղծվեց Հայկական բանակը, որը շատ չանցած մեծ փորձության ենթարկվեց, երբ Ադրբեջանը պատերազմ սանձազերծեց իր անկախությունը հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Ոստիը ծանր պարտություն կրեց, և 1994 թ. մայիսի 12-ին Հայաստանը, ԼՂՀ-ն և Ադրբեջանը ստորագրեցին հրադադարի պայմանագիր: Ադրբեջանի պարտությունը և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միացյալ զորքերի փառահեղ հաղթանակը հաշս միջազգային հանրության բարձրացրեցին Հայաստանի հեղինակությունը՝ որպես կարևոր տարածաշրջանային գործոնի: Դա նաև դաս եղավ ադրբեջանական ագրեսորներին, որոնք ավելի քան քսան տարի չէին համարձակվում ձեռնարկել նոր ռազմական գործողություններ ընդդեմ հայության:

Հայաստան պետության ղեկավարությունը ուշադրության կենտրոնում է պահում Հայաստանի Ջինված ուժերի կատարելագործման, արդիական զենքով սպառազինման, բարձրակարգ և գրագետ հրամանատարական կազմի պատրաստման հարցերը:

Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության մեջ մեծ տեղ է հատկացվում ռազմական համագործակցությանը տարբեր պետությունների, առաջին հերթին՝ Ռուսաստանի հետ: 1995 թ. մարտի 16-ին

¹³ Տես Ն. Հովհաննիսյան, Երեք օր, որ ցնցեց աշխարհը: «Ազգ», 2016 թ. հուլիսի 1:

նրանց միջև ստորագրվեց պայմանագիր, ըստ որի՝ Հայաստանը Ռուսաստանին թույլ տվեց իր տարածքում ստեղծել զորակայան¹⁴: Երկու տարի անց՝ 1997 թ. օգոստոսի 29-ին, ստորագրվեց նաև «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիր»¹⁵: Հայաստանը և Ռուսաստանը դարձան ռազմավարական դաշնակիցներ: Եթե դա Հայաստանին պետք է իր անվտանգությունն ամրապնդելու տեսակետից, ապա Ռուսաստանը ձեռք բերեց Անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանում է հուսալի գործընկեր և ամրապնդեց իր դիրքերը: Հայաստանը դառնում է ռազմական գործոն, ինչն ավելի է կարևորվում անդամակցությամբ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությանը՝ ՀԱՊԿ-ին, որի հետ համատեղ պարբերաբար կազմակերպվում են զորավարություններ, այդ թվում և Հայաստանի տարածքում:

Հայաստանը ռազմական համագործակցություն է հաստատել նաև Արևմտյան պետությունների հետ, ինչպես Հունաստանը, ԱՄՆ-ը և այլն: Նա համագործակցում է և ՆԱՏՕ-ի հետ, ինչի սկիզբը դրվեց 1992 թ., երբ Հայաստանն անդամակցեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին (1997 թ. վերանվանվել է Եվրաստլանտյան գործընկերության խորհուրդ): Հաջորդ քայլը կատարվեց 1994 թ.՝ Հայաստանը միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Այդ ծրագրի շրջանակներում հայկական Զինված ուժերը մասնակցում են ՆԱՏՕ-ի զորավարություններին, որոնք անցկացվում են ոչ միայն եվրոպական երկրներում, այլև Հայաստանում: ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության շրջանակները տարեցտարի ավելի են ընդլայնվում: 2004 թ. Հայաստանը ՆԱՏՕ-ում ստեղծեց դիվանագիտական ներկայացուցչություն՝ դեսպանի մակարդակով¹⁶: 2004-2005 թթ. Հայաստանը միացավ ՆԱՏՕ-ի «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին»: Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ Հայաստանի նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանը 1996 թ. և Ռոբերտ Քոչարյանը 2005 թ., իսկ հետագայում Սերժ Սարգսյանը այցելել են ՆԱՏՕ-ի շտաբ-կայան, անվտանգային հարցերով բանակցություններ վարել ՆԱՏՕ-ի բարձրագույն ղեկավարության հետ: Այդ ամենը, մի կողմից, ծառայում է Հայաստանի անվտանգության ամրապնդմանը և, մյուս կողմից՝ վկայում Հայաստանի ռազմական գործոն լինելու փաստը: Հայկական գործոնի նշանակությունն ավելի շեշտվեց, երբ հայկական զորախմբերն սկսեցին մասնակցել ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերի առաքելություններին Կոսովոյում (2004 թ.), Իրաքում (2005 թ.), Աֆղանստանում (2010 թ.), Լիբանանում (2014 թ.)՝ փայլուն կերպով դրսևորելով իրենց և արժանանալով ՆԱՏՕ-ի հրամանատարության հիացմունքին:

Այդուհանդերձ, Հայաստանը երբեք չի դրել ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցը՝ ի տարբերություն հարևան Վրաստանից և Ադրբեյջանից:

¹⁴ Տես «The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia». Yerevan, July-September, 1997, P. 20:

¹⁵ Տես նույն տեղում, էջ 19-20:

¹⁶ Տես Հ. Քոթանջյան, Նշ. աշխ., էջ 59:

Վերոշարադրայից հստակ կերպով երևում է, որ Հայաստանը որդեգրել է երկու կողմերի՝ Արևելքի և Արևմուտքի, այսինքն՝ Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի անդամ, պետությունների միջև հավասարակշռված քաղաքականություն, որն ստացավ «կոմպլեմենտար, կամ փոխլրացման, քաղաքականություն» անվանումը, թեև միշտ չէ, որ ճիշտ է հասկացվել թե՛ Հայաստանում, թե՛ Ռուսաստանում: Այնուամենայնիվ, համարում ենք, որ դա ճիշտ քաղաքականություն է, որի շնորհիվ ընդլայնվեց Հայաստանի, ԼՂՀ և ամբողջ հայության անվտանգության դաշտը:

Ինչ վերաբերում է տարածաշրջանում Հայկական բանակի՝ ամենամարտունակ բանակը լինելու տեսակետին, ապա այն շատ լուրջ փորձության ենթարկվեց 2016 թ. ապրիլի 2-ին սկսված Չորսօրյա պատերազմի ժամանակ, որը Ադրբեջանը սանձազերծեց ԼՂՀ-ի դեմ՝ նպատակ ունենալով զենքով հոգուտ իրեն լուծել Ղարաբաղյան հիմնախնդիրը: Ադրբեջանական տխրահեջակ «բլիցկրիգը» (ակնթարթային պատերազմը) խայտառակ կերպով տապալվեց և փշրվեց՝ դեմ առնելով հայկական անսասան ժայռին: Չորսօրյա պատերազմը կրկին հաստատեց տարածաշրջանում Հայկական բանակի՝ ամենամարտունակը լինելու իրողությունը: Դա ոչ միայն հայերի կարծիքն է, այլև օտարերկրյա պրոֆեսիոնալ ռազմական մասնագետների տեսակետը¹⁷:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ բերված փաստերը՝ Հայաստանի ռազմական համագործակցությունը արևելյան և արևմտյան պետությունների հետ, հայ-ադրբեջանական երկու պատերազմներում հայկական կողմի տարած հաղթանակները, գալիս են հաստատելու, որ Հայաստանը՝ որպես պետություն, իրոք, ռազմական գործոն է, որը չի կարելի անտեսել:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Այսօր շրջանառության մեջ է «Եռյակի» վերաբերյալ բանաձևը, որի բաղադրիչներն են Հայաստանի Հանրապետությունը, Արցախը և Հայոց սփյուռքը: Սակայն նրանց միջև կարևորության և դերակատարման առումով չի կարելի դնել հավասարության նշան: Գլխավոր դերակատարը, հիմքերի հիմքը Հայաստանն է, որին պատմականորեն վիճակված է առաջատարի դերակատարում: Նա Ամենայն Հայոց Պետությունն է: Գտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետություն» անվանակոչման հետ և նրան զուգահեռ կարելի է և պետք է օգտագործել «Ամենայն Հայոց Պետություն» անվանակոչումը, մանավանդ, որ հայ իրականության մեջ այդ տերմինը տարբեր կապակցություններով ընդունված է և օգտագործվում է, ինչպես «Ամենայն Հայոց Կաթողիկոս», «Ամենայն Հայոց Բանաստեղծ» և այլն: Առանց Հայաստանի՝ որպես պետության, միջազգային և ռազմական գործոնի գոյության, չէր լինի ԼՂՀ-ն, չէին լինի այն պատմական նվաճումները և հաղթանակները, որ ձեռք են բերվել վերջին քառորդ դարում: Չմոռանանք նաև, որ Ղարաբաղյան շարժումը, որն այնուհետև վերածվեց համահայկական շարժման, սկսվել և ընթացել է «Միացում» պահանջի ներքո և դեռևս ուժի մեջ է Հայկական ԽՍՀ Գերագույն

¹⁷ Տես Ն. Հովհաննիսյան, Ղարաբաղյան քառօրյա պատերազմը. դասեր, հետևություններ, հեռանկարներ: «Ազգ», 2016 թ. ապրիլի 15:

խորհրդի և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշում-հռչակագիրը՝ նրանց վերամիավորման մասին: Եվ վերջիվերջո, վաղ թե ուշ, դա տեղի է ունենալու:

Իսկ մինչ այդ Հայաստանը՝ որպես Ամենայն Հայոց Պետություն, պետք է շարունակի ԼՂՀ պաշտպանությունը և նրան օգնելու իր ազգային-պատմական առաքելությունը:

Հայոց պետության կայացումը, նրա ռազմական գործոն և միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալը վճռական նշանակություն ունեցան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Եթե մինչև Հայաստանի անկախացումը ցեղասպանությունը ճանաչել էին ընդամենը երեք պետություն՝ ՌՒրուգվայը, Կիպրոսը և Հայաստանը, ապա անկախացումից հետո սկսվեց մի գործընթաց, որը կարելի է անվանել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հաղթարշավ: Անկախության շրջանում Հայոց ցեղասպանությունը ճանաչել են 28 պետություն, իսկ ընդամենը՝ 30 պետություն՝ Եվրոպայում, Հյուսիսային ու Հարավային Ամերիկայում և Ասիայում, Ավստրալիայի, Բրազիլիայի, Կանադայի, Իսպանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Շվեյցարիայի կազմի մեջ մտնող 16 ինքնավար կազմավորումներ, ԱՄՆ-ի 50 նահանգներից՝ 44-ը:

Ինչ վերաբերում է երրորդ բաղադրիչին՝ Հայոց սփյուռքին, ապա դա «Եռյակի» ամենախոցելի հատվածն է: Դժվարությունն այն է, որ հստակ չէ, թե ում հետ պետք է համագործակցի Հայաստանը, քանի որ համասփյուռքյան կառույցներ գոյություն չունեն և չկա կոնկրետություն, թե ով ինչ է ուզում:

Հայտնի է, որ աշխարհասփյուռ հայությունը թվաքանակով ավելի շատ է, քան Հայաստանի և Արցախի հայությունը միասին վերցրած, և նա ունի զգալի ներուժ, որը լրիվ չի օգտագործվում ի շահ համայն հայության: Սակայն Ամենայն Հայոց Պետությունը պետք է շարունակի իր օգնությունը Սփյուռքին, հատկապես հայապահպանության ոլորտում, **գտնի ինտեգրման նոր և ինքնատիպ ձևեր**, որպեսզի սփյուռքահայը Հայաստանը Արցախի հետ մեկտեղ համարի իր Հայրենիքը, իր «Էրզիրը», իսկ իրեն՝ նրա քաղաքացին, բայց ո՛չ երբեք զբոսաշրջիկ, և իրեն պատասխանատու համարի հայրենյաց բոլոր հարցերի համար, հնարավորինս գործունյա մասնակցություն ունենա նրանց խնդիրների լուծման գործում:

Կարծում ենք, սխալ կլիներ ենթադրել, թե ոչինչ չի արվում: Արվում է, որոշ բնագավառներում՝ անգամ շատ բան: Այդ առումով պետք է ընդգծել այն մեծ օգնությունը, որ վերջին տարիներին Հայաստանը ցուցաբերում է Իրաքից և հատկապես Սիրիայից ներգաղթածներին, և, աններելի սխալ է նրանց փախստական կոչելը, քանի որ հայը Հայաստան վերադառնալիս, անկախ այն բանից, թե ինչպես է եկել, միևնույն է, իր պապենական տունն է գալիս: Իսկ դրանից ավելի քաղցր բան չկա:

Ի մի բերելով քննարկման արդյունքները՝ կարող ենք ասել. Հայաստանի Հանրապետությունը իր գոյության քսանհինգ տարիների ընթացքում, որը պատմական շատ կարճ ժամանակահատված է, կարողացել է լուծել առանցքային բնույթի շատ խնդիրներ: Հայաստանն այժմ արդեն կայացած արդիա-

կան պետություն է՝ իր սահմանադրությամբ, պետական կառուցվածքով, պետական, քաղաքական ու հասարակական մարմիններով, Զինված ուժերով՝ ընդունակ ապահովելու իր ժողովրդի ազգային անվտանգությունը:

Հայաստանի Հանրապետությունը, վարելով փոխլրացման քաղաքականություն, անդամակցելով տարբեր միջազգային կազմակերպությունների՝ քաղաքական, ռազմական, տնտեսական, ֆինանսական և այլ բնույթի կառույցների, դարձել է միջազգային հանրության լիիրավ անդամ և իր արժանի տեղը գրավել արդի, վերին աստիճանի բարդ և վտանգներով լի աշխարհում: Հայաստանը՝ որպես կայացած պետություն, միջազգային և տարածաշրջանային ռազմական կարևոր գործոն, վայելելով միջազգային հանրության ճնշող մեծամասնության համակրանքն ու աջակցությունը, համայն հայության համար դարձել է հուսալի վահան, հաջողությամբ կիրառում է «Այլևս երբե՛ք» տեսադրույթը և միանգամայն արժանի է «Համայն Հայության Պետություն» կոչմանը: Նա վստահությամբ է նայում ապագային:

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ – СОСТОЯВШЕЕСЯ СОВРЕМЕННОЕ
ГОСУДАРСТВО И ПОЛНОПРАВНЫЙ ЧЛЕН
МЕЖДУНАРОДНОГО СООБЩЕСТВА

*Н. О. ОГАНЕСЯН, член-корреспондент НАН РА, доктор исторических наук,
профессор, заслуженный деятель науки Армении, советник Начальника
НИУО МО РА – аналитик*

РЕЗЮМЕ

Армяне являются одним из древнейших народов, отличительной чертой которого является создание государственности. Причем это проявляется не только на национальном уровне. Они сыграли существенную роль в укреплении государственности других народов. Так, в Византийской империи в 867–1057 гг. правила армянская (или македонская) династия, сыгравшая ключевую роль и в судьбе России: в 988 г. великий князь Владимир Святославович, чтобы жениться на сестре византийских соимператоров-армян Василия Второго и Константина, Анне, принял христианство в качестве государственной религии.

В 1074 г. династия Фатимидов в Египте сохранила власть благодаря помощи 20-тысячного армянского войска под предводительством армянина Бадра аль-Джамали, благодаря которому Фатимидский халифат (909–1171 гг.) восстановил свое могущество и просуществовал еще целый век.

В 1880 г. император Александр II министром внутренних дел с расширенными полномочиями назначил известного военачальника-армянина Михаила Лорис-Меликова, ставшего вторым лицом империи и подготовившего проект либерально-демократических реформ.

Армяне играли значительную роль также в государственной и политической жизни Ирана (Мальком-хан, Ефрем-хан), Османской империи (министр иностранных дел Габриэл Норатункян) и других государств.

21 сентября 1991 г. на политической карте мира появилась Третья армянская республика. Республика Армения состоялась как суверенное государство, как полноценный член международного сообщества, а также – благодаря победе в азербайджано-армянской войне – как военный фактор в регионе.

Республика Армения, доминируя в Троиединстве РА–Арцах–Дiaspora, фактически является «Государством Всех Армян».

THE REPUBLIC OF ARMENIA: A SUCCESSFUL MODERN STATE AND FULL MEMBER OF THE INTERNATIONAL COMMUNITY

*N. H. HOVHANNISYAN, Corresponding Member of the NAS RA,
Doctor of History, Professor, Honored Scientist of Science of Armenia,
Adviser to the Head of the NDRU, MoD, RA–Research Fellow*

SUMMARY

Armenians are one of the most ancient peoples, the hallmark of which is the creation of statehood. And this is evident not only at the national level. They played a significant role in strengthening the statehood of other nations. So, in 867-1057, the Armenian (or Macedonian) dynasty ruled in the Byzantine Empire, which played a key role in the fate of Russia: in 988, the Grand Prince Vladimir Svyatoslavovich to marry the sister of the Byzantine co-emperors Armenian Basil II and Constantine, Anna, adopted Christianity as a state religion.

In 1074, the Fatimid dynasty in Egypt retained power with the help of the 20.000 Armenian troops led by the Armenian Badr al-Gamali, thanks to which the Fatimid Caliphate (909-1171) restored its power and lasted a whole more century.

In 1880, the Emperor Alexander II appointed the interior minister with extended powers the famous Armenian commander Mikhail Loris-Melikov, who became the second person in the empire and prepared the project of liberal-democratic reforms.

Armenians played a significant role also in the public and political life of Iran (Malcom Khan, Ephraim Khan), the Ottoman Empire (Foreign Minister Gabriel Noratunkyan) and other countries.

On September 21 of 1991, the Third Armenian Republic appeared on the political map of the world. The Republic of Armenia established itself as a sovereign state and a full member of the international community, as well as, thanks to the victory in the Azerbaijani-Armenian war, as a military factor in the region.

The Republic of Armenia, dominating in the Trinity Armenia–Artsakh–Diaspora, is actually the “State of all Armenians”.

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

*Ա. Բ. ԶԱՔԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ Ազգային ժողովի Արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի նախագահ*

Հայաստանի Հանրապետության անկախության 25 տարիներին նրա արտաքին քաղաքականությունը նպատակաուղղված է եղել համագործակցությամբ ու ներգրավվածությամբ արտաքին անվտանգության երաշխավորմանը, տնտեսական, ներքին քաղաքական ու պետութենաշինական, ազգապահպանական և հասարակության ու պետության կենսագործունեության այլ ոլորտների զարգացման համար բարենպաստ արտաքին պայմանների ապահովմանը: Ըստ այդմ Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքականության մեջ գերազանցապես առաջնորդվել է հարևան պետությունների հետ հարաբերությունների զարգացման ու բարելավման, միջազգային հանրությանն ինտեգրման և Հարավային Կովկասում դերակատարություն ունեցող մեծ տերությունների շահերի սթափ գնահատման ու հաշվառման սկզբունքներով:



Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանին, որը չունի ելք դեպի ծով, շրջապատում են իրենց խնդիրների լուծմամբ մտահոգված ու միմիայն իրենց շահերի առաջնդմամբ զբաղված պետություններ, որոնցից Թուրքիան և Ադրբեջանը, համապատասխանաբար՝ Հայաստանի արևմուտքում և արևելքում, մինչ օրս Հայաստանի նկատմամբ վարում են թշնամական քաղաքականություն՝ ավելի բարդացնելով ու սպառնալից դարձնելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ստեղծված իրավիճակը և տրանսպորտային ու տնտեսական շրջափակման մեջ պահելով Հայաստանը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայության պայմաններում Հայաստանի Հանրապետության առջև ծառայել են մի շարք խնդիրներ, որոնցից առաջնայինը Թուրքիայի և Ադրբեջանի թշնամական գործողություններին դիմագրավումն է: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության առջև անկախության առաջին իսկ օրերից դրված է եղել թուրք-ադրբեջանական թե՛ ռազմական, թե՛ դիվանագիտական տանդեմին ընդդիմամարտության արդյունավետ մարտավարության մշակման խնդիրը, մի մարտավարության, որը հուսալի կերպով ապահովի Հայաստանի Հանրապետության կայուն ու անվտանգ զարգացումը:

Պետք է փաստել, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, որը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման՝ իր ճակատագիրը տնօրինելու և անվտանգ ապագա կառուցելու իրավունքի իրացման հարց է, նաև կարևոր գործոն է Հայաստանի Հանրապետության անվտանգային համակարգի ապա-

հովման համար: Հայաստանի Հանրապետությունը, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) բնակչության անվտանգության երաշխավորն է¹, բանակցություններում հետամուտ է խնդրի բացառապես խաղաղ ու փոխզիջումային լուծման տարբերակին:

Տվյալ հանգամանքները, ինչպես նաև տարածաշրջանում տեղի ունեցող այլ իրադարձություններ, անշուշտ, իրենց ազդեցությունն են գործել ու գործում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական և անվտանգային համակարգի ձևավորման վրա: Ըստ այդմ, ինչպես նաև հաշվի առնելով իր զբաղեցրած բարդ աշխարհագրական դիրքի հրամայականը՝ Հայաստանի Հանրապետությունը անցած 25 տարիներին իր արտաքին քաղաքականությունը մշտապես կառուցել է փոխլրացման և ներգրավվածության համակցության հիմքի վրա՝ տարբեր, երբեմն միմյանց հակադիր շահերով առաջնորդվող ուժային կենտրոնների նկատմամբ դրսևորելով զուսպ ու հավասարակշռված վերաբերմունք: Դա ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում»²: Այս հայեցակարգային փաստաթղթում նաև սահմանվում են այն հիմնական սպառնալիքները և մարտահրավերները, որոնց հիմքի վրա են ձևավորվել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշիչները:

Այդ հիմնական սպառնալիքներից է *Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը*, որը Հայաստանի Հանրապետության ստեղծման օրից մինչ այժմ նրա ինչպես արտաքին քաղաքականության, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման առանցքային խնդիրներից է: Այդ հակամարտությունը հարևան Ադրբեջանի հետ հարաբերություններ չլինելու հիմնական պատճառն է և սպառնալիք է տարածաշրջանի կայունության համար:

1994 թվականի հրադադարից³ հետո հակամարտության կարգավորումը կատարվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելության շրջանակներում տեղի ունեցող պարբերական բանակցությունների ձևով: Հայաստանի Հանրապետությունը, հակառակ տարիներ շարունակ Ադրբեջանի գործադրած ջանքերին, նպատակահարմար չի համարում տվյալ ձևաչափի փոփոխումը՝ կարգավորման գործընթացում այլ պետությունների կամ տարբեր միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ⁴:

Հրադադարի համաձայնագրի ստորագրումից անցել է 22 տարի, և պետք է փաստել, որ մինչև օրս պահպանվում է ստատուս քվոն, ինչը մեծապես ԵԱՀԿ միջնորդական առաքելության և Հայաստանի կառուցողա-

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեսլիկ», 2007, հմ. 4, էջ 29:

² Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

³ Տես «Соглашение о прекращении огня» (<http://vn.kazimirov.ru/doc10.htm>):

⁴ Տես Հայկ Ս. *Քրթանջյան*, Ադրբեջանը լիազորագերծում է Ռուսաստանին, ԱՄՆ-ին և Ֆրանսիային ԵԱՀԿ Մինսկի խմբի կազմում: «Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում – Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս – Աֆղանստան»: Ե., 2009, էջ 126–129:

կան քաղաքականության արդյունք է: Այնուամենայնիվ, ապրիլյան Չորսօրյա պատերազմը ցույց տվեց, որ գոյություն ունեցող հարաբերական անդորրը բավականին խոցելի է, և մեծ է նոր պատերազմի վտանգը:

Անցած տարիներին հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում արժարժվել են մի շարք առաջարկություններ, որոնք, սակայն, Ադրբեջանի ղեկավարության ապակառուցողական քաղաքականության պատճառով ձախողվել և մնացել են թղթի վրա: Փոխարենը, Ադրբեջանի ղեկավարությունը ջանք ու եռանդ չի խնայում պետական մակարդակով հայատեցության հարուցման ու տարածման համար: ՀՀ, ԼՂՀ և ընդհանրապես ամբողջ հայ ժողովրդի հասցեին ամենաբարձր մակարդակով հնչեցվող սպառնալիքները չեն կարող չդիտվել որպես սպառնալիք ինչպես ՀՀ ազգային անվտանգության, այնպես էլ տարածաշրջանում կայունության համար:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈ

Անցած 25 տարիների ընթացքում ՀՀ արտաքին քաղաքականությունը մշտապես կառուցվել է փոխլրացման սկզբունքով՝ տարբեր համակարգերի հետ հավասարակշռված համագործակցության զարգացման, տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներում ներգրավված մեծ տերությունների շահերի հաշվառման, փոխշահավետության ու փոխադարձ հարգանքի հիման վրա: Դրա շնորհիվ Հայաստանը ձեռք է բերել հուսալի գործընկերոջ համբավ: Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքական հարաբերությունները կառուցում է երկկողմ և բազմակողմ ձևաչափով:

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌԴ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններ: Մեր երկիրը ռազմավարական դաշնակցային հարաբերություններ է զարգացրել և զարգացնում ՌԴ-ի հետ: *Հայ-ռուսաստանյան* դաշնակցային միջպետական հարաբերությունները ունեն խոր և ամուր պատմական հիմքեր: Հայաստանի Հանրապետությունը ամենաբարձր մակարդակով բազմիցս նշել է, որ երկու պետությունների միջև ռազմական, տնտեսական փոխգործությունը Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացման կարևոր բաղադրիչներից է: Բացի այն, որ Ռուսաստանի Դաշնությունը անվտանգային ոլորտում Հայաստանի Հանրապետության ամենակարևոր ռազմավարական դաշնակիցն է, նա նաև Հայաստանի համար մեկ առևտրային գործընկերն է երկու պետությունների միջև, և ծավալվել է սերտ ու ակտիվ փոխգործություն տնտեսական, էներգետիկ, ենթակառուցվածքային, արդյունաբերական և բազմաթիվ այլ ոլորտներում: Ընդսմին այդ համագործակցությունը զարգանում է ոչ միայն անմիջապես՝ երկկողմ, ձևաչափով, այլև այնպիսի միջազգային կազմակերպությունների շրջանակներում, ինչպիսիք են՝ Եվրասիական տնտեսական միությունը, ԱՊՀ-ն, ՀԱՊԿ-ը⁵:

⁵ Տես «Մոսկվայում կայացել են հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցությունները», 10.08.2016 (<http://www.president.am/hy/press-release/item/2016/08/10/President-Serzh-Sargsyan-meeting-with-Vladimir-Putin-10-08/>):

Թեև ՌԴ-ի և ԱՄՆ-ի շահերը մեկտեղելը սովորաբար թվում է անհնար, իսկ վերջին տարիներին նրանց միջև հարաբերությունները հույժ սրված են, սակայն Հայաստանի Հանրապետությանը հաջողվում է հավասարակշռված հարաբերություններ հաստատել այդ երկու գերտերությունների հետ: Անկախության սկզբից մինչ օրս *հայ-ամերիկյան* հարաբերությունները կարելի է բնութագրել որպես վերընթաց՝ զարգացման և խորացման ուղղվածությամբ: Ներկայումս երկու պետությունների միջև սերտ համագործակցային հարաբերություններ են քաղաքական, տնտեսական, մարդասիրական, անվտանգության և այլ ոլորտներում: Այս երկկողմ հարաբերություններում հատկապես կարևորվում է փոխգործությունը բարեփոխումների, ժողովրդավարության զարգացման և քաղաքացիական հասարակության կայացման գործում:

Պետք է նաև փաստել, որ ԱՄՆ-ը, լինելով ԵԱՀԿ միջնորդական առաքելության համանախագահող, էական դեր ունի Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում: Անկախության 25 տարիներին ՀՀ-ԱՄՆ փոխհարաբերությունների զարգացման գործում իր ուրույն դերն ու նշանակությունն է ունեցել Միացյալ Նահանգներում բնակվող մեծաթիվ հայությունը:

ԵԿՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անկախության առաջին իսկ օրերին Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել եվրոպական պետությունների հետ բազմաբնույթ համագործակցային հարաբերությունների զարգացմանը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել գրեթե բոլոր եվրոպական պետությունների հետ՝ առաջնային համարելով տնտեսական, քաղաքական, տեխնոլոգիական և այլ ոլորտներում սերտ համագործակցության զարգացումն ու փորձի փոխանակումը: Եվրոպական պետությունների հետ ակտիվ է նաև համագործակցությունը միջազգային կառույցների շրջանակներում:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանն ի սկզբանե մեծապես կարևորել է համագործակցությունը Մերձավոր Արևելքի պետությունների հետ: Ոչ սահմանակից մերձավորարևելյան պետությունների հետ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ ունեցել է և ունի առանցքային նշանակություն՝ կապված այդ պետություններում ստվար հայկական սփյուռքի առկայությամբ և այդ տարածաշրջանին իր հարևանությամբ:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքական ուղենիշները սահմանելիս առաջնորդվում է հարևան պետությունների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի հետ ավանդական բարեկամական գործընկերության խորացման ու ընդլայնման անհրաժեշտությամբ:

Անկախության տարիների համայնապատկերում *հայ-իրանական* հարաբերությունները կառուցվել են փոխշահավետ և բազմաբնույթ համագոր-

ծակցության հիմքի վրա, ինչը պայմանավորված է երկուստեք տնտեսական շահերով, հարուստ պատմամշակութային անցյալով և, իհարկե, ընդհանուր սահմանի առկայությամբ:

Երկու պետությունների միջև ներկայումս ծավալվել է բարձր մակարդակի համագործակցություն տնտեսական, քաղաքական և մարդասիրական համագործակցության ոլորտներում⁶:

Իրանի միջուկային խնդրի կարգավորումից հետո հայ-իրանական հարաբերությունները թևակոխել են շփումների ակտիվացման նոր փուլ, որով նախատեսվում է տնտեսական, էներգետիկ, քաղաքական և այլ ոլորտում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում: Հայաստանի Հանրապետությունը մշտապես բարձր է գնահատում նաև Իրանի Իսլամական Հանրապետության զուսպ և հավասարակշիռ քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում:

Հարևան Կրաստանի հետ հարաբերությունները մշտապես եղել են բարիդրացիական, իսկ վերջին տարիներին նկատելի է զգալի աշխուժացում: Երկու պետությունների միջև առկա է փոխըմբռնման հենք, ինչը կարևոր է նրանց համար կնճռոտ խնդիրների համատեքստում: Քաղաքական համագործակցության ներկայիս մակարդակը նպաստավոր պայմաններ է ապահովել երկկողմ տնտեսական համագործակցության խթանման համար:

ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զնայած այն հանգամանքին, որ 1991 թվականին Թուրքիան պաշտոնապես ճանաչել է Հայաստանի Հանրապետության անկախությունը, երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ մինչ օրս չկան:

Հայաստանի հետ Թուրքիայի փակ սահմանը եղել և մնում է տարածաշրջանի բնականոն և հավասարաչափ զարգացման համար հիմնական խոչընդոտներից մեկը: Անցած 25 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը բազմիցս նշել է, որ պատրաստ է հայ-թուրքական հարաբերությունների հաստատման՝ առանց նախապայմանների, մինչդեռ Թուրքիան առաջ է քաշում նախապայմաններ՝ կապված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ:

Երկու պետությունների հարաբերությունների զարգացման առումով իր ուրույն դերն ու բացառիկ նշանակությունն է ունեցել Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի նախածեռնած քաղաքականությունը, որը, սակայն, Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշման հետևանքով արդյունք չտվեց, քանի որ 2009 թ. Ցյուրիխում ստորագրված արձանագրությունները այդպես էլ չվավերացվեցին: Քանի որ Թուրքիան ողջամիտ ժամկետներում չվավերացրեց արձանագրությունները, ապա ի պատասխան

⁶ Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Իրանի Իսլամական Հանրապետություն» 04.08.2013–05.08.2013 (<http://www.president.am/hy/foreign-visits/item/2013/08/04/Working-visit-of-President-Serzh-Sargsyan-to-Iran/>), նաև՝ «Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի այցելությունը Թեհրան», 05.05.2014 (http://www.mfa.am/hy/press-releases/item/2014/05/05/visit_tehr/):

որա՝ ՀՀ Նախագահը հետ կանչեց այդ արձանագրությունները Ազգային ժողովի օրակարգից⁷:

Երկու պետությունների միջև հարաբերությունների տեսակետից Թուրքիայի համար թերևս ամենացավոտ հարցերից է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Այն եղել և մնում է որպես ոչ միայն պատմական արդարության վերականգնման կարևոր միջոց, այլև վստահության մթնոլորտի վերականգնման, ապագայում նոր ցեղասպանությունների կանխման կարևոր գործոն:

ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնակցությունը ինտեգրային գործընթացներին: Հայաստանի Հանրապետությունն իր արտաքին քաղաքականությունը կառուցել և կառուցում է՝ հիմնվելով «և՛»-«և՛»-ի սկզբունքի վրա, բացառելով «կա՛մ»-«կա՛մ»-ի կիրառումը, եթե դա չի սպառնում ազգային շահերին: Անդամակցելով ՀԱՊԿ-ին՝ նա միևնույն ժամանակ ակտիվ գործընկերային հարաբերություններ է զարգացրել ՆԱՏՕ-ի հետ, ինչպես նաև ներգրավված է եվրոպական անվտանգային գործընթացներում:

ԵԱՀԿ-ն եվրոպական անվտանգության համակարգի միակ կազմակերպությունն է, որին Հայաստանը լիարժեք կերպով է անդամակցում: ԵԱՀԿ-ն՝ որպես եվրոպական անվտանգության միջավայրի առաջնային դերակատար, այն հիմնական կապող օղակն է, որն ապահովում է Հայաստանի շփումները եվրոպական անվտանգային համակարգի դերակատարների հետ:

Անկախության 25 տարիների ընթացքում Հայաստանն իր համեստ նպաստն է բերել եվրոպական անվտանգության համակարգի կատարելագործմանը: Բացի այդ, պետք է շեշտել նաև այն հանգամանքը, որ հենց ԵԱՀԿ-ն է այն կառույցը, որը ներգրավված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում:

Բացի ԵԱՀԿ-ից, եվրոպական անվտանգության համակարգում Հայաստանը Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակում (ԱԳԳԾ) ակտիվ գործընկերային քաղաքական երկխոսություն և հարաբերություններ է զարգացնում ՆԱՏՕ-ի հետ: ՆԱՏՕ–Հայաստան հարաբերություններում իր ուրույն դերն ունի ՆԱՏՕ-ի ռազմական համակարգի հետ Հայաստանի խաղաղապահ ուժերի փոխգործելիության հնարավորությունների զարգացումը՝ ՄԱԿ-ի մանդատով բազմազգ խաղաղապահական գործողություններին մասնակցելու համար: 2004 թվականից Հայաստանի խաղաղապահ ստորաբաժանումները մասնակցում են խաղաղության հաստատման ՆԱՏՕ-ի առաքելություններին: Ակտիվ է համագործակցությունը նաև ՀՀ Զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության համակարգի զարգացման, աղետների հետևանքների նվազեցման և ձգնաժամային կառավարման, արտակարգ իրավիճակներին պատրաստության

⁷ Տես «Հանրապետության Նախագահը Ազգային ժողովից հետ է կանչում Հայաստան –Թուրքիա արձանագրությունները», 16.02.2015 (<http://www.president.am/hy/press-release/item/2015/02/16/President-Serzh-Sargsyan-National-Assembly/>):

աստիճանի բարձրացման, ինչպես նաև Հայաստան-ՆԱՏՕ գործընկերային համագործակցության վերաբերյալ հասարակական իրազեկման մակարդակի բարձրացման ուղղություններով:

Ներկայումս Հայաստանը իրականացնում է իր չորրորդ՝ 2014–2016 թթ., Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը, որը հաստատվել է 2014 թ. մայիսի 23-ին:

ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

2015 թ. հունվարից Հայաստանը **Եվրասիական տնտեսական միության** լիիրավ անդամ է: Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևոր առաջնահերթություններից եղել և շարունակում է մնալ տարածաշրջանում ինտեգրային գործընթացներին ակտիվ մասնակցությունը: Դեպի ծով ելք չունեցող պետությունների համար տնտեսության կայուն զարգացման, նոր շուկաներում ներգրավվածության և արդյունավետ ներդրումային քաղաքականության ապահովման համար առաջնային է համարվում մասնակցությունը տարաբնույթ տարածաշրջանային ինտեգրային միություններին: Այս տեսանկյունից ԵՏՄ-ին անդամակցությունը լուրջ հեռանկարներ է բացում Հայաստանի Հանրապետության տնտեսական կայուն զարգացման համար:

Պետք է նաև նշել, որ Հայաստանը, անդամակցելով Եվրասիական տնտեսական միությանը, շարունակում է իրեն համարել Եվրոպական ընտանիքի և քաղաքակրթության լիարժեք ներկայացուցիչ: Ամենաբարձր մակարդակում բազմիցս է նշվել, որ Հայաստանի Հանրապետության զարգացման հիմքում դրված են Եվրոպական արժեհամակարգն ու սկզբունքները:

Հայաստանը և **Եվրոպական ընկերակցությունները** իրենց հարաբերությունների ձևավորման ուղղությամբ առաջին քայլերը կատարել են ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: 2000-ական թվականների ընթացքում ՀՀ-ԵՄ հարաբերությունները ապրել են սրընթաց վերելք: 2003 թ. Հայաստանը ներգրավվել է հարևան պետությունների հետ Եվրամիության հարաբերությունների կառուցման կարևորագույն մեխանիզմներից մեկում՝ Եվրոպական հարևանության քաղաքականության համակարգում:

Ու թեև Հայաստանը ԵՏՄ լիիրավ անդամ է, սակայն շարունակում է ակտիվ կերպով ներգրավվել նաև ԵՄ-ի Արևելյան գործընկերության ձևաչափում: Հայաստանը մտադիր է զարգացնել Եվրոպական համայնքների հետ իր հարաբերությունները, ինչի վկայությունն է 2013 թ. նոյեմբերին Վիլնյուսում ընդունված Հայաստան-ԵՄ համատեղ հայտարարությունը, որով վերահաստատվել է համապարփակ համագործակցությունն ավելի զարգացնելու և ամրապնդելու փոխադարձ հանձնառությունը: Ներկայումս նաև ակտիվ քայլեր են ձեռնարկվում ԵՄ-ի հետ նոր իրավապայմանագրային հիմք ձևավորելու ուղղությամբ:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը շարունակում է վարել իր աշխարհաքաղաքական դիրքով պայմանավորված փոխլրաց-

ման արտաքին քաղաքականությունը՝ կառուցված տարբեր պետությունների շահերի զուգադրման, այլ ոչ հակադրման վրա: Ավելին. ակնհայտ է, որ 21-րդ դարի սկզբին բնորոշ համընդհանրացման միտումների խորացման պայմաններում պետությունների միջև տնտեսական սահմանները կորցնում են իրենց նշանակությունը, և տեղին չէ փորձել իրար հակադրել տարբեր ինտեգրային մոդելները: Այս առումով բազմիցս ենք շեշտել, որ Հայաստանը, անդամակցելով ԵՏՄ-ին, կարող է գործարար ոլորտներում կապող օղակ լինել այդ կառույցի անդամների և արևմտյան պետությունների միջև:

ДОСТИЖЕНИЯ И ВЫЗОВЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РА

А. Б. ЗАКАРЯН, кандидат политических наук, Председатель Постоянной комиссии по внешним связям Национального собрания РА

РЕЗЮМЕ

В течение 25 лет независимости Республика Армения основывала свою внешнюю политику на принципах комплементаризма (взаимодополнения), учета интересов больших государств и международных организаций, углубления сотрудничества с соседними государствами, взаимовыгодности и взаимного уважения, в двустороннем и многостороннем форматах. Благодаря этому Армения пользуется репутацией надежного партнера.

Являясь стратегическим союзником РФ и стратегическим партнером США, членом ОДКБ и участником ПРМ НАТО и миротворческих операций Альянса, Республика Армения может стать, в частности, надежной платформой для развития диалога между Россией и Западом.

RA FOREIGN POLICY ACHIEVEMENTS AND CHALLENGES

A. B. ZAKARYAN, PhD in Political Science, Chair, Standing Committee on Foreign Relations, NA, RA

SUMMARY

Throughout 25 years of independence the Republic of Armenia has been setting up its foreign policy on the principles of complementarity, taking into account the interests of major states and international organizations, increasing cooperation with neighbor states, and on mutual benefit and respect within both bilateral and multi-lateral formats. Owing to this, Armenia enjoys the reputation of a reliable partner.

Being a strategic ally of the RF and a strategic partner of the US, also a CSTO member and a participant in NATO PfP and peacekeeping operations of the North Atlantic Alliance, the Republic of Armenia, in particular, can become a reliable platform for developing a dialogue between Russia and the West.

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Թ. Ն. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
«Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար*



Մեր համոզմամբ՝ Հայաստանի տնտեսության զարգացման մասին դատողությունները պետք է խարըսխվեն իրավիճակի սթափ և անկողմնակալ գնահատականի, զարգացմանը խոչընդոտող կարևոր գործոնների արատորոշման, ազգային մրցակցային առավելությունների պարզման ու հետևողական իրացման վրա:

Նախ. կարևոր է արձանագրել, որ մենք, նախկին խորհրդային քաղաքական համակարգը նորով փոխարինելով, այդպես էլ չկարողացանք նախկին տնտեսակարգը փոխարինել նորով: Եթե նախկին քաղաքական համակարգի այլընտրանքն անկախությունը, ինքնիշխանությունն ու ժողովրդավարությունն են, ապա կարևոր է հստակեցնել, թե որն է նախկին տնտեսակարգի այլընտրանքն այսօր: Կամ, որ ավելի կարևոր է, որն է տնտեսության զարգացման մեր տեսլականն ու հեռահար նպատակը: Պարզվում է, որ տարիներ ընթացքում տարբեր են եղել անգամ այդ հարցերի ընկալումները:

Կարևոր է ոչ միայն զարգացման տեսլականի ընտրությունը, այլև այդ ճանապարհին հնարավոր «իզմ»-երից խուսափումը, քանի որ հավասարապես անընդունելի են թե՛ նեոլիբերալիզմի (նոր ազատականության), թե՛ կոմունիզմի, թե՛ այլ ուղղություններով տնտեսության քաղաքականացման փորձերը¹:

Հետևաբար հարկավոր է պարզել, թե որոնք են Հայաստանի տնտեսական զարգացումը զսպող գործոնները, և ինչպես կարելի է դրանք վնասազերծել: Իրականում խոսքը վերաբերում է տնտեսական սպառնալիքներին, որոնց չեզոքացումը, ասել է թե՛ տնտեսական անվտանգության ապահովումը, ոչ միայն տնտեսության, այլև երկրի առաջընթացի կարևոր հիմքն է:

Հայաստանի տնտեսական անվտանգության դեմ ուղղված ամենաախտալի վնասալիքներն առավել ամբողջական տեսքով հետևյալներն են.

– հասարակության գույքային անհավասարության և շերտավորման խորացումը, աղքատության աճումը, սոցիալական անդորրի և ազգային համաձայնության հիմքերի խարխուլումը: Հանրային շահերի հաստատված հարաբերական հավասարակշռությունը կարող է խախտվել հետևյալ հիմնական գործոնների պատճառով.

• տարբեր սոցիալական հակամարտությունների հանգեցնող գործադրության աճում,

¹ Տես *Տիգրան Եփրեմյան*, Ազատականության (լիբերալիզմի) հնարավորությունների և դրսևորումների որոշ հարցերի շուրջ: «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի գիտավերլուծական կենտրոն, ապրիլ 2012, էջ 1–4 (էլեկտրոնային տարբերակ):

- հասարակության բեռնացում մի խումբ հարուստների և մեծաթիվ աղքատների,

- գյուղի համեմատությամբ քաղաքի բնակչության շրջանում աղքատների տեսակարար կշռի մեծացում, ինչն իր հերթին ստեղծում է քրեածին մթնոլորտ, սոցիալական լարվածություն և Հայաստանի համար նախկինում խորթ այնպիսի բացասական երևույթների տարածման համար պարարտ հող, ինչպիսիք են թմրաբիզնեսը, կազմակերպված հանցագործությունները, մարմնավաճառությունը և այլն,

- զանգվածային արտագաղթ Ռուսաստան և հեռավոր արտերկիր,

- մտավոր կարողության արտահոսք,

- Հայաստանի տնտեսության կառուցվածքի արհեստական և պարտադրված վերածնունդները, որոնք պայմանավորված են հետևյալ հիմնական գործոններով՝

- տնտեսության հանքահումքային արտադրությունների զարգացում, այդ թվում՝ մոլիբդենի, ոսկու սահմանափակ պաշարների արդյունահանում և զանգվածային արտահանում երկրից,

- վերանշակող արդյունաբերության կենսական կարևորություն ունեցող ճյուղերում արտադրությունների կանգնեցում և դրանց արտադրատեսչն ուղղփական կարողության փոշիացում,

- պետության արդյունաբերական կարողության աստիճանական փոշիացում և շեղում ավանդական մասնագիտացման ճյուղերից,

- հայրենական արտադրության լայն սպառման ապրանքների մեծ մասի անմրցունակությունը,

- ժամանակակից տեխնոլոգիաների մշակման և արտադրության, մեքենաշինության, այլ ճյուղերի զարգացման ճանապարհին առկա օրինաչափ և արհեստական արգելքները և պետական աջակցություն չլինելը,

- գիտական հետազոտությունների և նորամուծությունների տեխնոլոգիական միասնության խաթարումը, ինչպես նաև ձևավորված գիտական խմբերի ու հիմնարկների քայքայումը և դրա հետևանքով հանրապետության գիտատեխնիկական կարողության փոշիացումը,

- մի շարք պետությունների և խոշոր արտասահմանյան ընկերությունների կողմից լայն սպառման ապրանքների տեղական շուկայի գրավումը,

- խոշոր արտասահմանյան ընկերությունների կողմից հայրենական արտադրությունների աստիճանական գրավումը՝ դրանց արտադրանքը արտաքին, հետագայում նաև ներքին շուկաներից դուրս մղելու նպատակով,

- բաշխիչ էլեկտրացանցերի օտարումը արտերկրի՝ ԱՊՀ մի շարք երկրներում իրենց բացասաբար դրսևորած, ընկերությունների՝ հեռանկարում Համաշխարհային բանկի պարտադրանքով նաև էլեկտրաէներգիա արտադրող կայանների մասնավորեցմամբ և տնտեսության իրական հատվածի լիովին կազմալուծմամբ (Ղազախստանի և Վրաստանի օրինակով),

- արտահանման համեմատությամբ ներմուծումների անընդհատ աճումը,

- Հայաստանի արտաքին պարտքի շեշտակի ավելացումը,

- ՀՀ պետական բյուջեի ձեղքվածքի անընդհատ աճումը և դրա ֆինանս-

սավորման մեջ արտաքին աղբյուրներից կախվածության ակնհայտ մեծացումը,

– հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական զարգացածության անհամաչափության խորացումը, ինչը դրսևորվում է՝

• մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներում գոյություն ունեցող էական տարբերությունների միջոցով, արդյունաբերությունում կառուցվածքային տեղաշարժեր և արդյունահանող-վերամշակող ճյուղերում առաջընթաց ունեցած մարզերի համեմատությամբ տնտեսապես հետամնաց վիճակում գտնվող համայնքների փաստացի անկարողության ձևով,

• հանրապետության առանձին մարզերի ու բնակավայրերի, դրանց ձեռնարկությունների արտադրատեխնոլոգիական կապերի խախտումներով,

• հանրապետության տարբեր մարզերի միջև բնակչության մեկ շնչին բաժին հասնող համախառն ներքին արդյունքի արտադրության մակարդակներում եղած տարբերությունների ձևով,

– հասարակության և տնտեսական գործունեության քրեականացումը, որը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսին է, օրինակ, գործազրկության աճումը, քանի որ հանցագործությունների մեծ մասը կատարում են եկամտի մշտական աղբյուր չունեցող անձինք,

– պետական վերահսկողության համակարգի թուլացումը, ինչը հանգեցրել է ներքին ֆինանսական շուկայում, մասնավորեցման ոլորտում, արտահանման-ներմուծման գործարքներում և առևտրում քրեական տարրերի ու կառույցների գործունեության ընդլայնմանը և որոշակի աշխուժացմանը²:

Բացի տնտեսական անվտանգության համար սպառնալիքներից, կարևոր է ի հայտ բերել նաև այն տարիմաստությունները, որոնք տնտեսական օրինաչափություններում շփոթ են առաջացնում և պետության տնտեսական զարգացման համար հարուցում են զգալի դժվարություններ: Դրանցով են պայմանավորված նաև տնտեսության ներկայիս առանձնահատկությունները:

Այսպես. տարիներ շարունակ գրանցվող տնտեսական աճն այդպես էլ չի անդրադառնում մարդկանց կենսամակարդակի վրա, առավել ևս՝ չի հաջողվում ձևավորել միջին խավ: Հետևաբար՝ տարիմաստությունն այն է, որ տնտեսական աճը չի վերածվում տնտեսական զարգացման, իսկ առավել ևս՝ մարդկային զարգացման:

Մյուս տարիմաստությունն այն է, որ, ի տարբերություն այլ պետություններից, մի կողմից, դիտվում է տնտեսական աճ, մյուս կողմից՝ ազգաբնակչության իրական եկամուտների անկում, ինչի հետևանքով աճում է աղքատության եզրին հայտնված մարդկանց թիվը: Հիշեցնենք, որ ԱՄՆ-ը, Ճապոնիան և ԵՄ-ի պետություններն իրենց տնտեսական զարգացումն ապահովում են անգամ 1–3 տոկոս տնտեսական աճի պայմաններում, իսկ Հայաստանն անգամ առանձին տարիներին արձանագրած երկնիշ տնտեսական աճով հանդերձ չի կարողանում լուծել սոցիալական խնդիրներ: Գաղտնիքն

² Տես *Թ. Մանասերյան*, Տնտեսական անվտանգություն. ռազմավարության ուրվագծեր: Ե., 2014, էջ 24:

այն է, որ նշված պետություններում եղած աճը, իրոք, տնտեսական աճ է: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզանում առայժմ կարող է տեղի ունենալ միայն վերականգնողական աճում, ինչը ամենևին էլ բավարար չէ (հիշենք երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ասենք, Գերմանիայի տնտեսության վերականգնողական աճը, որը կազմեց տարեկան 30–35 տոկոս և կոչվեց «գերմանական հրաշք»)³:

Հայաստանի տնտեսության տարիմաստություններից մեկն էլ այն է, որ կան հարյուր հազարավոր մարդիկ, որոնք մեծ դժվարությամբ հաղթահարում են գործազրկությունը, աշխատանք են գտնում, սակայն նվազագույն աշխատավարձի՝ 55 հազար դրամի պայմաններում⁴, չեն կարողանում հաղթահարել աղքատության շեմը, քանի որ նվազագույն աշխատավարձն ավելի ցածր է, քան կենսապահովման նվազագույն զամբյուղը (մեր հաշվարկներով այն կազմում է 65–68 հազար ՀՀ դրամ)⁵: Գնալով աճում է կենսապահովման նվազագույն զամբյուղի գումարային մեծությունը, մինչդեռ նվազագույն աշխատավարձը անփոփոխ է, իսկ իրական գնաճի պայմաններում, ինչպես հայտնի է, տեղի է ունենում աշխատավարձի տեսքով ստացված դրամի գնողունակության անկում: Որպես աշխատուժի առաջարկի ավելացման հետևանք՝ ընկել է աշխատավարձի իրական մակարդակը: Ասել է, թե՛ գործատուն այսօր ավելի լայն ընտրությամբ կարող է վարձել նույն որակավորում ունեցող ավելի էժան աշխատուժ:

Տարիմաստություն է նաև այն հանգամանքը, որ Հայաստանում համանուն օրենքի հիման վրա գործում է համանուն պետական հանձնաժողովը, որն իրականացնում է տնտեսական մրցակցության պաշտպանություն, ինչն իրականում դեռ չի նշանակում հակամենաշնորհային քաղաքականություն, չեն կանխվում մենաշնորհների ձևավորման փորձերը: Ավելին. որոշ մենաշնորհատերերի ավելի ձեռնտու է գործող կարգի համաձայն վճարել տուգանքներ, քան այն, որ մենաշնորհը վերանա⁶:

Երբ փորձում ենք վերլուծել ներկայիս տնտեսական խնդիրների հիմքերը, պարզվում է, որ տարիմաստորեն՝ հակառակ տնտեսական օրենքների, մասնավորեցվել են ոչ այնքան վնասով աշխատող կամ չաշխատող, որքան արդեն եկամուտ բերող ձեռնարկությունները (սկսած հեռահաղորդակցության համակարգից, կոնյակի գործարանից, վերջապահած բաշխիչ էլեկտրացանցերով և այլն):

Տարիմաստություններից մեկն էլ այն է, որ պատերազմական պայմաններում հայտնված մեր պետությունից մեկնում են արտագնա աշխատանքի,

³ Տես *Л. Эрхард. Полвека размышлений. Речи и статьи.* М., 1993, сс. 3–12:

⁴ Տես «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ 2003 թ. դեկտեմբերի 17-ի հմ. ՀՕ-66-Ն օրենքը (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1860>):

⁵ Տես *Nanak Kakwani, Hyun H. Son. Measuring Food Insecurity: Global Estimates* (<http://www.un.org/esa/socdev/egms/docs/2015/sd-agenda2030/Kakwani-Paper.pdf>):

⁶ Տես «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով» (<http://www.competition.am/index.php?menu=133&lng=1>):

որից ստացված գումարից տրանսֆերտներ են գալիս Հայաստան, դրանց մի զգալի մասով ձեռք են բերվում թուրքական ապրանքներ, ինչով աջակցություն է ցուցաբերվում Թուրքիայի տնտեսության առաջընթացին, այդ երկրի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը, հետևաբար՝ հենց մեր դեմ ուղղվող գեների արտադրությանը⁷:

Տարիմաստությունները, հանելուկները շատ են, իսկ ամենազլխավոր տարիմաստությունը թերևս այն է, որ այսօր դեռևս պահանջված չէ դրանց հանգուցալուծումների համար անհրաժեշտ մասնագիտական ներուժը:

Միևնույն ժամանակ, կարևոր է նկատել, որ ամեն իրավիճակ, այդ թվում՝ տնտեսական, ունի իր տրամաբանությունը: Ցանկացած երևույթ, այդ թվում՝ տնտեսական, կարելի է վերլուծել ըստ դրա պատճառահետևանքային կապերի: Այս իմաստով թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում տարբեր դրսևորումներով ընթացող տնտեսական ճգնաժամները ենթակա են հավաստի տվյալների վերլուծության և որոշակի արատորոշման: Վերջինս հնարավորություն է տալիս մշակելու ճգնաժամից դուրս գալու առավել իրատեսական լուծումներ: Պատմությունը վկայում է, որ հենց համակարգված վերլուծությունների շնորհիվ են ձևավորվել մոտեցումներ, մշակվել և իրագործվել ընդգրկուն տնտեսական ծրագրեր, որոնք ապահովել են զարգացման և ճգնաժամների հաղթահարման արդյունավետ ուղիներ: Մասնավորապես՝ այդպես են տեղի ունեցել 1929–1933 թթ. անցումը Մեծ դեպրեսիայից դեպի տնտեսական աշխուժացումը⁸, երկրորդ համաշխարհային պատերազմից ավերված տնտեսությունների վերականգնումը (Ջորջ Մարշալի պլան⁹), «գերմանական հրաշքը»¹⁰ և Ճապոնիայի թռիչքածև զարգացումն¹¹ ու նրա վերածումը համաշխարհային տնտեսության ուժի կենտրոնի, պրոֆեսոր Արթուր Լաֆերի ուսմունքով ԱՄՆ-ի տնտեսության աշխուժացումը¹² և այլ դրական զարգացումներ:

⁷ Տես «Ողջունելի է ապրանքի վրայի «թուրքական չէ» մերժողական պիտակը. Թաթուլ Մանասերյան»: «panorama.am», 20.04.2016 (<http://www.panorama.am/am/news/2016/04/20/%D4%B9%D5%A1%D5%A9%D5%B8%D6%82%D5%AC-D5%84%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/1565853>):

⁸ Տես *Thayer Watkins*. The Recovery from the Great Depression of the 1930s. San José State University Department of Economics (<http://www.sjsu.edu/faculty/watkins/recovery.htm>):

⁹ Տես «The Marshall Plan – «The Europeans did the job themselves»». Moments in U.S. Diplomatic History. «Association for Diplomatic Studies and Training» (<http://adst.org/2015/05/the-marshall-plan-the-europeans-did-the-job-themselves/>):

¹⁰ Տես *Richard Reichel*. Germany's Postwar Growth: Economic Miracle or Reconstruction Boom? Cato Institute (<http://object.cato.org/sites/cato.org/files/serials/files/cato-journal/2002/1/cj21n3-5.pdf>):

¹¹ Տես *Sunny Mewati*. How did Japan rebuild itself and become an advanced nation and a major economic power in the aftermath of the World War II? (<https://www.quora.com/How-did-Japan-rebuild-itself-and-become-an-advanced-nation-and-a-major-economic-power-in-the-aftermath-of-the-World-War-II>):

¹² Տես *Natalie Johnson*. Arthur Laffer Resells His Reagan-Era Tax Cuts to Create «Boom of All Centuries». «THE DAILY SIGNAL», 20 July 2015 (<http://dailysignal.com/2015/07/20/arthur-laffer-resells-his-reagan-era-tax-cuts-to-create-boom-of-all-centuries/>):

«Ն տնտեսական զարգացման առանձնահատկությունների և հեռանկարների մեր ուսումնասիրությունը հիմնված է այն համոզման վրա, որ անկախության տարիներին Հայաստան պետության իրականացրած տնտեսական բարեփոխումները, ընդհանուր առմամբ, անդառնալի են դարձրել մրցակցային տնտեսության ձևավորման գործընթացը և հնարավորություն են տվել ունենալու որոշակի ձեռքբերումներ:

Մեր նպատակն է ներկայացնել այն քայլերը, որոնք հնարավորություն կտան ձևավորելու բազմաձյուղ և մրցունակ ազգային տնտեսություն, վերականգնողական աճից անցում կատարելու կայուն զարգացման և դրանց շնորհիվ ապահովելու բնակչության բարձր կենսամակարդակ:

Ի վերջո, Հայաստանի տնտեսության զարգացումն ու բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացումը, մեր համոզմամբ, խարսխված են, մի կողմից, տնտեսության մրցունակության, իսկ մյուս կողմից՝ բավարար մակարդակով տնտեսական անվտանգության ապահովման վրա:

Ակնհայտ է, որ Հայաստանի տնտեսության զարգացման ճանապարհային քարտեզը պետք է ուրվագծել՝ սկսելով երկրի տնտեսական կարողության ճանաչողական մակարդակի բարձրացումից: Դա, իր հերթին, ենթադրում է մարդկային (մասնագիտական) ռեսուրսների, բնական պաշարների, հանքահումքային ռեսուրսների, արտադրական կարողությունների, ֆինանսական ռեսուրսների գնահատում և հաշվառում: Այս ամենը պահանջում է Հայաստանի և հայության մրցակցային առավելությունների վերաբերյալ պատկերացումների հստակեցում, հետևաբար՝ Հայաստանի և Սփյուռքի մասնագիտական կարողության հաշվառում: ՈՒ թեև բազմաթիվ փորձագետների վկայությամբ ազգային մրցակցային առավելությունների իրացումը հույժ կարևոր է, մինչ օրս հայտնի չեն ոչ միայն այդ առավելությունները, այլև դրանց ընտրության համար կիրառվելիք չափանիշները: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է կատարել մրցունակությունը բնութագրող չափանիշների ընտրություն, ինչին միայն կհաջորդեն ազգային մրցակցային առավելությունների ընտրությունն ու դասակարգումը, ինչպես նաև յուրաքանչյուր բնագավառի մրցակցային առավելությունների իրացմանը նպաստող և խոչընդոտող գործոնների պարզումը և հեռահար (ռազմավարական) թիրախների ընտրությունն ու դրանց հասնելու համար մարտավարական խնդիրների ձևակերպումը:

Միևնույն ժամանակ, կարևորվում է մրցակցային առավելությունների իրացման համար անհրաժեշտ մրցունակության ազգային մոդելի ձևավորումը, ինչը ենթադրում է մարդկային կապիտալի արժեքավորում, պետության դերի վերաարժեքավորում, տնտեսության աշխուժացմանը ժողովրդի գործուն մասնակցության և շահագրգռվածության (խթանների) համապատասխան մեխանիզմների ստեղծում: Մեր կարծիքով՝ վերը նշված գործոնները հնարավորություն կտան ձևավորելու ազգային շուկայական տնտեսության այն մոդելը, որը կնպաստի տնտեսության իրական առաջընթացին: Իր հերթին, տնտեսական զարգացման մոդելի կիրառման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը պահանջում է հետևյալ նախապայմանների ապահովում:

ԳՐԱԿԻՉ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ (ՆԵՐՔԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՁԱՆՈՒՄ)
ԱՐԴԱՐ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԱՇՏ
ԳԵՐԱԿՏԻԿ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՐԿԱՅՈՒԹԵՏԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱՅՈՒԹԵՏԱՅԻՆ, ՄԱՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՄԱՉԱԾՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ
ՄՏԱԿՈՐ ԿԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՁԱՆՆԵՐ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԲԱՐԵԹՈՒՆՈՒՄՆԵՐ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդամին այս նախաայայմաններից յուրաքանչյուրի ապահովումը պայմանավորված է հստակ քայլերով:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԲԱՐԵԼԱԿՈՒՄ

- Խթանել ներքին ներդրումները,
- ձևավորել և կիրառել բնակչության ձեռքին կուտակված ժամանակավորապես ազատ դրամական զանգվածի օգտագործման մեխանիզմները,
- Խթանել ներքին խնայողությունները (պետական բոնդերի ծրագիր, նպատակային ներդրումային ծրագրեր և այլն),
- ձևավորել ազատ տնտեսական գոտիներ (առևտրային, տարանցիկ, տեխնոպարկեր, տեխնոպոլիսներ և այլն),
- բազմազանեցնել արտաքին ներդրումների աղբյուրները և վերացնել սահմանափակ աղբյուրներից արտաքին ներդրումների կախումը,
- կապիտալի զանգվածային արտահոսքի դեպքում սահմանել սահմանափակումներ և հարկ,
- կապիտալի կուտակման նախասկզբնական փուլում ձևավորված առևտրային կապիտալն աստիճանաբար վերածել արդյունաբերական կապիտալի,
- կիրառել ներքին և արտաքին պետական պարտքի սպասարկման արդյունավետ մեխանիզմներ:

ԱՐԴԱՐ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԱՇՏ

- Մենաշնորհացման վտանգով բնորոշվող ոլորտներում կիրառել նոր տնտեսվարողներին պետական աջակցության փաթեթ (արտոնյալ վարկեր, սկզբնական փուլում հարկային արտոնություններ),
- մենաշնորհների դեմ պայքարում կիրառել պետական ներկրումների սահմանակարգ և սահմանել ցածր, մրցակցային գներ:

ԳԵՐԱԿՏԻԿ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Առաջին անհրաժեշտության ներմուծվող ապրանքների գների «թռիչքածև աճման» դեպքում հարկել գերշահույթները, ինչը կհարկադրի սահմանել մրցունակ գներ,

- մշակել ներմուծման փոխարինման քաղաքականության հայեցակարգ և ծրագրեր,

- ստեղծել տնտեսության գերակա ոլորտների առաջնահերթությունների հիման վրա արտաքին առևտրային ներկայացուցչություններ,

- հայրենական արտադրողներին տրամադրել արտաքին շուկաների վերաբերյալ հուսալի տեղեկույթ, բարձրացնել նոր շուկաներ մուտք գործելու հետ կապված առևտրային արգելքների և արտոնությունների համակարգերի մասին տեղեկացվածության աստիճանը,

- ձևավորել և գովազդել հայկական բրենդը,

- տեղական արտադրության կայացման առաջին փուլում կիրառել ներմուծմանը խոչընդոտող ոչ սակագնային արգելքներ ու սահմանափակումներ,

- ձևավորել հանրապետության արտաքին տնտեսական կապերի համակարգ, հստակ արտաքին տնտեսական քաղաքականությամբ, պետական գործառույթներով և ծրագրով օժտված պետական կառույց:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- Կատարել հարկային փաստաթղթաշրջանառության կարգավորում՝ մեծից փոքր բիզնեսների միջև պատշաճ փաստաթղթերի ձևակերպումներ,

- բարձրացնել հարկային տեսուչների օրենսդրական գրագիտության մակարդակը,

- նոր հարկեր սահմանելուց առաջ հավասարապես գանձել գոյություն ունեցող հարկերը բացառապես բոլոր տնտեսվարողներից,

- վերացնել հարկային կանխավճարները,

- հարկային մուտքերում ավելացնել ՓՄՁ տեսակարար կշիռը՝ ի հաշիվ տարբերակված հարկային քաղաքականության,

- նոր և մրցունակ արտադրություններ ստեղծելու դեպքում առաջին երեք տարիներին կիրառել հարկային արտոնություններ,

- չաշխատող ձեռնարկությունների վերագործարկման նպատակով չգործող արտադրության միջոցներից գանձել պրոգրեսիվ գույքահարկ,

- հանրապետության տարածքում կատարել անցում դեպի տարբերակված հարկային քաղաքականություն և հարկային շրջանացում,

- սահմանամերձ բնակավայրերում ստեղծել ազատ գոտիներ՝ տեղի բնակչության արտահոսքը կանխելու, գործարար աշխուժությունն ու նոր աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով,

- նոր տեխնոլոգիաների և գիտության զարգացումը խթանելու նպատակով տնտեսության առաջանցիկ զարգացումն ապահովող առանձին ոլորտներին տրամադրել կարճաժամկետ հարկային արտոնություններ,

- անավարտ շինարարությունների համար սահմանել հստակ ժամկետներ, իսկ դրանց խախտումների պարագայում՝ կիրառել պրոգրեսիվ հարկում,

- նոր տեխնոլոգիաների ներմուծման դեպքում վերացնել մաքսատուրքը,

- բոլոր ապրանքների ներկրման համար կիրառել հաշիվ-ապրանքագրեր

(*invoice*) (շուկայական արժեքի կիրառում՝ բացառապես անհամապատասխանությունների բացահայտման դեպքում),

• բնակչությանը փոխհատուցել պետության կուտակված պարտքը (ԽՍՀՄ խնայքանկի ավանդներ¹³, առանձին պետական վճարների ուշացումներ) և կիրառել պետությանը բնակչության անապահով խավի կուտակված պարտքի հաշվանցման մեխանիզմը:

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՈՒՄ

• Մշակել և իրագործել ՀՀ – ԼՂՀ տնտեսական ինտեգրման ծրագիր,
• իրականացնել ազատագրված տարածքների և ՀՀ-ում լքված գյուղերի վերաբնակեցման ծրագիր¹⁴,

• սահմանամերձ գյուղերին շնորհել հատուկ «սահմանապահ» կարգավիճակ,

• սահմանամերձ բնակավայրերում ձևավորել ազատ տնտեսական գոտիներ¹⁵,

• չօգտագործվող գյուղատնտեսական հողերից գանձել պրոգրեսիվ գույքահարկ,

• տնտեսության առողջացման ծրագրի հիմնադրույթներում առավելագույնս հաշվի առնել ոչ միայն պետության, այլև նրա առանձին տարածքների յուրահատուկ աշխարհագրական, բնակլիմայական, սոցիալ-տնտեսական պայմանները, ինչը հնարավորություն կտա անցնելու նոր վարչական կառուցվածքի, ռազմավարական գոտիների (հյուսիսային, կենտրոնական, հարավային) ձևավորմանը՝ դրանք աստիճանաբար ինտեգրելով հարևան պետությունների համապատասխան տարածքների (Ջավախք, Արցախ, Իրանի հյուսիսային շրջաններ և այլն) հետ,

• ապահովել հանքերի շահագործման ժամանակ բնության վերականգնման պահանջի կատարումը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

• Ձևավորել Էներգետիկ, պարենային, ժողովրդագրական, ֆինանսական ոլորտներում պետության անվտանգության ապահովման համակարգեր և ըստ ոլորտների, աստիճանաբար չեզոքացնել տնտեսական սպառնալիքները,

• հետևողականորեն զարգացնել պետության ռազմաարդյունաբերական համալիրը (ՌԱՀ),

• ձևակերպել ՌԱՀ-ի զարգացման խնդիրներն ու հայեցակետը¹⁶,

¹³ Տես «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հուլիսի 24-ի հմ. ՀՕ-137 օրենքը, հոդ. 19, կետ 3, հոդ. 23, կետ 3 (<http://www.arlis.am/documentview.aspx?docid=75497>):

¹⁴ Տես *Նորայր Մանասերյան*, Լեռնային գյուղերի պահպանման խնդիրը Հայաստանի անվտանգության խնդիրն է: «Իրատես.am», 15.04.2011 (<http://www.irates.am/hy/YC77XggEifxEghe86QCl1jtU11>):

¹⁵ Տես ՀՀ օրենքը «Ազատ տնտեսական գոտիների մասին»: Ընդունվել է 18.01.2011 (www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID):

¹⁶ Տես Ա. Ս. *Պետրոսյան*, Թ. Ն. *Մանասերյան*, ՀՀ ռազմական և տնտեսական անվտանգության հիմնահարցեր: «ՀԲ», 2000, հմ. 1:

- կատարել ՌԱՀ-ի կառուցվածքային վերափոխում՝ պետության զարգացման ռազմավարությանն ու ՌԱՀ-ի խնդիրների լուծմանը դրա համապատասխանեցմամբ,
- բացառել ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների նկատմամբ պետական վերահսկողության ուժեղացումը և մասնավորեցումը,
- մշակել տարածաշրջանային և միջազգային ռազմավարական միություններին անդամակցելու կամ այդպիսիք ձևավորելու միջոցով պետության ՌԱՀ-ի հզորացման ծրագիր և ընտրել ռազմավարական գործընկերների,
- հաշվառել, դասակարգել ու վերլուծել ՌԱՀ-ի արտադրական հզորություններն ու կարիքները,
- գնահատել և ապահովել ՌԱՀ-ի զարգացման համար անհրաժեշտ քանակությամբ արտադրական կարողություններ ու հումք,
- կազմակերպել լեռնային պայմաններում աշխատող ռազմական և այլ տեխնիկայի արտադրություն,
- ապահովել ՌԱՀ-ի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ,
- ձևավորել ՌԱՀ-ի կառավարման և սպասարկման համար անհրաժեշտ միջին ու բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջարկ ու ապահովել հանրապետությունում և արտերկրում նրանց կրթությունը (հիմնականում՝ միջպետական պայմանագրերով նախատեսված պայմաններով),
- հանրապետության ՌԱՀ-ի ձևավորման և զարգացման գործում օգտագործել Սփյուռքի մասնագիտական կարողությունը,
- ապահովել ազգային տնտեսության համակարգին ՌԱՀ-ի ինտեգրումը՝ հայրենական արտադրության մրցունակության մեծացման, նոր աշխատատեղերի ստեղծման և նոր տեխնոլոգիաների ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ:

ՄՏԱԿՈՐ (ԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ) ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ
ՊԱՀԱՆՋՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԽԹԱՆՆԵՐ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԻՐԱՑՄԱՆ
ՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏԱԿՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Սահմանել մի շարք մասնագիտությունների գծով կրթական ցենզ,
- հաշվառել մասնագետներին և համակարգված ձևով հավաքել ըստ տնտեսության ու գիտության ճյուղերի նրանց աշխատանքները,
- հանրապետության տարբեր բնակավայրերում պետական ու մասնավոր բուհերի ցանցն օգտագործել բուհական գիտությունը զարգացնելու և այդ միջոցով գյուղական բնակավայրերում գիտական ու գիտատեխնիկական գործունեության համար անհրաժեշտ միջավայր ձևավորելու նպատակով,
- ժամանակավորապես գործազուրկի կարգավիճակում հայտնված փորձառու մասնագետներին կամ բուհերի շրջանավարտներին միջպետական ծրագրերով գործուղել արտերկիր, ինչը հնարավորություն կտա ավելի քիչ միջոցներ վատնելու գործազրկության նպաստների վրա, պայմանագրով երաշխավորված ժամկետով և հստակ վարձատրության պայմաններով հո-

զալու մասնագետների ու նրանց ընտանիքների նյութական կարիքները, գործուղված մասնագետների ստացած եկամտից զանձելու պետական հարկ, ինչով կապահովվի արտարժույթի լրացուցիչ հոսք պետքի լուծել, տարբեր ոլորտների հայ մասնագետներին հնարավորություն ընձեռել կատարելագործելու իրենց գիտելիքներն ու փորձը, ինչը այլապես զգալի միջոցներ կպահանջի պետությունից, և պայմանագրի ավարտին երաշխավորել հայ մասնագետների վերադարձը,

- Երևանից դուրս՝ սահմանամերձ և լեռնային բնակավայրերում, գիտական հիմնարկներ ստեղծելու, գիտատար արտադրություններ կազմակերպելու և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվելու, հանրապետության տարածքում գիտությունը համամասնորեն զարգացնելու նպատակով սահմանել հարկային արտոնություններ,

- մշակել և իրականացնել գիտական ու գիտատեխնիկական գործունեության պետական գերակտիվ քաղաքականություն. պետական մակարդակով կատարել պետության գիտական ու գիտատեխնիկական գործունեության արդյունքների նպատակային մարկետինգ՝ արտերկրում ՀՀ դեսպանությունների լայն ցանցի առավելագույն օգտագործմամբ,

- ՀՀ Նախագահին առընթեր ձևավորել Գիտության և գիտատեխնիկական գործունեության հիմնադրամ, որը մշակի գիտության ու գիտատեխնիկական գործունեության քաղաքականությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐ

- Հանրային կառավարման կառույցներում բացառել գործառույթների կրկնությունները և հակասությունները,

- պետական կառույցներում աշխատանքի ընդունման հրամանից առաջ հաստատել աշխատողի գործառույթները հստակ կերպով սահմանող աշխատանքային պայմանագիրը,

- նպատակային կերպով օգտագործել պետական պատվերի սահմանակարգը և կիրառել դրա մրցութային կարգը:


Ազգային մրցակցային առավելությունների պարզման և դրանց արդյունավետ իրացման համար կարևոր է նաև սկզբունքների և հիմնաքարերի ընտրությունը: Դրանք, մեր կարծիքով, փոխկապված ու փոխպայմանավորված են (սխեմայաձև պատկերը ներկայացված է նկ. 1-ում):

Մյուս կողմից՝ գոյություն ունեն բազմաթիվ անհամաչափություններ, որոնք կրճատելու, իսկ հնարավորության դեպքում՝ նաև վերացնելու պարագայում կարելի կլինի հավակնել կայուն տնտեսական զարգացման (նկ. 2):


Վերջապես, հանրապետության նոր տնտեսական համակարգի ձևավորումը չի կարող կրել կամայական բնույթ: Այն կարիք ունի պետության մշակած և փուլ առ փուլ իրականացրած տնտեսական քաղաքականության: Վերջինս, իր հերթին, պետք է հիմնվի տնտեսության զարգացման հեռանկարային ծրագրի վրա, որը բխում է տնտեսական ռազմավարական հայեցակարգի դրույթներից և, առաջին հերթին՝ տնտեսական հայեցակետից: Տնտեսական հայեցակետի սահմանումը ժամանակի անհետաձգելի հրամա-

յականն է, ընդհանրապես տնտեսական բարեփոխումների և տնտեսական քաղաքականության անկյունաքարը:

Մեր կարծիքով՝ տնտեսական հայեցակետին, որը պետության տնտեսական քաղաքականության գերխտացված ձևակերպումն է, պետք է նախորդեն կանխական հիմնավորումները, որոնց շնորհիվ այդ քաղաքականության քաղադրիչները կդառնան ավելի ըմբռնելի, և վերջնանպատակի իրագործման ընտրված ռազմավարությունը:



Նկ. 1. Սկզբունքներ և հիմնաքարեր



Նկ. 2. Անհամաչափություններ

Նախ. տնտեսական քաղաքականության հիմնական տիպերի մասին: Ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսությունում հաջողակ են այն պետությունները և մրցունակ այն տնտեսությունները, որոնք կառավարելի են

և ոչ լիովին մատնված շուկայի տարերքին: Տնտեսության ազատականացման և պետական հովանավորչության, տնտեսության կառավարելիության բաղադրիչների միջև հարաբերակցության այս կամ այն աստիճանն էլ հենց հիմք է պետությունը և նրա տնտեսական ուղեգիծը որպես ավելի ազատական կամ հովանավորչական բնութագրելու համար: Իրականում ավելի ու ավելի հաճախ է առիթ լինում խոսելու ոչ այնքան ազատ առևտրի, որքան նրա համար արդար պայմանների ձևավորման և ապահովման մասին: Տնտեսությունների փոխկախվածության և փոխպայմանավորվածության պարագայում ցանկացած պետության (այդ թվում՝ Հայաստանի) կառավարություն հարկադրված է ընտրություն կատարել, հիմնականում, երկու գլխավոր տեսակի մոտեցումների, տնտեսական քաղաքականությունների միջև՝ հակազդող, արձագանքող (*reactive*) և նախաձեռնող, գերակտիվ (*proactive*):

Շուկայական տնտեսության անզամ ամենակատարյալ մոդելի դեպքում հնարավոր չէ լիովին պատրաստ լինել այն փոփոխություններին, որոնք պայմանավորված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդակներով: Շարունակաբար տեղի են ունենում գործընթացներ, որոնք տնտեսության զարգացման վրա գործում են անմիջական կամ անուղղակի ազդեցություն: Որպես արդյունք՝ պետությունը ուղիներ է որոնում տարաբնույթ երևույթներին հակազդելու, այս կամ այն աստիճանի հասնող տնտեսական սպառնալիքները մեկուսացնելու կամ վնասագերծելու կամ պետությունը ձգնաժամային իրավիճակից դուրս բերելու համար: Այս ամենը բնութագրվում է որպես տեղի ունեցածին արձագանքելու, երևույթներին եղած հնարավորություններով հակազդելու քաղաքականություն: Ըստ որում, երևույթների ի հայտ գալու կամ ձգնաժամային ախտանիշների առաջացման պատճառ կարող է լինել ինչպես բնականոն զարգացումը, այնպես էլ մրցակից պետությունների կամ դրանց խմբերի հրահրումը: Հետևաբար, որքան ժամանակ և ռեսուրսներ են ծախսվում «ձգնաժամներ հրահրելուն», այնքան էլ, եթե ոչ ավելի, պահանջվում է պետությունը դեպի տնտեսական աշխուժացման փուլ ուղղորդելու համար:

Արդի պայմաններում հակազդող քաղաքականությունը բնորոշ է ոչ միայն զարգացող, այլև զարգացած պետությունների գերակշռող մեծամասնությանը (այդ պատճառով մենք չենք բերի ասվածը ապացուցող օրինակներ, դրանք գրեթե համատարած են): Հաճախ ձգնաժամային երևույթները հաղթահարելու համար տարբեր, հատկապես՝ զարգացած պետությունների կառավարությունները միավորում են իրենց ջանքերը, մշակում և իրականացնում հակազդեցության համադրված միջոցառումներ, քայլեր: Մյուս կողմից՝ փոքրաթիվ պետություններ կարող են բնութագրվել որպես նախաձեռնող, գերակտիվ տնտեսական քաղաքականության կողմնակիցներ: Դրանցից առավել հաջողված օրինակներ են Ճապոնիան և Գերմանիան: Եթե Գերմանիան հարկադրված է գործել գերինտեգրված Եվրոպայի խաղի ընդհանուր կանոններով և համեմատաբար քիչ ինքնուրույնություն պահպանել իր քայլերը հաշվարկելու, տնտեսական «սցենարներ» մշակելու համար, ապա Ճապոնիայի տնտեսության նկատելի հզորացումը, առաջին հերթին,

պայմանավորված է կառավարության, մի կողմից՝ հովանավորչական, մյուս կողմից՝ գերակտիվ տնտեսական քաղաքականությամբ:

Մինչ աճում է ամերիկացիների դժգոհությունը՝ կապված ԱՄՆ-ի տնտեսության առանցքային ճյուղերում կառավարման լծակների աստիճանական կորստյան հետ, ինչն արտահայտվում է հիմնականում եվրոպական ու ճապոնական ընկերությունների կողմից առավել շահութաբեր ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերման, դրանց զանգվածային առք ու վաճառքի ձևով, ամերիկյան կառավարությունը, կարելի է ասել, բավարարված է, հիմնականում, այլ երկրներում ամերիկյան ընկերությունների տնտեսական հաջողություններով¹⁷: Դա դիտվում է որպես պետության ներսում գործարար ազդեցությունների վերաբաշխման համար փոխհատուցում: Մինչդեռ համաշխարհային տնտեսության կենտրոններից մեկը՝ Ճապոնիան, շարունակում է իր հաղթարշավը՝ շնորհիվ համաշխարհային տնտեսության մեջ ձևավորվող գլխավոր միտումների ճիշտ գնահատման, դրանց հետագա ընթացքի վերաբերյալ նպատակային կանխատեսումների, որոնք իրենց հերթին հիմք են ծառայում նոր տնտեսական ծրագրերի մշակման և իրականացման համար: Մյուս կողմից՝ Ճապոնիայի կառավարությունն ակտիվորեն աջակցում է տնտեսության գերակա ճյուղերի զարգացմանը, դրանց համար արտաքին նոր շուկաների որոնմանը, արտերկրի ընկերությունների հետ ռազմավարական դաշինքների ստեղծմանը և, որ պակաս կարևոր չէ, հնարավոր մրցակիցների հաջողությունների ուսումնասիրությանը, առևտրային ներկայացուցչությունների, գործարար համաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպմանը և ակտիվ մասնակցությանն աշխարհի գրեթե բոլոր ծայրերում: Այսպիսով՝ գերակտիվ քաղաքականությունը հնարավորություն է ընձեռում ընթացիկ միտումների գնահատմամբ և ճիշտ տնտեսական կանխատեսումներով առավելագույնս իրացնելու տվյալ պետության մրցակցային առավելությունները՝ դրանով իսկ շահեկանորեն տարբերվելով հակազդող, արձագանքող տնտեսական քաղաքականությունից:

Միևնույն ժամանակ, անգամ տնտեսության խիստ վիճահարույց 8-10 % աճն իրականություն համարելու դեպքում չի կարելի ակնկալել ազգային տնտեսության ձևավորում, առավել ևս՝ վերելք: ՀՀ-ում տնտեսական առաջընթացը կարող է ապահովվել միայն արմատական բարեփոխումներով, որակական փոփոխություններով, որոշակի պետական աջակցություն պահանջող լայնածավալ ծրագրերով, որոնք հնարավոր դարձնեն 20-25 %, իսկ առանձին փուլերում նաև 30-35 % տնտեսական աճ: Առաջին հայացքից անհավանական այս թվերն ունեն իրական հիմքեր, հատկապես՝ հանրապետության տնտեսության գլխավոր մրցակցային առավելությունները ներկայացնող գերակա ոլորտներում: Մինչդեռ 8-10 % տնտեսական աճը չի կարող լինել ստեղծված իրավիճակից ելք, քանի որ հնարավորություն չի տա առաջին

¹⁷ *Stu Matthew Slaughter*. U.S. Companies' Success Abroad Fosters Growth at Home New Study Shows (<http://www.theuscibfoundation.org/u-s-companies-success-abroad-fosters-growth-at-home-new-study-shows/>):

հերթին արդյունավետ կերպով սպասարկելու պետության արտաքին պարտքը, ավելացնելու արտահանման կարողությունը և ի վերջո հասնելու նվազագույն, իսկ հետագայում նաև միջին կենսամակարդակի ապահովմանը:

Երկրորդ. կարևորվում են պետության ներքին ռեսուրսների հաշվառումը և գնահատումը: Որքան անհրաժեշտ է հասարակական կարիքների մասնագիտացված դասակարգումը, նույնքան էական են դրանց բավարարման համար օգտագործվելիք ներքին հնարավորությունների մասին ճշմարիտ և ամբողջական տեղեկույթի հավաքումն ու վերլուծությունը: Հատկանշական է, որ վերջին տասնամյակում ներկայացված որևէ փոքր կամ մեծ ծրագրի հիմքում չկան տվյալ ոլորտի կամ ձեռնարկության զարգացման համար անհրաժեշտ ներքին ռեսուրսների մասին քիչ թե շատ հավաստի տվյալներ: Իսկ հավաստի տվյալների հավաքումը և ներկայացումը պետական նշանակություն ունեցող աշխատանք է և կարող է կատարվել միայն պետական ծրագրերի շրջանակներում ու կրել շարունակական բնույթ:

Հանրապետությունում արդեն 12 տարուց ավելի է, ինչ չի ձեռնարկվել արտադրական կարողությունների հաշվառում: Որքան էլ խոսվում է սեփականաշնորհման գործընթացի վնասների մասին, այսուհանդերձ, ոչ ոք ստույգ չի կարող նշել, թե պետության արտադրական կարողության որ մասը փոշիացվեց՝ արտահանվելով որպես «մետաղի ջարդոն», որ մասը կողոպտվեց, և որը մնաց: Իսկ միգուցե ինչ-որ մեկն էլ այս տարիներին, որպես չնչին բացառություն, կարողացավ ավելացնել արտադրական կարողությունը: Ոչ ոք չի կարող ասվածը հիմնավորել թվերով կամ բերել դրա հակափաստարկները: Իրավիճակն ավելի է բարդանում այն առումով, որ արդեն սեփականաշնորհված ձեռնարկությունների տերերին ոչ ոք չի կարող պարտադրել ներկայացնել պետական մարմիններին, օրինակ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը, իրենց ունեցվածքի, հիմնական և շրջանառու միջոցների, այլ հողվածների վերաբերյալ հաշվետվություններ: Մինչդեռ այսօրվա դրությամբ սեփականաշնորհվել է պետության արտադրական կարողության գերակշիռ մասը...

Վատ են հաշվառված նաև հանրապետության ֆինանսական ռեսուրսները: Չկա ստվերում մնացած ֆինանսական ռեսուրսների, իրական խնայողությունների, դրսում պահվող ավանդների և ակնկալվող հնարավորությունների գոնե մոտավոր գնահատական: Չկա վերջին 15 տարում պետության ընդերքի գնահատական: Շահագործվող բազմաթիվ հանքերի մասին տվյալները դեռ սուր մասնագիտական բանավեճերի առարկա են: «Սակավ բնական ռեսուրսներ» ասելով մինչ օրս չգիտենք, թե որ հանածոյից որքան է սակավ կամ ավելի: Առավել ևս՝ պատկերացում չունենք մարդկային ռեսուրսների վերաբերյալ: 2011 թ. հոկտեմբերին անցկացված մարդահամարի կազմակերպիչներին այդպես էլ չհետաքրքրեց, թե ոչ հեռու անցյալում հպարտության առարկա դարձած որակյալ աշխատուժի առումով պետությունում ինչ տեղաշարժ կա¹⁸: Մինչդեռ կարելի էր ի թիվս որոշ պակաս էա-

¹⁸ Տես «Հայաստանի Հանրապետության 2011 թ. մարդահամարի արդյունքները» (<http://www.armstat.am/am/?nid=337>):

կան հարցերի ձևակերպել նաև հաշվառվողի «ի՞նչ մասնագիտություն կամ մասնագիտական որակավորում ունե՞ք» հարցը, որը մեզ կօգնե՞ր կողմնորոշվելու, թե կեղեքի՞չ արտագաղթի հետևանքով, այնուամենայնիվ, հանրապետությունում քանի՞ պիտանի մասնագետ է մնացել, ի՞նչ տարիքի և ո՞ր ոլորտներում: Շրջանցել այս հարցերը չի կարելի, քանի որ առանց ստույգ տվյալների ցանկացած ընթացիկ կամ հեռանկարային տնտեսական ծրագիր կարող է վերածվել բարի ցանկությունների փաթեթի և ինքնախաբեության մի նոր փորձի: Վերջապես, առանց ներքին՝ մարդկային, բնական, նյութական, ֆինանսական և արտադրական, ռեսուրսների պարզման հնարավոր չէ հիմնավորել, թե Հայաստանում հատկապես որ արտադրությունն է ավելի եկամտաբեր, որ ոլորտը կարող է հիմնվել տեղական հումքի, բնական, ֆինանսական, մասնագիտական ներուժի վրա և ինչ չափերով:

Երրորդ. Հայաստանի տնտեսական առաջընթացը, մեր համոզմամբ, պայմանավորված է ոչ միայն հանրապետության, այլև մերձավոր և հեռավոր Սփյուռքի, Արցախի հայության համեմատական և բացարձակ առավելությունների, այլ խոսքով՝ որոշակի չափանիշներով ազգային մրցակցային առավելությունների ճիշտ ընտրությամբ, ինչպես նաև ներքին և արտաքին շուկաներում դրանց արդյունավետ իրացման ուղղությամբ նպատակային տնտեսական քաղաքականության իրականացմամբ: Սահմանափակ ռեսուրսների առկայության պայմաններում մտավոր կարողության՝ որպես ազգային հարստության մի կարևոր բաղկացուցիչ դերի վերաարժեքավորման հետ մեկտեղ, հույժ կարևոր է ընդհանուր առմամբ արդյունաբերության և ծառայությունների գիտատար, քիչ նյութատար ճյուղերի և ենթաճյուղերի արագընթաց զարգացումը: Մի հանգամանք, որը պետության տնտեսությանը կարող է ապահովել առաջատար դեր առնվազն տարածաշրջանում, հատկապես, եթե հաշվի առնենք գիտատար ոլորտների (ներառյալ՝ համակարգչային ծրագրավորման, էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, միջուկային ֆիզիկայի, քիմիայի, կենսաքիմիայի, կենսատեխնոլոգիայի, ճշգրիտ սարքաշինության, մեքենաշինության, բարձր տեխնոլոգիաների և այլ բնագավառների) կարողությունների մինչ օրս թույլ օգտագործվածությունը: Եվ, անշուշտ, այս ամենը կատարել գիտության և տեխնիկայի, տնտեսության և գործարարության ոլորտներում նկատվող նոր զարգացումների հետ ներդաշնակմամբ, ականա մրցակիցների քայլերի ճիշտ հաշվարկմամբ, ճիշտ գործընկերների որոշմամբ, ընդհանուր շահեր հետապնդող պետությունների և ընկերությունների հետ ռազմավարական միությունների ձևավորմամբ:

Չորրորդ. ազգային մրցակցային առավելությունների իրացմանն ուղղված տնտեսական քաղաքականության արդյունավետությունը, ռազմավարական գործընկերների ճիշտ ընտրությունը և ներդրումային աշխուժությունը ուղղակիորեն կախված են վստահության մթնոլորտի գոյությունից, որն արդյունք է օրենքի գերակայության և որոշումների ու պահանջների համընդհանուր պարտադիր կատարման, բոլոր փոքր ու մեծ տնտեսավարող կառույցների համար արդար ձեռներեցության պայմանների ապահովումից: Սա, իր հերթին, հնարավոր է իշխանության ու ժողովրդի միջև ստեղծված անջրպետի

վերացման և պետական կառավարմանը ժողովրդի մասնակցության ապահովման դեպքում, ինչն ավելի պարզ կերպով ձևակերպվում է որպես «ժողովրդավարության կայացում»: Այս պայմաններում հնարավոր է Հայաստանի տնտեսական կյանքում ակնկալել նաև ազգային համախառն եկամտի քիչ թե շատ համաչափ բաշխում, բևեռացման նվազեցում, ստվերային տնտեսության կրճատում, միջին խավի ձևավորում, սոցիալական արդարության սկզբունքների համատարած կիրառում և որևէ այլ պետության քաղաքացիություն ունեցող հայերի մասնագիտական կարողության, գործարար ներուժի մասնակցության առավելագույնս ապահովում՝ առանց կողմնակալության ու ներազգային խտրականության:

Որպես արդյունք՝ կարելի է նաև իրատեսական համարել մոտ ապագայում պետականության կայացումն ու հզորացումը, երկրի տնտեսական անվտանգության, ինչպես նաև աշխատանքի դիմաց արդար փոխհատուցման պայմաններով մարդկանց համար արժանի ապրելակերպի գումարելիների մատչելիության ապահովումը:

Այսպիսով՝ հանրապետության տնտեսական զարգացման հայեցակետը հանգում է հետևյալ ձևակերպմանը.

Հայաստանի Հանրապետությունը, նպատակ ունենալով ազգաբնակչության համար արժանավայել կենսապայմանների, տնտեսական լիարժեք անվտանգության ապահովումը, վարում է գերակտիվ, խիզախ (*ambitious*) տնտեսական քաղաքականություն, որը միտված է ներքին՝ մարդկային, բնական, նյութական, ֆինանսական և արտադրական, ռեսուրսների ի հայտ բերմանն ու դրանց շնորհիվ ներքին և արտաքին շուկաներում տարածաշրջանային և համաշխարհային տնտեսության նոր զարգացումներին ու միտումներին համահունչ ազգային մրցակցային առավելությունների, առաջին հերթին՝ տնտեսության գիտատար ճյուղերի ապրանքների և ծառայությունների առավել արդյունավետ իրացմանը.

- իրավական պետության, իրական ժողովրդավարության կայացմամբ,
- սոցիալական արդարության հաստատմամբ,
- գործարար ոլորտում վստահության մթնոլորտի ձևավորմամբ,
- Սփյուռքի և Արցախի հայության մասնագիտական կարողության մասնակցության ապահովմամբ համակարգված:

ОСОБЕННОСТИ И ПЕРСПЕКТИВЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА

*Т. Н. МАНАСЕРЯН, доктор экономических наук, профессор,
руководитель Исследовательского центра «Альтернатива»*

РЕЗЮМЕ

Аналитическое планирование развития экономики РА должно строиться на базе: трезвой и объективной оценки сложившейся в республике экономической ситуации; диагностирования основных факторов,

препятствующих оздоровлению и развитию экономики; выявления и последовательной реализации национальных конкурентных преимуществ.

В этом аспекте предлагается ряд мероприятий по: обеспечению экономической безопасности государства; улучшению инвестиционного климата; формированию справедливого конкурентного поля; осуществлению проактивной внешнеэкономической политики; созданию эффективных фискальной, финансово-банковской и таможенной систем; сокращению разницы в уровнях социально-экономического развития районов и областей; обеспечению востребованности интеллектуального (образовательного, научного, культурного) потенциала, стимулированию его роста и созданию благоприятных условий для его реализации и материализации; системному реформированию общественного управления. При этом внешняя политика экономического развития должна быть проактивной (pro-active) и инициативной.

THE PECULIARITIES AND PERSPECTIVES OF THE RA ECONOMIC DEVELOPMENT

*T. N. MANASERYAN, Doctor of Economics, Professor,
Head, "Alternative" Research Center*

SUMMARY

The analytical planning of the RA economy should be built upon a sober and objective assessment of the existing economic situation in the state, the diagnosis of the main factors impeding the rehabilitation and development of the economy, the identification and consistent implementation of national competitive advantages.

In this regard, a number of measures are proposed to safeguard the economic security; to improve the invested capital; to form a fair competitive field; to carry out a proactive foreign economic policy; to establish effective fiscal, finance and banking, and customs systems; to reduce the difference between the levels of social and economic development among the districts and localities; to provide for the demand in intellectual (educational, scientific, cultural) potential, promote its growth and create favorable conditions for its realization and materialization; and to systemically reform the public administration. The foreign policy of economic development should be proactive and initiative at that.

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓՈՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Գ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն



Հայաստանի նորանկախ երրորդ հանրապետությունը 25 տարեկան է: Անհատի դեպքում 25 տարին արդեն հասունացման ու կայացման տարիք է: Դա այն տարիքն է, երբ ժամանակն է հստակ կերպով կողմնորոշվելու անելիքների, իր կյանքի հեռանկարների ու «ճանապարհային քարտեզի» առումով: Այս տարիքում սովորաբար արդեն ունենում են հավատարիմ ընկերներ, կյանքի ուղեկիցներ, նույնիսկ զուգընկերներ և, ցավոք, թշնամիներ ու հակառակորդներ:

Տեսնենք, թե ինչ հաջողություններ է ունեցել մեր հանրապետությունը, ինչի է հասել, ինչ է ձեռք բերել և ինչ կորցրել: Փորձենք գնահատել անցած քառորդ դարը, առաջին քառորդ դարը նրա երկար ու երկար կյանքի ընթացքում:

Նախ շեշտենք, որ անկախ հանրապետությունը ծնվեց Խորհրդային Միության փլատակների վրա: Եթե ԽՍՀՄ-ը չփլուզվեր-քանդվեր, մենք նորանկախ Հայաստան չէինք ունենա: Հարյուրավոր տարիներ հայ ժողովուրդը երազել էր կառուցել անկախ պետություն, և այնպես ստացվեց, պատմական ճակատագիրը այնպես կամեցավ, որ դարավոր իղձը ծնունդ առավ մահացող միապետության բեկորների վրա: 1988 թ. Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո հայերը ականատես եղան մի նոր աշխարհացունց երկրաշարժի: Որքան էլ որ ցանկալի ու բաղձալի էր մեր անկախացումը, այդքան էլ այն անսպասելի նվեր էր զարմացած ու մի փոքր վախեցած մեր ժողովրդի համար: 1990–1991 թթ. հասարակական կարծիքի մեր սոցիոլոգիական հարցումները վկայում են, որ հանրապետության բնակչության 28 տոկոսը լուրջ մտավախություններով դիմավորեց անկախությունը:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի պատվերով Հայկական սոցիոլոգիական ընկերակցությունը 1991 թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին Երևանի, Գյումրու, Չարենցավանի և Վարդենիսի 1700 մեծահասակ բնակիչների շրջանում անցկացրեց հասարակական կարծիքի մի ուսումնասիրություն¹: Այն ժամանակ մենք ստացանք հետևյալ պատասխանները.

«ՀԱՐՑ 1. Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ, ժողովրդավարական պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս:

1. Այո - 70,1 %
2. Ոչ - 19,5 %
3. Չգիտեմ - 10,5 %

¹ Տես Գ. Պողոսյան, Հինգ հարց ընթերցողին: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1991 թ. սեպտեմբերի 23:

ՀԱՐՑ 2. Դուք վստա՞հ եք, որ Հայաստանի ղեկավարները կկարողանան ապահովել մեր պատշաճ գոյությունը ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում:

1. Լրիվ վստահ եմ - 28,5 %
2. Ավելի շատ վստահ եմ - 9,4 %
3. Այնքան էլ վստահ չեմ - 27,4 %
4. Բոլորովին վստահ չեմ - 19,8 %
5. Չեմ կարող ասել - 14,9 %»

Ինչպես երևում է հարցման արդյունքներից, մեր քաղաքացիների 47,2 տոկոսը վստահ չէր, որ Խորհրդային Միության կազմից դուրս գալուց հետո Հայաստանի ղեկավարությունը կկարողանա ապահովել մեր պատշաճ գոյությունը: Ավելին. դուրս գալուն դեմ պատասխանած հարցվողների արդեն 84,8 տոկոսը պետության ղեկավարների կարողությունների նկատմամբ չունեի վստահություն:

Ուղիղ քսանհինգ տարի առաջ՝ 1991 թ. մարտին և օգոստոսին, Հայաստանի Գերագույն խորհրդի նախաձեռնությամբ Հայկական սոցիոլոգիական ընկերակցությունը հանրապետությունում անկախության հանրաքվեին ընդառաջ անցկացրեց հասարակական կարծիքի հարցում, որին մասնակցեցին 18 տարեկանից բարձր տարիքի 10 հազար քաղաքացիներ: **«Համաձայն եք, որ Հայաստանը լինի անկախ ժողովրդավարական պետություն»** հարցին ստացվել էին այսպիսի պատասխաններ².

	1991 թ. մարտ			1991 թ. օգոստոս		
	Այո	Ոչ	Դժվ. եմ պատ.	Այո	Ոչ	Դժվ. եմ պատ.
Ընդամենը	68,6 %	15,7 %	15,7 %	63,8 %	18,2 %	19 %

Ստացված արդյունքները վկայում էին, որ ազատության կողմնակիցները տղամարդկանց շրջանում ավելի շատ էին, քան կանանց: Այս հարցում ավագ սերնդի ներկայացուցիչները (45 և բարձր) ավելի զգույշ էին, քան երիտասարդները: Գրեթե բոլոր սոցիալական խմբերում նկատվել էր կողմնակիցների թվի այս կամ այն չափով նվազում:

Պատճառները, ընդհանուր առմամբ, պարզ էին. Արցախի չլուծված խնդիրը, սահմանների անվտանգությամբ պայմանավորված անհանգստությունը, խոր տնտեսական ճգնաժամը, աղետալի երկրաշարժից վնասված բնակավայրերի վերականգնման դանդաղ տեմպերը:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների անջատման գործընթացն այնքան արագ էր տեղի ունենում, որ գրեթե ոչ ոք չէր ուզում նույնիսկ լսել նոր միության ստեղծման մասին: Ինչպես գրել եմ այն ժամանակ, բնակչության մի զգալի մասը համոզված էր, որ Հայաստանը պետք է վերականգնի իր ընդհատված անկախ պետականությունը³: Միևնույն ժամանակ, բնակչության

² Տես *Գ. Պողոսյան, Անկախություն կամ... : «Հայաստանի Հանրապետություն»* օրաթերթ, 1991 թ. սեպտեմբերի 7:

³ Տես նույն տեղում:

մեկ այլ մասը մտավայտություն ուներ երկու հարևան երկրների հնարավոր ազդեցիկ կապակցությամբ:

Ժամանակը ցույց տվեց, որ երկուսն էլ ճիշտ էին. անկախ պետականությունը բաժին հասավ բոլոր 15 խորհրդային հանրապետություններին, իսկ Հայաստանը կարողացավ դիմակայել բոլոր մարտահրավերներին: Անկախությունը, փաստորեն, տրվեց մեզ և մնացածներին ի վերուստ՝ անկախ ներդրված ջանքերից ու նդումներից:

Սակայն ընդամենը մեկ տարի անց՝ 1992 թ., մեր բնակչության մեկ քառորդը ուզում էր վերադարձնել խորհրդային անցյալը⁴: Իհարկե, դա անհնար էր, բայց խոսում էր մարդկանց տրամադրությունների ու գնահատականների մասին: Մեկ տարի առաջ ոմանք վախեցնում էին, թե խորհրդային Միության կազմից դուրս գալուց անմիջապես հետո Հայաստանը կդառնա Թուրքիայի գերին, որ նույնիսկ մեկ շաբաթ ինքնուրույն գոյատևել չի կարողանա: Բոլոր այս վախերն ու սարսափները սին դուրս եկան: Սակայն պետք է ասել, որ այսօր էլ կան մարդիկ, որոնք համարում են, որ Հայաստանն իր անբարենպաստ աշխարհաքաղաքական դիրքի պատճառով չի կարող լինել անկախ պետություն: Ընդհանրապես, կարելի է ասել, որ այսօր բնակչության մոտ մեկ քառորդը բացասաբար է գնահատում անկախության փաստը և գաղափարը: Մեր հարցումներից երևում է, որ այն, ինչ ունենք, քաղաքացիների մի մասը իրական անկախություն չի համարում, քանի դեռ պահպանվում է լուրջ կախվածություն Ռուսաստանից, Եվրոպայից և այլ աշխարհաքաղաքական կենտրոններից:

1993 թ. ամփոփելով երկու տարվա անցած ճանապարհը՝ մեր հարցվածների երկու երրորդը⁵ հանգում էր այն եզրակացության, որ մեզանում իրականում տեղի ունեցավ պարզապես իշխանության հեղաշրջում՝ մի կառավարող վերնախավին փոխարինեց մեկ ուրիշը: Իշխանությունները, պետական վարչակազմը այս խնդրին պատրաստ չէին և, կարելի է ասել, պատմական պահի լրջությանը չէին համապատասխանում: Այստեղ խոսքը ոչ թե առանձին մարդկանց մասին է, այլ պետական կառույցների անձնակազմի փոքր ու մեծ պաշտոնյաների մասին:

Հետագայում մարդկանց մի մասը վախից հեռացավ երկրից՝ սկիզբ դնելով երկարատև արտագաղթի, որը տարիների ընթացքում հանգեցրեց մեր երկրի զգալի բնաթափմանը:

Խորհրդային 70 տարիների ընթացքում մեր հանրապետության բնակչությունը 850 հազարից աճեց՝ հասնելով 3,8 միլիոնի, այսինքն՝ ավելացավ 4,5 անգամ: Մինչդեռ անկախության 25 տարում այն նվազեց գրեթե 1,5 անգամ: Իհարկե, փլատակների վրա նորանկախ պետություն կառուցելը հեշտ գործ չէր: Հայաստանից շատ ավելի լավ վիճակում գտնվող նախկին խորհրդային հանրապետություններն ապրեցին խոր հետընթաց: Օրինակ՝

⁴ Տես *Գ. Պողոսյան*, Աղետ առանց երկրաշարժի: «Փետրուար», 09.12.1992:

⁵ Տես *Գ. Պողոսյան*, Ցանկալի, բայց և անխուսափելի անհրաժեշտություն: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 2011 թ. սեպտեմբերի 22:

երեք մերձբալթյան հանրապետությունները, որոնք խորհրդային ամբողջատիրական կարգերից չվեցին-ձախրեցին դեպի երջանիկ Եվրամիություն, սակայն կորցրեցին իրենց բնակչության 25-30 %-ը և արդյունաբերության մի զգալի մասը:

Մինչդեռ Հայաստանին «բախտ վիճակվեցին» երկրաշարժը, ԽՍՀՄ փլուզումը, Ղարաբաղյան պատերազմը և գրեթե ամբողջական շրջափակումը: Այս չորս աղետներից մեկն էլ բավարար էր, որ ցանկացած պետություն կործանվեր, բայց Հայաստանը դիմակայեց: Ոչ միայն արիաբար դիմակայեց, այլև ունեցավ շոշափելի առաջընթաց: Կործանարար երկրաշարժի վերքերը ամոքեց ու դեռ շարունակում է վերակառուցել քանդված քաղաքներն ու գյուղերը: Ղարաբաղյան պատերազմում ապշեցնող ու համոզիչ հաղթանակ տարավ: Ազատագրեց Արցախն ու ապահովեց նրա անվտանգությունը և ստիպեց թշնամուն՝ Ադրբեջանին, գնալ զինադադարի՝ զիջելով իր տարածքի մոտ 20 %-ը:

Հայաստանը 25 տարի շարունակ միայն իր ուժերով ապահովում է հրադադարի ռեժիմը: Արիւյան Չորսօրյա պատերազմը ակնառու կերպով ցույց տվեց ամբողջ աշխարհին, թե ինչպիսի վտանգներ ու սպառնալիքներ է կանխում հայ զինուժը՝ ապահովելով մեր տարածաշրջանի անվտանգությունը: Երիտասարդ Հայաստանը մենակ, զուտ իր ուժերով, իսկական զինվորի արիությամբ ու խիզախությամբ վճռականորեն կասեցնում է հակառակորդի բոլոր ագրեսիվ քայլերը՝ դրանով իսկ բացառելով նոր տարածաշրջանային պատերազմի հրդեհի բռնկումը: Սա անտեսել ու չգնահատել պարզապես հնարավոր չէ:

Ռուսաստանն ընդամենը մեկ տարի ապրեց արևմտյան պատժամիջոցների պայմաններում և արդեն զգում է լուրջ տնտեսական ու քաղաքական դժվարություններ: Մինչդեռ Հայաստանը 25 տարի դիմակայում է դաժան շրջափակման ու նախապատերազմական պայմաններին: Կասկած չկա, որ մեր քառորդ դարի անկախ պետականության լավագույն ու մեծագույն ձեռքբերումը մեր բանակն է, հայ զինվորը: Հայոց բանակը միակ կառույցն է, որի նկատմամբ մեր ժողովուրդը տածում է ամենաշատ վստահություն: Մեր բոլոր հարցումների արդյունքներով հասարակությունը ամենից շատ վստահում է բանակին: Մեր բանակը, իհարկե, միակ պետական կառույցը չէ, բայց այսօր նա դրանցից ամենակայացածն է: Հայերն ազատագրեցին Լեռնային Ղարաբաղը և մի շարք հարակից շրջաններ: Վերջին մի քանի հարյուրամյակներում դա հայերի ամենամեծ ռազմական հաղթանակն է:

Հասարակական կարծիքի մի քանի տարիների մեր սոցիոլոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ մեր ժողովուրդն իրոք վստահում է բանակին: Ավելի շատ բանակին է վստահում, քան դատախազությանը, դատարաններին, ոստիկանությանը, կառավարությանը, Ազգային ժողովին և նույնիսկ՝ եկեղեցուն:

Մի կողմից՝ սա միանգամայն հասկանալի է. Հայոց բանակը հաղթանակած բանակ է: Բացի այդ, մի շարք փորձագետների վկայությամբ հայկական

բանակը այսօր տարածաշրջանում ամենակազմակերպվածն է, Հայաստանն էլ իր բանակի մարտունակությամբ հետխորհրդային պետությունների շարքում երկրորդն է՝ Բելառուսից հետո:

Հայաստանի ու Ղարաբաղի բանակներն ուժեղ են ոչ թե թվաքանակով, այլ որակով: Արտասահմանյան փորձագետների կարծիքով՝ հայաստանյան ու Ղարաբաղյան բանակներում պատրաստականության մակարդակը և մարտական ոգին ավելի բարձր են, քան Ադրբեջանի բանակում: Հայկական բանակի սպայական կազմն ավելի լավ է պատրաստված:

Մեր բանակը միշտ մարտունակ է, նա ոչ մի րոպե չի թուլացնում իր զգուճությունն ու մարտական պատրաստվածությունը: Հայոց բանակի կարևոր առանձնահատկությունն այն է, որ նա իրականացնում է շուրջօրյա մարտական հերթափոխ: Բոլորին հայտնի է, որ այսօր Ադրբեջանն ահռելի գումարներ է ծախսում իր բանակի վերագինման համար: Գրեթե բոլոր զինատեսակներով, սպառազինության ու ռազմական տեխնիկայի միավորներով և մի շարք կարևոր քանակական ցուցանիշներով Ադրբեջանի բանակը գերազանցում է Հայաստանի բանակին:

Ռազմական մասնագետներին այս ամենը քաջ հայտնի է բոլոր մանրամասնություններով: Սակայն հայտնի է նաև այն հանգամանքը, որ բանակի մարտունակությունը որոշվում է ոչ միայն սպառազինությամբ, զենքով ու մետաղով, այլև (ինչը եթե ոչ ավելի, ապա առնվազն պակաս կարևոր չէ) մարտական ոգով, անձնակազմի պատրաստականությամբ, բանակի կազմակերպվածությամբ, զինվորի վճռականությամբ ու հայրենիքին նվիրվածությամբ: Չմոռանանք, որ ռազմական տեխնիկան սպասարկում են մարդիկ՝ զինվորներն ու սպաները, և հենց այդ մարդկային գործոնն է, որ վճռորոշ դեր է խաղում բանակի հաղթականության գործոն: Հայոց բանակի մարտունակ ոգին հույժ կարևոր գործոն է: Դա այն գաղտնի և, միևնույն ժամանակ, լավ հայտնի զենքն է, որով զինված են Հայաստանի ու Ղարաբաղի բանակները:

Այստեղ տեղին է հիշեցնել Նժդեհի խոսքը. «Խոտան պիտի հռչակել այն բոլոր տեսությունները, որոնք հաղթանակը միշտ էլ նվիրում են այն կողմին, որը մի զինվոր, մի թնդանոթ, ամրաշինական մի կառուցվածք ավելի ունի»⁶: Նժդեհը մեծապես կարևորում էր զինվորականության բարոյահոգեբանական պատրաստվածությունը և բանակի ղեկավար կազմի անհատական որակները: Ինչպես ինքն էր նշում, հաղթանակ են տանում դեռ կռիվը չսկսած. նախ՝ բարոյապես, նախ՝ հոգիների մեջ⁷:

Հայաստանի նման աշխարհաքաղաքական վիճակում գտնվող պետության համար հզոր բանակ ունենալը պարզապես գոյատևման խնդիր է: Բոլորս քաջ գիտակցում ենք, որ այսօր առանց ամուր բանակի Հայաստան պետություն չի լինի: Չենք ունենա բանակ՝ կկորցնենք երկիրը:

⁶ Տես *Գարեգին Նժդեհ*, Երկեր, հ. 1: Ե., 2002, էջ 283:

⁷ Տես *Վարդան Աթոյան*, Գարեգին Նժդեհի ուսմունքը. հավիտենաբժեք դասեր: Ե., 2011, էջ 73:

Սակայն մեր բանակում, ինչպես և մեր ամբողջ հասարակությունում ամեն ինչ չէ այնպես, ինչպես ցանկալի կլիներ: Իհարկե հասկանալի է, որ եթե մեր հասարակությունում ու պետությունում կան լուրջ արատներ, ապա մեր բանակը նույնպես, հնարավոր չէ, որ նման արատներից զուրկ լինի: Հայոց բանակը հայ ժողովրդի ծոցից է: Հասկանալի է, որ ինչպիսի հասարակություն ունենք, այդպիսին էլ բանակը պետք է լինի:

Միանգամայն իրավացի են նրանք, ովքեր համարում են, որ բանակում երբեմն պատահող արտակարգ միջադեպերը պետք չէ լայն հրապարակային քննարկման առարկա դարձնել: Բանակը այն ոլորտը չէ, որում կարելի է բացեիքաց ամեն ինչ քննարկել: Սակայն միայն մեկ պայմանով. եթե բանակն ինքն իր թերությունները բացահայտի և օպերատիվ կերպով վերացնի: Եթե դա տեղի ունենա, ապա հասարակության միջամտությունն ավելորդ կլինի:

Կա նաև մեկ այլ կարևոր հանգամանք. բացասական բարքերի մասին թերթերում գրեն, թե չգրեն, միևնույն է, մեր ժողովուրդն այդ ամենին լավատեղյակ է: Չէ՞ որ այդ ժողովրդի զավակներն են բանակում ծառայում: Մարդիկ, որոնք ծառայել են կամ որոնց որդիները ծառայում են բանակում, ամեն ինչի մասին շատ լավ տեղյակ են: Իր ժողովրդից ոչինչ թաքցնել հնարավոր չէ:

Մեր բանակին հասարակության վերաբերմունքը ձևավորվում է ըստ այն բանի, թե ինչպես են բանակում վերաբերվում իր զավակներին, հայ զինվորներին: Մեր ժողովուրդը, հասարակությունը նախ պետք է համոզված լինեն, որ հայրենիքի պաշտպանն իր հերթին լավ պաշտպանված է, որ բանակում նրա առողջության ու արժանապատվության նկատմամբ ոչ մի ոտնձգություն չի լինում: Ջինվորի ծնողը, որը մեր հասարակության մասնիկն է, պետք է հանգիստ ու վստահ լինի, որ հայրենիքը պաշտպանող իր զավակը գտնվում է լավ ձեռքերում: Հասարակությունը պետք է տեսնի, թե ինչպես է ապրում հայ զինվորը մեր բանակում: Եթե այդ թափանցիկությունը չկա, ապա սկսում են բանակի մասին տարբեր ասեկոսեներ տարածվել, պատմություններ հորինվել: Չավակապաշտ հայ ծնողը պետք է չվախենա, չխուսափի որդուն բանակ ուղարկելուց, այլ նույնիսկ հակառակը՝ պարծենա այն բանով, որ իր զավակը ծառայում է հայ բանակում: Հենց այս պարծանքը պետք է բոլորիս նպատակը դառնա՝ թե՛ հասարակության, թե՛ բանակի:

Մեր հանրային գիտակցությունը կարճ ժամանակում ապրել է լուրջ էվոյուցիա՝ նոր կարգերի քաջալերումից մինչև հիասթափություն և քաղաքական ապատիա: Դժգոհություն ու հիասթափություն իշխանություններից, ինչպես նաև ընդդիմությունից, նույնիսկ անկախության՝ դարեր շարունակ փափագած գաղափարից: Ինչով, եթե ոչ խորը հիասթափությամբ կարելի է բացատրել բնակչության մի զգալի հատվածի անտարբերությունը որևէ կուսակցության նկատմամբ⁸: Ընդդիմությունը մնաց առանց զանգվածային աջակցության: Փոխարենը՝ ժողովուրդն ապրեց խորը քաղաքական օտարվածություն:

Երկարատև գոյապայքարը առաջացրել էր հասարակության սոցիալա-

⁸ Տես Գ. Պողոսյան, Ցանկալի, բայց և անխուսափելի անհրաժեշտություն:

կան հոգնածություն և, որպես հետևանք, անտարբերություն ամեն ինչի նկատմամբ: Լայն տարածում ունեին կարոտաբաղձական տրամադրությունները և սոցիալիստական հավասարեցման գաղափարները:

Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները ցույց էին տալիս, որ զանգվածային գիտակցության մեջ «ուժեղ ձեռքի», ուժեղ իշխանության վերադարձի պահանջ կար: Նման իրավիճակի հետագա խորացումն ու զարգացումը հանգեցրեցին «տոտալիտար կոնվերսիայի», կամ ավտորիտար իշխանության վերականգնմանը:

Կենսամակարդակի աղետալի անկումը և տնտեսական ճգնաժամը համընդհանուր բնույթ էին կրում: Հայաստանի պես դաժան շրջափակման մեջ գտնվող, աղետալի երկրաշարժի վերքերը չամոքած, Ադրբեջանից 350 հազար փախստականների հոգսը շալակած ու շարունակ պատերազմի մեջ գտնվող պետությունն այդ պայմաններում հաղթող դուրս եկավ ու պահպանեց իր ներքին քաղաքական կայունությունը, թեև սոցիալական իրավիճակը շարունակում էր մնալ լարված⁹:

90-ական թվականներին պետությունում սկիզբ առած տնտեսական բարեփոխումները մեծ թափ ստացան, նկատվեց փոքր բիզնեսի ու մասնավոր առևտրի լուրջ աշխուժացում: Սակայն շուտով տեղի ունեցավ անկում՝ շրջափակման, վարչական ապարատի վերահսկող մարմիններում տեղ գտած կոռուպցիայի և կաշառակերության պատճառով: Հայաստանում հաստատվում էր շուկայական տնտեսության վատթարագույն՝ ասիական, մոդելը, երբ խոշոր տնտեսության գայլերը հեշտությամբ կուլ էին տալիս ու ասպարեզից դուրս նետում փոքր մասնավոր բիզնեսի հատկապես քաղաքակիրթ ձևերը: Շուկայում տեղի էր ունենում մենաշնորհի զարգացում: Խոշոր բիզնեսը փոխշահավետ կապեր էր հաստատել իշխանության ցածր վարձատրվող օղակների հետ:

Տեղի ունեցավ հասարակության ուժեղ բևեռացում: Մի կողմից՝ հարյուրհազարավոր մարդիկ ընկան աղքատության գիրկը, մյուս կողմից՝ առաջ եկան տասնյակ նորաթուխ մեծահարուստներ: Պետության արագ ասիականացմանը նպաստում էին շրջափակումը, տնտեսական ճգնաժամն ու անվերջ շարունակվող պատերազմը, որը նույնպես որոշ մարդկանց համար եկամուտների աղբյուր էր ծառայում: Հազարավոր մարդիկ ստիպված էին ընտրել արտագաղթի ճանապարհը: Մեր հարցումներով՝ բնակչության 40 %-ը հոգեբանորեն պատրաստ է հեռանալու երկրից, եթե լինի հնարավորություն¹⁰: Ցեղասպանությունից հարյուրամյակ անց վերջապես զոհի հոգեբանական բարդույթն իր մեջ հաղթահարած, թուրքերի դեմ հիվանդագին սարսափը ազգային գիտակցությունից վանած ժողովրդին վայել չէր բռնել արտագաղթի ու ինքնահիասթափության ուղին:

Արևմուտքի դեղատոմսերով իրականացվող ժողովրդավարական վերափոխումը իրականում բերեց ոչ թե ազատ շուկայի ստեղծման, այլ տիպիկ

⁹ Տես *Գ. Բոգոսյան*. Современное армянское общество. Особенности трансформации. М., 2005:

¹⁰ Տես *G. Poghosyan*. Armenian Migration. Yerevan, 2014:

ասիական հարաբերությունների զարգացման, որը բնորոշ է փոքր, թեր-զարգացած պետություններին: Սակայն քաղաքական հարաբերություններում ժողովրդավարական նորամուծություններն ավելի խորը սերմանվեցին և առայժմ պահպանվում են: Մամուլի ու խոսքի ազատությունը դրա լավագույն վկայությունն է: Իշխանության կուլիսներում նույնպես պայքար է գնում իրական ժողովրդավարական կարգեր հաստատելու մեջ շահագրգռված ուժերի և ապագային դեմք ունեցող, ամեն գնով հարստանալու նպատակ հետապնդող ուժերի միջև¹¹:

Անկախության ձեռքբերումներից ամենակարևորները, իհարկե, ռազմական հաղթանակն ու Արցախի անկախացումն էին, ինչպես նաև մեր անկախ պետականության հետագա ամրապնդումն ու զարգացման երաշխիքը:

Մոտավոր ձևով կարելի է տալ ՀՀ-ում իրադարձությունների ապագա զարգացումների երկու սցենար.

1. Անբարենպաստ սցենար

Ոչ մի լուրջ փոփոխություն տեղի չի ունենա: Պետությունը կշարունակի իր գոյությունը հարևանների հետ մշտական ընդհարումների, զինված բախումների պայմաններում: Բնակչության կենսամակարդակը կմնա ցածր, Հայաստանը կվերածվի հետամնաց կապիտալիստական պետության, առանց իր հումքի ու ռեսուրսների: Կարող ուժերը կմեկնեն պետությունից, կդիտվի աշխատուժի մշտական արտահոսք: Չի հաջողվի հաստատել օրենքի ուժը, և կհաստատվի ուժի օրենքը: Անկախ Հայաստանի ժողովուրդը մի կերպ կպահպանի իր գոյությունը, իսկ մեծահարուստները շրայլ կյանք կվարեն:

2. Բարենպաստ զարգացում

Տնտեսական իրավիճակը գնալով կբարելավվի, բնակչության կենսամակարդակը կբարձրանա, տեղի կունենա ներքին քաղաքական իրավիճակի կայունացում, պատերազմի վտանգը կվերանա: Հայաստանը դուրս կգա շրջափակումից և հարևան պետությունների հետ արագ կերպով կզարգացնի բարիդրացիական հարաբերություններ: Քաղաքակիրթ պետությունների համակարգում մենք կզբաղեցնենք մեզ արժանի տեղը: Իշխանությունների ու ժողովրդի միջև կհաստատվի փոխվստահության մթնոլորտ, ազգանպաստ համագործակցություն, որին կմիանան նաև վերափոխված Սփյուռքը և անկախ Արցախը:

Իրականում այս տարբերակներից երկի թե ոչ մեկն էլ լիովին չիրականանա, հավանաբար կյանքի կկոչվեն դրանց առանձին կողմերը: Ինչպես այսօր տեսնում ենք, մեր կանխագուշակումներն այնքան էլ հեռու չեն արդի իրականությունից: Հայաստանյան զարգացումները քառորդ դարում բերեցին մի վիճակի, որը կարելի է ասել «հոռետեսականից» լավ է, բայց «լավատեսականին» չի հասել: Առայժմ չի հասել:

Անցած դարի 90-ական թվականների առաջին տարիների ծանրագույն լարվածությամբ, զրկանքներով, անմարդկային պայմաններին հերոսաբար

¹¹ Տես *Գ. Պողոսյան, Հայ հասարակությունը XXI դարասկզբին: Ե., 2006, էջ 236–239:*

դիմակայելով՝ հայ ժողովուրդն իր գավակների մարտական սխրագործությունների ու կյանքի գնով նվաճեց Արցախի ազատությունը և հաստատեց իր պետական անկախությունը: Այսօր մեզ համար պարզ է, որ դա մեր նորագույն պատմության անջնջելի էջերից է:

Հայ ժողովրդի պատմության մեջ 20-րդ դարի հատկապես վերջին տասնամյակը ապագա պատմաբանները կգնահատեն որպես «ոսկե դար»: Պատմական հեռադիտակով ուսումնասիրելով այդ ժամանակաշրջանը՝ նրանք կտեսնեն, որ **հայերին հաջողվեց ունենալ երեք հսկա, դարաշրջիկ ձեռքբերում. վերականգնել ու պաշտպանել Հայոց անկախ պետականությունը, ազատագրել Արցախ աշխարհը և միջազգայնացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրը:**

Իսկ մնացած բոլոր այն խնդիրները, որ այսօր մեզ հուզում են՝ բնակչության արտագաղթը, սոցիալական բևեռացումը, ցածր կենսամակարդակը, կոռուպցիան, պատերազմի վտանգը, օրինականության պակասը, արդարության նվազումը, բարոյական հետընթացը և շատ ու շատ այլ արատներ, հեռավոր ապագայի տեսանկյունից գուցե թվան անխուսափելի մանրուքներ: Դրանք միզուցե միայն այսօրվա մանրադիտակով են թվում հսկայական:

Հուսանք, որ այդպես էլ կլինի, և մեր այսօրվա կյանքի կնճռոտ ծալքերը առաջիկա 25 տարիներին կհարթվեն ու կմոռացվեն:

ОБЩЕСТВЕННОЕ ВОСПРИЯТИЕ ИДЕИ ГОСУДАРСТВЕННОСТИ В РА

Г. А. ПОГОСЯН, академик НАН РА, директор Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Третья Армянская республика сформировалась на руинах Советского Союза. На заре своей независимости Армения находилась в тяжелейшем положении: неустраненные последствия Спитакского землетрясения, Карабахская война, почти полная транспортно-экономическая блокада, обусловленная низкими уровнями жизни и социальной справедливости эмиграция и т. д. Однако Армения, находясь в более трудном положении, чем многие другие бывшие союзные республики, благодаря самоотверженности и стойкости армянского народа, сумела преодолеть все препятствия и обеспечить развитие демократических институтов независимой государственности и экономики. Четвертьвековой период независимости ознаменовался тремя крупнейшими достижениями: восстановлением независимой армянской государственности, освобождением Нагорного Карабаха и формированием независимой НКР, интернационализацией процесса признания Геноцида армян.

Жизнеспособность независимого армянского государства в общественном сознании была привязана к наличию сильной, хорошо вооруженной и боеспособной армии. Из всех государственных институтов

победоносная армянская армия пользуется наибольшим доверием армянского общества.

Несмотря на протестные настроения, разочарованность или политическую апатию некоторой части общества, обусловленную низким социально-экономическим уровнем жизни, обнищанием значительного слоя населения, экономический кризис, факты несоблюдения социальной справедливости, наметившиеся в последнее время в республике, демократические преобразования внушают обществу уверенность в недалеком будущем.

PUBLIC PERCEPTION OF THE IDEA OF STATEHOOD IN THE RA

G. A. POGHOSYAN, Full Member, NAS, RA, Director, Institute of Philosophy, Sociology and Law, NAS, RA

SUMMARY

The Third Armenian Republic was established on the ruins of the Soviet Union. At the dawn of its independence Armenia was in gravest conditions: the unsettled consequences of the Spitak earthquake, the Karabakh War, almost a total transport and economic blockade, emigration due to low living standards and social injustice, etc. However, Armenia, being in a much more difficult situation than many other post-Soviet republics, managed to overcome all the obstacles and ensure the development of democratic institutes of the independent statehood and economy thanks to the dedication and perseverance of the Armenian people. A quarter century-long period of independence was signified by three major achievements: restoration of the independent Armenian statehood, liberation of Nagorno-Karabakh and establishment of the independent Nagorno-Karabakh Republic, and internationalization of the process of the recognition of the Armenian Genocide.

In public conscience the viability of the independent Armenian state was related to the existence of strong, well-armed and combat-effective armed forces. From among all the state institutes, it is the victorious Armenian Army, which enjoys the most confidence of the Armenian society.

Despite the protest moods, disappointment and political apathy among some part of the society, caused by the low level of social and economic life, impoverishment of a considerable segment of the population, the economic crisis, and evidences of non-compliance of social justice, the democratic transformations emerging in the RA recently fill the society with confidence in the near future.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ


Դրվագներ զորահանդեսից.
Երևան, 2016 թ. սեպտեմբերի 21



Ջորահանդեսի տրիբունայում. ձախից՝ աջ.
ՀՀ Հատուկ հանձնարարություններով դեսպան Արկադի Ղուկասյան,
ՀՀ ՋՈՒ-ի ԳԾ պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրով,
ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան,
Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյան,
Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ,
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա,
Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյան

Անկախությունը պաշտպանող երկու սերունդ՝
ՀՀ ՋՈՒ-ի զինծառայողները և Արցախյան ազատագրական պայքարի
մասնակից կամավորները Հանրապետության հրապարակում





«Իսկանդեր» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրներ



ՀՀ-ում արդիականացված «Սկադ» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրներ



«U-300» զենիթահրթիռային համալիրներ



«Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր

ԱՐՑԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԼՂՀ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Պ. Ա. ՉՈՔԱՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀԻ-ի ԱՌՀԻ-ի ավագ գիտնական-վերլուծաբան,
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

Արցախում պետականության ավանդույթներն ունեն ավելի քան հազարամյա պատմություն: Մեծ Հայքի արևելյան նահանգներ Արցախը և ՌԻտիքը Հայոց պետականության զարգացման բոլոր փուլերում եղել են Հայաստանն ու Արևելյան Այսրկովկասը՝ Բուն Աղվանքը, կապող օղակ և առաջինն են դիմագրավել արևելքից բխող բոլոր մարտահրավերներին ու սպառնալիքներին:



Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո նոր կրոնը տարածում ստացավ նաև Կուր գետի ձախափնյա տարածքներում գտնվող Բուն Աղվանքում: Աղվանքի թագավորի խնդրանքով Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց Աղվանից գրերը¹, ինչի շնորհիվ ավելի մեծացավ հայկական հոգևոր-մշակութային ու ռազմաքաղաքական ազդեցությունը Կուրից դեպի հյուսիս գտնվող տարածաշրջանում բնակվող ցեղախմբերի վրա:

Սակայն հինգերորդ դարում՝ Սասանյան Պարսկաստանի գերիշխանության պայմաններում, Հայաստանում և Աղվանքում վերացվեցին թագավորությունները և ստեղծվեցին պարսկական պետության կազմի մեջ մտնող մարզպանություններ²: Հայաստանի Արցախ և ՌԻտիք նահանգները կցվեցին Աղվանից մարզպանությանը: Աղվանից մարզպանության կազմում Բուն Աղվանքի հետ գտնվելու հետևանքով սկզբնավորվեցին նրանց՝ որպես այսպես կոչված «Հայոց Արևելից Կողմանք», կամ «Հայկական Աղվանք», ընկալումն ու նաև «Աղվանք» անվանման գործածությունը հայկական Արցախի և ՌԻտիքի նկատմամբ, իսկ Արցախը և ՌԻտիքը վերածվեցին նորաստեղծ մարզպանությունում քրիստոնեության պահպանման երաշխավորի³:

Աղվանքի քրիստոնեական եկեղեցական կառույցի մեջ հիմնական դերակատարումը աստիճանաբար անցավ հայկական հոգևոր իշխանություններին, որոնք իրենց տիրապետությունը և դիրքը պահպանելու համար օգտագործեցին նաև «Աղվանից» անվանումը:

¹ Տես *Կողյուն*, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի: Ե., 1994, էջ 50–52, նաև՝ *Պ. Մուրադյան*, Կովկասյան Աղվանքի գրչությունը, լեզուն և դպրությունը: «Պատմա-բանասիրական հանդես», 2005, հմ. 2:

² Տես *А. А. Акопян*. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Е., 1987:

³ Տես *Ա. Մնացականյան*, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ: Ե., 1966, նաև՝ *Յ. Անասեան*, Նոր հայեացք աղուանագիտութեան բնագավառում: Վենետիկ, 1969, էջ 289–315:

Այդ իրավիճակը շարունակվեց նաև 7-րդ դարից հետո, երբ տարածաշրջանում զրադաշտական Իրանին փոխարինեց մահմեդական արաբական խալիֆայությունը: Արաբական նվաճումներից հետո դադարեց գոյություն ունենալուց Աղվանից մարզպանությունը, և տարածաշրջանն սկսեց կառավարվել խալիֆայության նշանակած ոստիկանների միջոցով:

Արաբական խալիֆայության թուլացմանը զուգահեռաբար կրկին հզորանում են տեղական իշխանական տների ձգտումները դեպի անկախություն: Եթե արաբական լուծը թոթափելուն ուղղված պայքարի ընթացքում Հայաստանում վերելք են ապրում Բագրատունիները, Արծրունիներն ու Սյունյաց իշխանները, ապա Բուն Աղվանքն ընդգրկող Արևելյան Այսրկովկասում աստիճանաբար ամրապնդվում են արաբ կառավարիչների դիրքերը, իսկ Առանում (Արցախ-Ուտիք) շարունակում են իրենց դիրքերը պահպանել այսպես կոչված Առանշահիկները, որոնք Արցախ-Ուտիքի բնիկ իշխանական տոհմերի ներկայացուցիչներն էին: Մինչդեռ Բուն Աղվանքում, այսինքն՝ Շիրվանում և Դերբենդում, հաստատվեց արաբական շայբանի ցեղախմբի ներկայացուցիչ, Արմինիայի կառավարիչ Յազիդ իբն Մազյադից (վախճանվել է 801/802 թ.) սերող Յազիդյանների ժառանգական իշխանությունը (861 թ.), որոնք իրենց անվանում էին Շիրվանշահեր:

Մահմեդական դավանանքի արաբ կառավարիչների տիրապետության պայմաններում երկրամասի Արցախ-Ուտիքի և Բուն Աղվանքի քրիստոնյա բնակչության հոգևոր ու քաղաքական շահերը պաշտպանում էին Արցախի և Ուտիքի հայոց հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները, մասնավորապես՝ Չողից Ուտիք (Պարտավ), ապա Արցախ (Գանձասար) փոխադրված Աղվանքի կաթողիկոսարանը:

Ինչպես Սասանյանների, այնպես էլ արաբական տիրապետության շրջանում Արցախի և Ուտիքի հայ իշխաններն իրենց մասնակցությունն էին ունենում Կովկասի սահմանների պաշտպանության գործում⁴:

Արաբական խալիֆայության թուլացմանը զուգընթաց 9-րդ դարի սկզբից Արցախում և Ուտիքում, ինչպես բուն Հայաստանում, Վրաստանում և Շիրվանում, աստիճանաբար ամրապնդվում են տեղի իշխող դասի դիրքերը, այստեղ նախադրյալներ են ստեղծվում հայկական անկախ պետականություն ձևավորելու համար: Այն, որ Աբբասյան խալիֆայությունը ճանաչեց տեղական հողատերերի ժառանգական իրավունքները, տեղի ավատատերերի հզորացման վկայությունն էր:

837 թ. Խաչենի իշխան Սահլ Սմբատյանն իր տիրույթներում ձերբակալեց Ատրպատականի ապստամբ առաջնորդ Բաբեկին և նրան արաբների հանձնելու դիմաց նշանակվեց Արմինիայի կառավարիչ:

Հանուն ինքնիշխանության հաստատման մղվող պայքարը կասեցնելու նպատակով ձեռնարկած արշավանքներից հետո արաբ զորավար Բուղան 855 թ. բազմաթիվ հայ իշխանների հետ գերեվարեց նաև Սահլին և նրա որդի

⁴ Տես Ս. Գ. Բարխուդարյան, Դերբենդի Հայ-աղվանական թագավորությունը: «Պատմա-բանասիրական հանդես», 1969, հմ. 3:

Ատրնեբսեհին*։ 861 թ.՝ Սուրբավաքիլ խալիֆայի սպանությունից հետո, Ատրնեբսեհը ազատ արձակվեց ու վերադարձավ հայրենիք։

Ատրնեբսեհի որդի Գրիգորն իր իշխանությունը տարածեց նաև Գարդման գավառի և հարակից տարածքների վրա, Գրիգորի որդիներից Սահակ Սևադան Ռփտիքում հիմնադրեց Փառիսոսի թագավորությունը։ Ինքնիշխան դարձան Խաչենը, Շաքի-Հերեթը և Գորոզուն՝ հարավային Արցախում։ 10-րդ դ. կեսին Բյուզանդիայում ևս գիտեին Խաչենի իշխանության անկախ կարգավիճակի մասին։ Կոստանդին Ծիրանածին կայսեր «Արարողությունների մասին» երկում Բյուզանդիայի արքունիքից առաքվող նամակների հասցեատերերի թվում է նաև Խաչենը. «Խաչենի իշխանին՝ Հայաստան»⁵։ 10-րդ դարում ամրապնդելով իրենց ինքնիշխանությունը՝ Արցախ-Ռփտիքի հայկական իշխանապետությունները սերտ հարաբերություններ էին հաստատել Հայաստանի Բագրատունյաց Անիի, Լոռու և Կարսի թագավորությունների, Վրաստանի և Շիրվանում ու Դերբենդում կազմավորված արաբական իշխանապետությունների հետ։

11-րդ դարի կեսերից դիմակայելով սելջուկյան արշավանքների արհավիրքներին և տևական հակամարտության մեջ գտնվելով նաև Գանձակում հաստատված Շաղաղայան տոհմի հետ՝ Արցախ-Ռփտիքի թագավորությունները աստիճանաբար անկում ապրեցին։ Հայաստանում սկիզբ առած արտագաղթը ներառեց նաև Արցախ-Ռփտիքը, որտեղից արևմուտք տեղափոխվեց, մասնավորապես, նաև Օշին իշխանը՝ հաստատվելով Կիլիկիայի Լամբրոն ամրոցում⁶։

Սելջուկյան միասնական պետության տրոհումից հետո Վրաստանի հզորացմանը զուգահեռաբար իրենց տիրապետությունն ընդարձակող Ջաքարյան իշխանների աջակցությամբ Արցախ-Ռփտիքի հայկական իշխանությունները վերականգնեցին իրենց երբեմնի հզորությունը և ամրապնդեցին դիրքերը, ինչը կարևոր նշանակություն ունեցավ նոր արհավիրքներին հաջողությամբ դիմագրավելու գործում։ Արցախը կրկին վերածվեց Արևելյան Այսրկովկասում քրիստոնեական հոգևոր դասի առաջնորդարանի ու կաթողիկոսության կայուն նստավայրի՝ հանդես գալով քրիստոնյա բնակչության շահերի ու անվտանգության պաշտպանի հավակնություններով⁷։

Խաչենում իրենց տոհմական ժառանգական իշխանությունն են պահպանում Առանշահիկները, ծագում են Հասան-Ջալալյան և Դոփյան իշխանական տները։ 13–15-րդ դարերում՝ Ջալալ ադ Դինի, ապա և մոնղոլական ար-

* Պատմիչները նրան կոչում են «իշխան Աղուանից», «գմեծ իշխանն...», որ բնակեալ էր յամրոցին Խաչենույ», «իշխանն Խաչենույ»։

⁵ Տես «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, Գիրք II»։ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. 6. «Բյուզանդական աղբյուրներ», հ. Բ. «Կոստանդին Ծիրանածին»։ Թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի։ Ե., 1970, էջ 151։

⁶ Տես «Սամուէլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց»։ Յառաջաբանով, համեմատությամբ, յայտնուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքէլեանի։ Վաղարշապատ, 1893, էջ 117։

⁷ Տես Բ. Ա. Ռիլորաթյան, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում։ Ե., 1975, էջ 124–170, նաև՝ Ա. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը։ Ե., 1991։

շավանքների ժամանակաշրջանում, Խաչենի իշխանական տան ներկայացուցիչները, ինչպես տարածաշրջանի մյուս պետությունների ու իշխանությունների տերերը, որոշակի հարկային պարտավորությամբ պահպանեցին իրենց տիրապետությունը, շարունակեցին հոգևոր-մշակութային ու ռազմաքաղաքական ճկունությամբ ապահովել իրենց տիրույթների անվտանգությունը⁸: Այդ գործն ավելի էր դժվարանում այն պատճառով, որ Ղաշտային Արցախը հարմար ծնեռանոց էր տարածաշրջան ներխուժած և իրենց կայուն բնակատեղին չունեցող լենկթեմուրյան, ապա և թուրքմենական ցեղախմբերի ու զորախմբերի համար, ինչը ծանր բեռ էր Արցախ-Ուտիքի բնակչության ուսերին և մեծապես խոչընդոտում էր Արցախի տնտեսական զարգացմանը⁹, թեև թուրքմենական ցեղախմբերի ավագները հատուկ հրովարտակներով ճանաչել էին Արցախի իշխանների ու հոգևոր առաջնորդների իրավասությունները¹⁰:

16–17-րդ դդ. թուրք-պարսկական պատերազմների ժամանակաշրջանում Արցախի իշխանական դասը նոր մարտավարությամբ իր հարաբերություններն է կարգավորում Պարսկաստանում հաստատվող Սեֆյան հարստության հետ: Սեֆյան տիրակալներն ստիպված էին ճանաչել Արցախի իշխանական տների իրավասությունները և հատուկ հրովարտակներով հավաստել նրանց կարգավիճակը: 16-րդ դարում տեղի ունեցող այդ ճանաչումների ընթացքում նախկին իշխանապետությունների հենքի վրա ինչպես Խաչենի, այնպես էլ մյուս հայկական՝ Դիզակ, Վարանդա, Գյուլիստան, Ջրաբերդ, Քոչիզ, Ոսկանապատ, Գետաշեն, Շամքոր, Ջակամ և այլ, գավառների իշխանական տները կոչվեցին մելիքություններ¹¹: Տարածաշրջանում իր գերիշխանությունը հաստատած պարսից պետության նկատմամբ ստանձնելով որոշակի հարկային պարտավորություններ՝ հայ մելիքներն իրենց տիրապետությունների շրջանակներում վարում էին մելիքությունների ներքին քաղաքականությունը, իրենց զորախմբերով ապահովում բնակչության պաշտպանությունը արտաքին ու ներքին սպառնալիքներից:

Մելիքությունների արտաքին քաղաքական կողմնորոշման նշանակությունը հատկապես կարևորվեց 16–17-րդ դդ. թուրք-իրանական պատերազմների և 1720-ական թվականներին Իրանի Սեֆյան պետությունում ծագած ճգնաժամի պայմաններում, երբ տարածաշրջանը հայտնվեց գերտերությունների բախման կիզակետում: Լիակատար անկախության հեռանկարի անիրատեսականության պայմաններում Արցախի մելիքները 1730-ական թթ., ինչպես Շահ Աբաս Առաջինի իշխանության ժամանակաշրջանում, ևս կողմնորոշվելով դեպի պարսից տիրապետության հետ համագործակցությունը,

⁸ Տես Բ. Ա. Ռիուբարյան, Նշ. աշխ., էջ 171–288:

⁹ Տես Գ. Ե. Կիրակոսյան, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386–1500 թթ.): Ե., 1997:

¹⁰ Տես «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հ. 1. «Հրովարտակներ», պրակ Ա (ԺԵ–ԺԶ դդ.): Ե., 1956:

¹¹ Տես Բ. Ռիուբարյան, Նշ. աշխ., էջ 416–421:

իրենց մասնակցությունն ունեցան Նադիրի արշավանքներում, իսկ Նադիրի թագադրումից հետո հինգ մելիքությունների միավորմամբ Արցախում 1736 թ. ստեղծվեց Դիզակի մելիք Եզանի գլխավորությամբ նոր իշխանապետություն՝ բեկլարբեկություն (խանություն՝ Խամաս)¹²: Մելիք Եզանի մահը (1744 թ.), Նադիր շահի սպանությունը (1747 թ.) և Իրանում սկսված գահակալական պատերազմները Արցախում ստեղծեցին ծանր իրավիճակ և ճակատագրական դարձան նաև նրա համար:

Պարսից պետության վարչական միավորներ խանությունները 18-րդ դարի երկրորդ կեսին դարձան ինքնավար, հարակից տարածքների հաշվին իրենց տիրույթներն ընդարձակելու նպատակով վարեցին պատերազմներ և, մինևույն ժամանակ, ստիպված եղան ինքնուրույն կերպով դիմագրավելու արտաքին սպառնալիքներին: Նման իրավիճակում հաճախակի դարձան տարբեր իշխողների միջև ձևավորվող կարճաժամկետ դաշինքներն ու արկածախնդիր հավակնությունները: Եթե Երևանի ու Գանձակի խանությունները արտաքին սպառնալիքներին դիմագրավելու և իրենց իշխանությունը պահպանելու նպատակով նախընտրեցին հարկատու դառնալու պայմանով ստանալ վրաց թագավորների օժանդակությունը, ապա Արցախում արտաքին վտանգի նկատմամբ միասնական դիրքորոշում չձևավորվեց: Վրաց օժանդակությունը ակնկալող և Վրաստանի հետ դաշինքի պատրաստ Վարանդայի մելիք Շահնագարը, որը մելիք Եզանի միջնորդությամբ մելիքությունը ժառանգել էր դեռ Նադիր շահի հրամանագրով¹³ և փորձում էր հաստատել իր գերակայությունը Արցախում, վրաց թագավորների խնդրանքով 1752 թ. ներկայացավ Գանձակի մոտ գտնվող վրացական զորակայան՝ Շաքիի խան Հաջի Չալաբիի դեմ արշավանքին մասնակցելու և վրացական բանակին օժանդակելու նպատակով, սակայն վրաց թագավորների կարգադրությամբ, ի թիվս այլ դաշնակիցների, անակնկալ կերպով բանտարկվեց¹⁴: Այդ ուխտադրությունը անհնար դարձրեց վրաց թագավորների հետ դաշինքի կայացումը: Հաջի Չալաբիի կողմից վրացական բանակի ջախջախումից հետո մելիք Շահնագարն այլևս չէր կարող ապավինել վրացական օժանդակությանը, ուստի, անիրական համարելով մյուս հայ մելիքների՝ վրացիների հետ կապված հույսերը, փորձեց գտնել այլ դաշնակիցների: Նման դաշնակցի դեր ստանձնեց Նադիր շահի հրամանով Խորասան արտաքսված ու Ղարաբաղ վերադարձած թափառաշրջիկ ջևանշիր ցեղի ավագակապետ Փանահը, որը մինչ այդ՝ 1750 թ., ապաստանել էր Դիզակի մելիք Եսայու Տող ամրոցում, որտեղ գտնվում էին նաև Փանահի զինամթերքն ու զանձարանը:

¹² Տես Հ. Փախազյան, մելիք Եզանի ընդունարանի վիմագիր արձանագրությունը: «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, հմ. 5:

¹³ Տես Մ. Ա. Чобанян. Проблема легитимности Карабахских ханов в контексте политической истории Шуши. «Աշխատանքային տետրեր», 2013, հմ. 1–2:

¹⁴ Տես Պապունյա Օրբելիանի, Ամբավնի քարթլիսանի (Քարթլիի իրադարձությունները): Թբիլիսի, 1981 (վրաց.), Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ: Ե., 1956:

Հայ մելիքների օժանդակությունը ակնկալող և ըստ ամենայնի այլ հե- նարան չունեցող Փանահին անվնաս համարելով՝ մելիք Շահնագարը նրան թույլատրեց բնակվել իր տիրույթներում գտնվող Շուշի ամրոցում: Ոչ հե- ռատեսորեն տրված այդ թույլտվությունը մոտ քառասուն տարի անց՝ մելիք Շահնագարի մահից հետո, ճակատագրական դարձավ ոչ միայն նրա տոհմի, այլև ամբողջ Արցախի համար:

19-րդ դարի առաջին տասնամյակներին ռուս-պարսկական հակամար- տության պայմաններում ստանալով ինչպես ռուս, այնպես էլ պարսից իշխա- նությունների հովանավորությունը՝ Փանահի որդի Իբրահիմն ու նրա հաջորդ Մեհտի Ղուլի խանը կարողացան զանազան շինծու պատրվակներով ու տար- բեր կեղծիքներով տիրանալ աղա Մահմադ խանի 1795 և 1797 թթ. արշա- վանքներից հետո թուլացած հայ մելիքների հողային կալվածքներին և Ղաշտա- յին Արցախ ներբերել նաև մահմեդական բնակչություն, ինչը ժամանակակից ադրբեջանական իշխանությունների համար անապացույց «պատմական» շահարկումների հիմք է ծառայում¹⁵: Ռուսական տիրապետության պայմանե- րում հայ մելիքական տոհմերի ժառանգներն ստիպված էին դատական հայ- ցերով վերականգնել իրենցից խլված ժառանգական իրավունքները, ամրա- պնդել իրենց իշխանական դիրքերն ու նախադրյալներ ստեղծել Արցախի տնտեսական, մշակութային ու քաղաքական զարգացման համար:

Ռուսական կայսրության փլուզման հետևանքով Այսրկովկասում ստեղծ- ված Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության հավակնություն- ներին դիմակայելու համար արցախահայությունը, հավատարիմ մնալով պե- տականության ավանդույթներին, իր դիրքորոշումները ձևավորել է այսպես կոչված «համագումարների» հրավիրման միջոցով, ինչը 1918-1920 թվական- ներին պետաիրավական ու քաղաքական կարգավիճակի արձանագրում էր:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո ևս ռուս-թուրքական պարտադրմամբ Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ անհիմն կերպով մտցված Արցախը, կրկին հենվելով պետականության ավանդույթների վրա, ի տար- բերություն Հյուսիսային Արցախի և ՌԻտիքի հայկական բնակավայրերից, կա- րողացավ ստանալ ինքնավար մարզի կարգավիճակ, ինչը հնարավորություն ընձեռեց պահպանելու ինքնավարության որոշակի իրավասություններ:

ԽՍՀՄ փլուզումը նոր իրավիճակ ստեղծեց իրենց անկախության հռչակ- մանը պատրաստվող հանրապետությունների փոխհարաբերություններում: Արցախում պետականության ամուր ավանդույթների առկայությունը Ղարա- բաղի Ինքնավար Մարզի մարզկոմի և մարզային խորհրդի անդամներին հնարավորություն ընձեռեց հաջողությամբ հաղթահարելու Բաքվի դրածո Գևորգյովի և ադրբեջանական իշխանությունների դիմադրությունը և 1988 թ. փետրվարի 20-ին ընդունելու «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայ- կական ԽՍՀ կազմ տեղափոխելու հարցով Հայկական ԽՍՀ և Ադրբեջանա-

¹⁵ Տես Պ. Չորանյան, 19-րդ դարի առաջին երեսնամյակում Արևելյան Հայաստանում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերն ու տեղանվանակարգը և դրանց շահար- կումները: «Աշխատանքային տետրեր», 2014, հմ. 3–4:

կան ԽՍՀ Չերագույն խորհուրդների առջև միջնորդության մասին» պատմական որոշումը: «Միացում» կարգախոսը, սակայն, օգտագործվում և ներկայացվում էր որպես հրահրված տարածքային պահանջ, և փորձ էր արվում ագրեսորի պիտակով հեղինակագրկելու հայ ժողովրդի օրինական կամքի դրսևորումը: Հավատարիմ իր պետականության ավանդույթներին՝ Արցախը 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ստեղծելու իր որոշումը, ինչը միանգամայն համահունչ էր ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ 1990 թ. օրենքի դրույթներին¹⁶: Արցախի բնակչության ինքնորոշման իրավունքի իրացմամբ ԼՂՀ հռչակումը անհրաժեշտ էր հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջպետական դաշտ փոխադրելու Ադրբեջանի փորձը՝ կասեցնելու և հակամարտության՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն–Ադրբեջանի Հանրապետություն» ձևաչափը պահպանելու համար:

Հետխորհրդային շրջանում քառորդ դար դիմագրավելով բազում արհավիրքների, ապավինելով իր պատմական փորձին ու կարևորելով պետականության առկա կառույցներն ու ներքաղաքական կայունությունը՝ արցախահայությունը ԼՂՀ-ում, աստիճանաբար, առանց կտրուկ ու չկշռադատված քայլերի վերափոխելով խորհրդային համակարգը, ստեղծել է նորօրյա պետականության բոլոր անհրաժեշտ հաստատությունները, վերականգնել պատմական տարածքների նկատմամբ իր իրավասությունները: Ռևստի միանգամայն օրինաչափ է արցախահայության հաստատականությունը, կրկին որպես հակամարտության կողմ, վերահաստատելու Ադրբեջանի հետ իր շահերի պաշտպանության պատմական ու պետական իրավունքները՝ ՀՀ-ին վերապահելով Արցախի անվտանգության երաշխավորի կարգավիճակ:

¹⁶ *Stu Hayk S. Kotanjian. «Referendum As A Gesture Of A Good Will»: Peace And War Scenarios For Karabakh. Presentation at the International Conference «Reassessing Security in the South Caucasus: Regional Conflicts, Stability and Transformation».* Yerevan, 14–15 May 2009 (<http://www.harvardbssp.org/static/files/390/Lyon%20University%20Yerevan%20INSS%20Regional%20Security%20South%20Caucasus%20Conference.pdf>):

* Այդ նպատակով 1988–1990 թթ. ադրբեջանական իշխանությունները Սումգաիթում, Չանձակում, Բաքվում և այլ բնակավայրերում կազմակերպեցին հայերի կոտորածներ ու հալածանքներ, ապա և հայագի բնակչության զանգվածային արտաքսում Ադրբեջանից ու ադրբեջանցի բնակչության կազմակերպված փոխադրում ՀԽՍՀ-ից ԱդրխՍՀ:

ТРАДИЦИИ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ В АРЦАХЕ И ИХ РОЛЬ В ДЕЛЕ ФОРМИРОВАНИЯ НКР

*П. А. ЧОБАНЯН, доктор исторических наук, профессор, старший ученый-аналитик
ИНСИ НИУО МО РА, главный научный сотрудник
Института востоковедения НАН РА*

РЕЗЮМЕ

В Арцахе традиции государственности имеют более чем тысячелетнюю историю. Восточные провинции Великой Армении Арцах и Утик в I–V вв. н. э. являлись своеобразным щитом, прикрывавшим армянское государство от вызовов и угроз, исходящих с Востока.

После падения царства Аршакидов в Великой Армении (428 г.) Арцах и Утик были отделены от нее и включены в марзпанство Агванка, а в эпоху арабского владычества они вновь вошли в состав провинции Армения. Однако в составе какого-бы государства ни находился Арцах, он вплоть до конца XVIII в. представлял собой моноэтническое армянское образование, на местном уровне управляемое древними династиями армянских князей (меликов).

Лишь в конце XVIII в. мелик Варанды (область Арцаха) Шахназар приютил в своей крепости Шуши атамана кочевого разбойничьего племени джеванширов Панаха, сын которого Ибрагим и внук Мехти-Кули в начале XIX в. после смерти Шахназара фальсификациями и обманом завладел имуществом меликов Арцаха, ослабленных вследствие походов иранского шаха Ага-Мухаммеда Каджара. Это обстоятельство служит «основой» для фальсификации истории края, мягко говоря, недобросовестными «учеными» соседней республики в целях представления коренного народа – армян пришельцами.

В Российской Империи Арцах в соответствии с национальной политикой царизма был введен в состав Елисаветпольской губернии, однако после ее распада Азербайджанской Демократической Республике не удалось установить свою юрисдикцию над территорией и народом Арцаха с его глубокими традициями государственности.

После установления Советской власти по русско-турецкому сговору Арцах был необоснованно включен в состав Азербайджанской ССР, однако опираясь на традиции государственности, в отличие от армянского населения Северного Арцаха и Утика, смог обрести статус автономной области, что давало возможность сохранить редуцированные элементы государственности.

В постсоветское время армянское население НКР, опираясь на свой исторический опыт и традиции государственности, без резких и необдуманных шагов постепенно преобразовывая советскую систему государственных органов власти, создало все необходимые институты демократического государства восстановлением своих прав на собственные исторические территории.

THE TRADITIONS OF ARMENIAN STATEHOOD IN ARTSAKH
AND THEIR ROLE IN THE FORMATION OF THE NKR

P. A. CHOBANYAN, *Doctor of History, Professor, Senior Research Fellow, INSS, NDRU, MoD, RA, Principal Researcher, Institute of Oriental Studies, NAS, RA*

SUMMARY

The traditions of statehood in Artsakh go deep into more than thousands of years of history. Back in 1-5 centuries A.D. the eastern provinces of Greater Armenia – Artsakh and Utik – were a unique shield protecting the Armenian state from challenges and threats from the East.

With the fall of the Arshakunis' kingdom in 428, Artsakh and Utik were separated from Greater Armenia and annexed to Aghvank marzpanate, later in the epoch of the Arabs' domination they joined again the Province of Armenia. However, whichever state Artsakh was in, up to the end of the 18th century it was a monoethnic Armenian entity locally governed by ancient Armenian dynasties of princes (*meliks*).

It was only at the end of the 18th century, that Shahnazar, the Melik of Varanda (region in Artsakh), hosted Panah, the leader of the plunderous nomadic Jevanshir tribe, in his Shushi Fortress. At the beginning of the 19th century after Shahnazar's death Panah's son Ibrahim and grandson Mehti-Kuli, by falsifications and fraud, overtook the property of Meliks of Artsakh weakened in consequence of the Iranian Shah Agha Mohammed Qajar's incursions. The negligent "academicians", to put it mildly, from our neighbor state rely upon this consequence as a "basis" for the falsification of the history of this land with the aim of presenting the Armenians – the indigenous people – as newcomers.

Within the Russian Empire Artsakh was annexed to the Province of Yelizavetpol according to the national policy of tsarism, however, after its breakdown, the Azerbaijani Democratic Republic was unable to extend its jurisdiction over either the territory or the people of Artsakh with its time-honored traditions of statehood.

After the establishment of Soviet power, due to the Russian-Turkish deal Artsakh was unjustifiably annexed to the Azerbaijan SSR, nevertheless, relying on the traditions of statehood and unlike the Armenian population of Northern Artsakh and Utik, the NKR succeeded in gaining a status of an autonomous district (oblast), which gave it a chance to preserve the reduced elements of statehood.

During the post-Soviet era, the Armenian population of the NKR, relying on its historical experience and traditions of statehood and withholding from abrupt and hasty steps, gradually transformed the Soviet system of public administration bodies to establish all the necessary institutes of a democratic state via restoring its rights upon its own historical lands.

**ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԷՒԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈՒՈՐՏՈՒՄ ՆՐԱՆՑ ՎԱՐԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

*Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական
վերլուծությունների կենտրոնի ռազմավարական խաղերի
և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան,
Ա. Գ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային
ռազմավարական վերլուծությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան*



**1. ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1.1. Ռուս-թուրքական
հարաբերությունների
վատթարացում. 2015–2016 թթ.**

2015 թ. նոյեմբերի 24-ին ռուսաստանյան ռազմական ինքնաթիռի կործանման և Թուրքիայի դեմ Ռուսաստանի սահմանած տնտեսական պատժամիջոցների պատճառով ռուս-թուրքական հարաբերությունները վատթարացել էին: Ըստ այդմ ռուս-թուրքական հարաբերությունների ներկայիս վիճակը և հեռանկարները վերլուծելու համար նպատակահարմար է նախ ուսումնասիրել այդ պատժամիջոցների գործած ազդեցությունը:

Պատժամիջոցները սահմանվել էին որոշ տեսակի սննդամթերքի, հիմնականում՝ մրգերի, բանջարեղենի ու թռչնամսի և որոշ աշխատանքների ու ծառայությունների առնչությամբ: Արգելանք էր դրվել Ռուսաստանում հետագայում թուրքական ընկերությունների գրանցման, թուրք քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագրերի կնքման (գործող աշխատանքային պայմանագրերը կարող են երկարաձգվել), Ռուսաստանից Թուրքիա ուղիղ ավիափոխադրումների և թուրքական զբոսաշրջային փաթեթների վաճառքի վրա, ինչպես նաև դադարեցվել էին երկկողմ տնտեսական համագործակցության շրջանակներում հանձնաժողովների աշխատանքները և հանվել էր թուրք քաղաքացիների համար մուտքի ոչ արտոնագրային ռեժիմը:

Պատժամիջոցները սահմանվել էին որոշ տեսակի սննդամթերքի, հիմնականում՝ մրգերի, բանջարեղենի ու թռչնամսի և որոշ աշխատանքների ու ծառայությունների առնչությամբ: Արգելանք էր դրվել Ռուսաստանում հետագայում թուրքական ընկերությունների գրանցման, թուրք քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագրերի կնքման (գործող աշխատանքային պայմանագրերը կարող են երկարաձգվել), Ռուսաստանից Թուրքիա ուղիղ ավիափոխադրումների և թուրքական զբոսաշրջային փաթեթների վաճառքի վրա, ինչպես նաև դադարեցվել էին երկկողմ տնտեսական համագործակցության շրջանակներում հանձնաժողովների աշխատանքները և հանվել էր թուրք քաղաքացիների համար մուտքի ոչ արտոնագրային ռեժիմը:

Թուրքիայի համար Ռուսաստանը արտահանման 7-րդ շուկան է: 2014 թ. Թուրքիայից Ռուսաստան արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման 3,8 %-ը և ՀՆԱ-ի 0,7 %-ը, իսկ Թուրքիայի ընդհանուր ներկրման մեջ Ռուսաստանի բաժինը կազմել է 10 %: Թուրքիայից սննդամթերքի արտահանման մոտ 20 %-ը և մանածագործվածքի 15 %-ը բաժին են հասնում Ռու-

ասատանին՝ Թուրքիային ապահովելով համապատասխանաբար, 1100 և 910 միլիոն դոլարի եկամուտ:

2015 թ. Թուրքիան Ռուսաստան է արտահանել 1,3 մլրդ դոլար արժողությամբ արդյունաբերական և գյուղատնտեսական հումք (արտահանման 17 %-ը), 2,2 մլրդ դոլար արժողությամբ մեքենաներ և սարքավորանք (արտահանման 30 %-ը), ինչպես նաև 1,8 մլրդ դոլար արժողությամբ մանածագործվածք, հագուստ և կոշիկ (արտահանման 23 %-ը): Ռուսաստանից Թուրքիա արտահանման ավելի քան 80 %-ը կազմում են հանքանյութերը և մետաղները:

Ինչ վերաբերում է բանկային ոլորտին, ապա ռուսաստանյան Խնայքանկը սեփականացրել է Դենիզբանկին, որը Թուրքիայի 8-րդ խոշոր բանկն է: Հինգ թուրքական բանկեր ՌԴ-ում ունեն իրենց մասնաձյուղերը, որոնցից յուրաքանչյուրը ռուսաստանյան շուկայում ունի շատ փոքր մասնաբաժին¹:

Թուրքիայի զբոսաշրջային ոլորտը մեծապես կախված է ռուսաստանցի զբոսաշրջիկների այցելություններից: Տվյալ ոլորտում Ռուսաստանի մասնաբաժինը կազմում է տարեկան շուրջ 3 մլրդ դոլար, կամ Թուրքիայի ՀՆԱ-ի 0,3-0,4 %-ը: 2014 թ. Թուրքիա այցելած շուրջ 37 միլիոն զբոսաշրջիկների 12,2 %-ը Ռուսաստանից էին²:

Ռուսաստանյան շուկայում նշանակալի է թուրք գործարարների մասնաբաժինը, հատկապես՝ շինարարության ոլորտում: Այսպես. 2014–2015 թթ. այդ պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է 6,3 միլիարդ դոլար: Մինչև 2015 թ. սեպտեմբեր ամիսը կնքված նոր գործարքների արժեքը կազմել է 10-12 միլիարդ դոլար, կամ Թուրքիայի ՀՆԱ-ի 1,2-1,4 %-ը³:

Թուրքիան էներգակիրների պահանջարկի բավարարման համար տարեկան ծախսում է մոտ 50 միլիարդ դոլար⁴: Նա ներմուծման հաշվին բավարարում է գազի իր պահանջարկի 99 %-ը: 2015 թ. Թուրքիան ներմուծել է մոտ 51 միլիարդ խորանարդ մետր գազ, որից 58 %-ը Անդրբալկանյան ուղղությամբ և «Կապույտ հոսքով» ներմուծվել է Ռուսաստանից: Ռուսաստանի համար Թուրքիան Գերմանիայից հետո գազի երկրորդ ամենամեծ սպառողն է. 2015 թ. Ռուսաստանից նրա գնած բնական գազի արժեքը կազմել է 27 միլիարդ դոլար:

Ինչ վերաբերում է նավթին, ապա Թուրքիան 2015 թ. իր ներքին պահանջարկի 89 %-ը բավարարել է ի հաշիվ ներմուծման, և այս ասպարեզում Ռուսաստանն զբաղեցնում է 3-րդ տեղը (12,4 %)⁵:

¹ *Stu Idil Bilgic-Alpaslan, Bojan Markovic, Peter Tabak and Emir Zildzovic. Economic implications of Russia's sanctions against Turkey, 7 December 2015* (<http://www.ebrd.com/news/2015/economic-implications-of-russias-sanctions-against-turkey.html>):

² Տես նույն տեղում:

³ Տես նույն տեղում:

⁴ *Stu Kivanc Dundar. Russian-Turkish economic links offer escalation options, 25 Nov. 2015* (<https://newcoldwar.org/russian-turkish-economic-links-offer-escalation-options/>):

⁵ Տես ««Газпром» снизил поставку газа независимым импортерам Турции». «ВЕДОМОСТИ», 26.02.2016 (<https://www.vedomosti.ru/business/articles/2016/02/26/631477-gazprom-snizil-postavku-gaza-nezavisimim-importeram-turtsii>):

Ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացումը հարցականի տակ էր դրել նաև մեծ երկկողմ նախագծերի, մասնավորապես՝ Թուրքիայում Ակույու ատոմակայանի և «Թուրքական հոսք» գազամուղի կառուցումը, թեև այդ երկու նախագծերը չէին ներառվել Ռուսաստանի հայտարարած տնտեսական պատժամիջոցների ցանկում:

Թուրքիայում «Ռոսատոմ» ընկերությունը պետք է կառուցի 4800 մեգաՎատտ հզորությամբ Ակույու ատոմակայանը: Այդ պայմանագիրն ստորագրվել էր 2010 թ. մայիսին: Ղա Անկարային հնարավորություն կտա կրճատելու էներգակիրների վրա կատարվող ծախսերը և վճարային հաշվեկշռի պակասուրդը: Այնուամենայնիվ, 20 միլիարդ դոլար ընդհանուր արժողությամբ նախագծի իրագործումից առաջ (ատոմակայանի առաջին էներգաբլոկի կառուցումը պետք է սկսվեր 2016 թ.) թուրքական կառավարությունը դեռ մինչ 2015 թ. նոյեմբերի 24-ին տեղի ունեցած միջադեպ տարածայնություններ է ունեցել ռուսաստանյան կողմի հետ՝ կապված պետական երաշխիքների տրամադրման, ինչպես նաև հետագայում հարկերի կրճատման հետ:

Ատոմակայանի կառուցման ֆինանսավորումը ամբողջությամբ իրականացնելու է ռուսաստանյան կողմը, սակայն պայմանագրի համաձայն՝ հետագայում նա հնարավորություն կստանա 70-80 տարով մատակարարելու և սպասարկելու Թուրքիայի ատոմային էներգետիկայի ոլորտը, իսկ թուրք մասնագետները կվերապատրաստվեն Ռուսաստանում: Այլ կերպ ասած՝ Թուրքիայի ատոմային էներգետիկայի ոլորտում սարքավորանքի սպասարկման, ջերմահաղորդիչ մասերի մատակարարման և վառելիքի հարստացման գծով ծառայությունների մատուցման առումով Ռուսաստանը կստանա մենաշնորհային դիրք: Պայմանագրով 25 տարվա համար 1 կՎտ էլեկտրաէներգիայի սակագինը սահմանվել է 0,1235 դոլար⁶:

Ինչ վերաբերում է ռուսական «Գազպրոմի» կողմից «Թուրքական հոսք» գազամուղի կառուցմանը, որի արժեքը կազմում է 24 մլրդ դոլար, ապա սկզբնապես նախագծով նախատեսվում էր կառուցել գազամուղների չորս ճյուղ՝ յուրաքանչյուրը 15,75 մլրդ խմ հզորությամբ: Առաջին ճյուղով պետք է բավարարվեր Թուրքիայի պահանջարկը, մյուս ճյուղերով հոսող գազը ուղղվելու էր եվրոպական շուկա: Սակայն այս նախագծի իրագործման վերաբերյալ միջկառավարական համաձայնագիր չէր ստորագրվել:

Եվ այսպես. Ռուսաստանի սահմանած տնտեսական պատժամիջոցների հետևանքով թուրքական տնտեսության կրած վնասները եղել են փոքր՝ կազմելով 4-4,5 միլիարդ դոլար, կամ ՀՆԱ-ի 0,5 %-ը:

Ռուսաստանում թուրք քաղաքացիների աշխատանքի սահմանափակումը ևս քիչ է ազդել թուրքական տնտեսության վրա: Այստեղ աշխատող մոտ 90000 թուրք քաղաքացիների, որոնց դրամական փոխանցումները և արտասահմանյան ներդրումային եկամուտը Թուրքիայի տնտեսության համար չունեն նշանակալի դեր: Այսպես. 2014 թ. դրանք ապահովել են Թուրքիայի

⁶ Տես «Россия-Турция: мирный атом обостренных отношений». «EurAsia Daily», 6 мая 2016 (<https://easaily.com/ru/news/2016/05/06/rossiya-turciya-mirnyy-atom-obostryonnyh-otnosheniy>):

ՀՆԱ-ի համապատասխանաբար 0,1 և 0,05 %-ը: Պատժամիջոցները առավելապես ազդել են Թուրքիայի զբոսաշրջային ոլորտի վրա: Ռուսաստանից զբոսաշրջիկների թվի 50 %-ով կրճատումը Թուրքիայի ՀՆԱ-ն նվազեցրել է 0,3 տոկոսային կետով:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա ԵՄ-ից, ԱՄՆ-ից, Ավստրալիայից, Կանադայից և այլ երկրներից ներկրման սահմանափակումների հաշվառմամբ թուրքական սննդամթերքի փոխարինումը օտարերկրյա ապրանքներով շատ դժվար էր: Այդ պատճառով Ռուսաստանում նկատվում էր գյուղատնտեսական ապրանքների գների բարձրացում, որը հատկապես ցավոտ էր տարածքային միավորների տնտեսությունների համար: Այնուամենայնիվ, Ռուսաստանի դեմ Արևմտյան երկրների հայտարարած պատժամիջոցների ազդեցության համեմատությամբ ռուս-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունների վատթարացումը նշանակալի ազդեցություն չի ունեցել Ռուսաստանի ՀՆԱ-ի և բյուջետային մուտքերի վրա: Թուրքիայից գյուղմթերքների ներկրման վրա դրված արգելանքն ազդել է միայն առանձին ոլորտներին և սպառողների գնողունակության վրա:

1.2. Ռուս-թուրքական հարաբերությունների կարգավորում.

2016 թ. օգոստոս-մինչ օրս

Խոցված ռուսաստանյան ինքնաթիռի կապակցությամբ Թուրքիայի Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ներողությունից հետո 2016 թ. օգոստոսի 9-ին Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցավ Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների առաջին հանդիպումը: Հանդիպման ժամանակ կողմերը պայմանավորվեցին աստիճանաբար հանել թուրքական ձեռնարկությունների վրա դրված պատժամիջոցները և վերսկսել Ռուս-թուրքական երկկողմ բարձրագույն համագործակցության խորհրդի աշխատանքները⁷: Նրանք նաև ցանկություն հայտնեցին հետագայում շարունակել մուտքի ոչ արտոնագրային ռեժիմի վերականգնման վերաբերյալ բանակցությունները:

Այդ հանդիպման ժամանակ որոշվեց նաև վերսկսել ուղիղ չվերթները՝ ռուս զբոսաշրջիկների անվտանգության ապահովման պայմանով, երկկողմ առևտրաշրջանառությունը հասցնել 100 մլրդ դոլարի (սա այն պայմանավորվածությունն է, որը ձեռք էր բերվել մինչ ռուսաստանյան պատժամիջոցների սահմանումը) և աստիճանաբար հանել թուրքական գյուղատնտեսական ապրանքների ներկրման վրա դրված արգելանքը⁸:

Մեկ այլ պայմանավորվածություն կապված էր հրթիռային ու շարժիչային համակարգերի համատեղ մշակման և արտադրության, ինչպես նաև ռազմաարդյունաբերության ոլորտում ծրագրային ապահովման նախագծերի իրագործման հետ: Ըստ փորձագետների կարծիքի՝ խոսքը կարող է վերա-

⁷ Տես նույն տեղում: «Пресс-конференция по итогам переговоров с Президентом Турции Реджепом Тайипом Эрдоганом», 9 августа 2016 (<http://kremlin.ru/events/president/news/52673>):

⁸ Տես «АЭС «Аккую» и «Турецкий поток» будут построены: Москва и Анкара выводят отношения из тупика», 09.08.2016 (<http://www.verelq.am/ru/node/10438>):

բերել միջին դասի ԱԹԱ-ների, մարտական գրահապատ մեքենաների և մարտական նավակների համատեղ մշակման նախագծերին (Թուրքիան ունի օդաբարձով նավակների արտադրության մեծ փորձ): Համագործակցությունը կարող է ծավալվել նաև Ռուսաստանի կողմից գենքերի և ռազմական տեխնիկայի (ՄԻ-8 ուղղաթիռների և հակահրթիռային համալիրների պահեստամասերի) մատակարարման ասպարեզում⁹:

Հանդիպման ժամանակ հայտարարվել է, որ Թուրքիան ռազմավարական նշանակության կարգավիճակ է շնորհել Ակույու ատոմակայանի կառուցման նախագծին: Դրա շնորհիվ նախագիծը կստանա հարկային արտոնություններ՝ շահութահարկի գեղչում 20 տարվա ընթացքում, ինչպես նաև կստեղծվի նրա արագ ու բարձր որակով իրագործման հնարավորություն¹⁰: Կողմերը նաև հաստատեցին, որ նախագծի իրականացման ուղղությամբ ձեռնարկվելիք բոլոր անհրաժեշտ քայլերը փոխհամաձայնեցված են (դրանք, մասնավորապես, կապված էին Թուրքիայի կողմից պետական երաշխիքներ տրամադրելու և հետագայում ատոմակայանում արտադրված էլեկտրաէներգիայի 1 կՎտ-ի գինը 0,1235 դոլար սահմանելու հետ):

Հետագայում՝ սեպտեմբերի 4–5-ը տեղի ունեցած G20 զագաթնաժողովում, կողմերը հայտարարեցին, որ Ակույու ատոմակայանի կառուցման աշխատանքների արագացման համար Թուրքիան նաև կատարել է անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ (լիցենզավորման կարգի հեշտացում՝ բնապահպանական պահանջներին դրա համապատասխանեցմամբ)¹¹:

Ինչ վերաբերում է «Թուրքական հոսք» նախագծին, ապա համատեղ աշխատանքային խումբը ներկայացրել է դրա ենթակառուցվածքների ստեղծման «ձանապարհային քարտեզը»: Ըստ դրա՝ Թուրքիայի ներքին պահանջարկի բավարարման համար 2019 թ. վերջին կառուցվելու է զագամուղի առաջմ մեկ ճյուղը: Խումբը մոտակա ժամանակներս պատրաստելու և ներկայացնելու է նաև Սև ծովի հատակով նվազագույնը մեկ ճյուղի կառուցման և երկրորդ ճյուղի կառուցման հնարավորությունը նախատեսող միջկառավարական համաձայնագրի նախագիծ¹²:

Օգոստոսի 31-ին ռուսաստանյան «Գազպրոմ» ընկերության ղեկավարության և Թուրքիայի էներգետիկայի նախարարի միջև կայացած հանդիպման ժամանակ ձեռք բերվեց պայմանավորվածություն կարճ ժամանակամիջոցում լուծելու «Թուրքական հոսք» նախագծի իրագործման համար Թուրքիայի ծովային հատվածում շինարարության թույլտվության հարցը: Կողմերը նաև պայմանավորվեցին շարունակել Թուրքիա ռուսաստանյան զագի արտահանման պայմանների վերաբերյալ առևտրային բանակցություն-

⁹ Տես «Из альянса на выход». «газета.ru», 10.08.2016 (<https://www.gazeta.ru/army/2016/08/10/10115471.shtml>):

¹⁰ Տես «Новак: «Турецкий поток» может заработать в 2019 году». «Экономика», 09.08.2016 (<http://www.vestifinance.ru/articles/73790>):

¹¹ Տես «Кремль рассказал о встрече Путина и Эрдогана на саммите G20». «РБК», 04.09.2016 (<http://www.rbc.ru/politics/04/09/2016/57cc61e59a79474c2c4c744e>):

¹² Տես նույն տեղում:

ները¹³: Սեպտեմբերի 14-ին «Գազպրոմը» թուրքական կառավարությունից վերջապես ստացավ «Թուրքական հոսքի» ծովային հատվածի կառուցման թույլտվությունը¹⁴:

Սակայն գազի գնի զեղչումը չի մտնում միջկառավարական համաձայնագրի մեջ և պետք է քննարկվի զուտ ընկերությունների միջև բանակցություններում: Խնդիրն այն է, որ ռուսաստանյան գազը գնում է ոչ միայն թուրքական պետական «Բոթաշ» («Botas») ընկերությունը, այլև մի շարք մասնավոր ընկերություններ, ինչը դժվարացնում է տվյալ բանակցությունները: Մինևույն ժամանակ՝ Ռուսաստանին ձեռնտու չէ զեղչի տրամադրումը առանց այդ էլ ցածր շուկայական գների պարագայում:

ՈՒ թեև գազի գնի հարցով բանակցությունները դեռ շարունակվում են, 2016 թ. հոկտեմբերի 9–13-ն Ստամբուլում կայացած 23-րդ Համաշխարհային էներգետիկ կոնգրեսի ժամանակ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց «Թուրքական հոսքի» վերաբերյալ միջկառավարական համաձայնագիր: Ըստ դրա՝ մինչև 2019 թ. դեկտեմբեր կառուցվելու են դեպի Թուրքիա երկու գազամուղներ, որոնցից մեկը նախատեսված է Թուրքիայի պահանջարկի բավարարման, իսկ մյուսը՝ անցնելով ԵՄ տարածք՝ եվրոպական սպառողների համար¹⁵:

Ամփոփելով՝ կարող են ենք նշել, որ ձեռք բերված պայմանավորվածությունները առևտրատնտեսական հարաբերությունները արագորեն վերականգնելու երկու պետությունների մտադրության վկայությունն են: Սա հատկապես կարևորվում է Ռուսաստանի վատթարացող տնտեսական վիճակի և ներկրման փոխարինման քաղաքականության անարդյունավետության պայմաններում: Մյուս կողմից՝ նկատվում է, որ երկու պետությունների առևտրային հարաբերությունների վերականգնման համար խթան է երկկողմ էներգետիկ նախագծերի իրագործման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, գործարար հարաբերությունների վերականգնման և շուկայական կողմնորոշումների փոփոխությունների անհրաժեշտության հաշվառմամբ՝ կարճաժամկետ հեռանկարում Ռուսաստանի և Թուրքիայի միջև առևտրաշրջանառությունը չի կարող հասնել իր նախկին մակարդակին:

1.3. Ռուսաստանյան «Գազպրոմ» ընկերության եվրոպական գազային քաղաքականության ազդեցությունը Թուրքիային գազի մատակարարումների վրա

Ռուսաստանյան գազը ՌԻկրահնայի տարածքով (ներկայումս այն Հարավարևելյան Եվրոպա գազի արտահանման ամենակարճ երթուղին է, և դրանով գազ է ներմուծվում նաև Թուրքիա) եվրոպական շուկաներ հասցնե-

¹³ Stn «Газпром» и Турция пришли к консенсусу по «Турецкому потоку». «газета.ru», 31.08.2016 (https://www.gazeta.ru/business/news/2016/08/31/n_9061229.shtml):

¹⁴ Stn «Газпром» получил первое разрешение Анкары на морскую часть «Турецкого потока». «интерфакс», 14 сентября 2016 (<http://www.interfax.ru/business/528161>):

¹⁵ Stn *Anar Valiyev*. «The Jamestown Foundation», 19 October 2016. Azerbaijan strengthens its energy position in Turkey (<https://jamestown.org/program/azerbaijan-strengthens-energy-position-turkey/>):

լու վերաբերյալ պայմանագրի ժամկետը լրանում է 2019 թ.: Հարավարևելյան Ռկրախնայում տեղի ունեցող մարտական գործողությունները և զագային պայմանագրում ամրագրված ուկրաինական պարտավորությունների կատարման հանդեպ «Գագայրոմ» ընկերության անվստահությունը Ռուսաստանին դրդում են փնտրելու զագի եվրոպական մատակարարման այլընտրանքային ուղիներ, որոնցից են «Հյուսիսային հոսք-2» և «Թուրքական հոսք» նախագծերը: Սակայն Ռուսաստանի այս քաղաքականությունը բխվում է մի շարք խոչընդոտների, որոնցից են.

- եվրոպական գործընկերների հետ «Գագայրոմի» կնքած պայմանագրերով, որոնք ուժի մեջ են մինչև 2028 թ., որպես եվրոպայում զագի մատակարարման հանգուցային կետեր սահմանվում են Բաունգարտենը (Սլովակիայի և Ավստրիայի սահմանին) կամ Վելկե Կապուսանին (Ռկրախնայի և Սլովակիայի սահմանին)¹⁶: Ռուստի զագը թուրք-հունական սահման հասցնելու «Գագայրոմի» քաղաքականությունը հանգեցնում է երկարաժամկետ եվրոպական պայմանագրերում փոփոխությունների անհրաժեշտության,

- «Հյուսիսային հոսք-2» զագամուղի վերաբերյալ Գերմանիան ներկայացրել է երեք պահանջ: Առաջին. զագամուղը պետք է համապատասխանի ԵՄ-ի էներգետիկ կանոնադրությանը, երկրորդ. այն չպետք է վտանգի Ռկրախնայի տարածքով զագամատակարարումը, երրորդ. այն չպետք է սահմանափակի Արևելյան Եվրոպայի երկրների զագամատակարարումը¹⁷,

- ներկայումս ԵՄ-ը մտադիր չէ ՌԴ-ին տրամադրել «Թուրքական հոսքի» կառուցման համար երաշխիքներ, քանի որ կողմնակից է զագի տեղափոխմանը Ռկրախնայի տարածքով: Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ Ռկրախնայով զագի տարանցումը գերազանց է կատարվում, և այդ երթուղին կարող է ապահովել զագի մատակարարում մեծ ծավալներով: Եվրահանձնաժողովը նաև հայտարարում է, որ «Գագայրոմի» երկարաժամկետ պայմանագրերում եվրոպական գնորդներին վերաբերող պահանջները պետք է կատարվեն՝ անկախ Ռկրախնայում քաղաքական ձգնաժամից կամ ռուս-ուկրաինական հակամարտությունից:

Ռուսաստանը գիտակցում է, որ նշված խոչընդոտների հաշվառմամբ հնարավոր չի լինի ուկրաինական ուղղությամբ զագի արտահանումը մինչև 2020 թ. (նույնիսկ մինչև 2025 թ.) հասցնել զրոյական մակարդակի: Ավելին. Ռկրախնայի տարածքով տեղափոխվում է մոտավորապես 70 միլիարդ խմ զագ, և «Գագայրոմը» եվրոպական զագամուղների հզորության սահմանափակության պայմաններում չի կարող մինչև 2019 թ. ամբողջությամբ փոխարինել ուկրաինական երթուղին: Այնուամենայնիվ, «Թուրքական հոսքի» միան-

¹⁶ Stu *Frank Umbach, Slawomir Raszewski*. Strategic perspectives for bilateral energy cooperation between the EU and Kazakhstan: Geo-economic and geopolitical dimensions in competition with Russia and China's Central Asia Policies, 2016 (http://www.kas.de/wf/doc/kas_18485-1442-1-30.pdf?160224092933):

¹⁷ Stu «Германия выдвинула условия по поддержке «Северного потока 2»». «ТЕЛЕРАДИОКОМПАНИЯ ЗВЕЗДА», 8 июня 2016 (http://tvzvezda.ru/news/vstrane_i_mire/content/201606081647-mj72.htm):

գամից երկու գազամուղների կառուցման վերաբերյալ ռուս-թուրքական միջկառավարական համաձայնագրի կնքելու և Անդրադրիատիկ գազամուղով եվրոպական երկրներ տեղափոխվող գազի ծավալների համեմատաբար փոքր լինելու (նախնական՝ 10 միլիարդ խմ) հանգամանքը ԵՄ-ի ղեկավարությանը կստիպի «Թուրքական հոսքը» դիտել որպես արագ իրագործվող և ավելի մեծ հզորությամբ գազամուղներ նախատեսող նախագիծ:

Մյուս կողմից՝ Թուրքիան գազի իր աճող պահանջարկի հաշվառմամբ կարող է կարիք ունենալ դրա լրացուցիչ ծավալների ներմուծման: Սակայն ներկայիս պայմաններում դա հնարավոր չի լինի բավարարել (մինչև 2020 թ. այլ հանքերից գազի ներմուծման անիրատեսականություն և Անդրբալկանյան գազամուղով ու «Կապույտ հոսքով» գազի ծավալով հավելյալ գազի տեղափոխման անհնարինություն): ՌԻստի միանգամայն տրամաբանական է Թուրքիայի կառավարության պատրաստականությունը՝ շարունակելու «Թուրքական հոսք» նախագծի իրագործումը: Ավելին. գազային ոլորտում ԵՄ-ի որոշակի զիջումների և «Թուրքական հոսք» նախագծի իրագործման դեպքում Թուրքիան կարող է տարածաշրջանում դառնալ գազային հանգույց:

«Թուրքական հոսքի» նախնական ժամանակացույցի համաձայն՝ առաջին ճյուղը պետք է կառուցվի մինչև արևմտյան Թուրքիայում գտնվող Թրակիա շրջանի Կիլիկոյ քաղաք, և այդ ճյուղով գազի մատակարարումը պետք է սկսվի 2016 թ. վերջին՝ առավելագույն հզորության հասնելով հաջորդ տարի: Սակայն ներկայիս պայմաններում դրա իրագործումը իրատեսական չէ: Համապատասխանաբար՝ երկրորդ ճյուղը, որը նույնպես հասնելու է Կիլիկոյ, կարող է Թուրքիայի տարածքով շարունակվել 80 կմ, Լուլեբուրգազ վայրում միանալ Անդրբալկանյան գազամուղին և հետո արձև սկզբունքով գազ մատակարարել Հարավարևելյան Եվրոպայի երկրներին: Երրորդ և չորրորդ ճյուղերը կարող են շարունակվել Լուլեբուրգազից 100 կմ դեպի թուրք-հունական սահման՝ Իփսալա-Կիպի քաղաքների շրջան: Մասնավորապես՝ երրորդ ճյուղը կարող է միանալ Հարավային գազային միջանցքի մաս կազմող Անդրադրիատիկ գազամուղին կամ Թուրքիա-Հունաստան-Իտալիա միակցիչին: Իսկ չորրորդ ճյուղը կարող է միանալ ցանկացած եվրոպական ուղղաձիգ գազամուղին (օրինակ՝ «Իստրինգ» (*«Eastring»*)) կամ «Տեսլա» (*«Tesla»*) գազամուղին): Քիչ հավանական է, թեև՝ հնարավոր, որ երրորդ և չորրորդ ճյուղերը միանան բուլղարական երթուղուն՝ այդպիսով իրագործելով «Հարավային հոսք» նախագիծը¹⁸:

Դրա հետ մեկտեղ «Գազպրոմը» կարիք ունի արդարացնելու ռուսաստանյան գազամուղային համակարգի ընդլայնման համար արդեն կատարված ներդրումները («Հարավային հոսքով» գազի տեղափոխման համար «Գազպրոմը» ներդրել է շուրջ 400 միլիարդ ռուբլի): Սակայն ՌԿրաի-նայի տարածքով ռուսաստանյան գազի տեղափոխումը նշանակալի չափով կրճատվելու դեպքում Թուրքիա-Հունաստան-Իտալիա միակցիչը բավարար չի լինի բոլոր բալկանյան երկրներին գազ մատակարարելու համար:

¹⁸ Տես նույն տեղում:

Այս պայմաններում «Գազպրոմը», իտալական «Էդիսոն» (*«Edison»*) և հունական «ԴԵՊԱ» (*«DEPA»*) ընկերությունները ս. թ. փետրվարին ստորագրեցին Սև ծովի հատակով և երրորդ երկրներից դեպի Հունաստան, այնուհետև՝ Իտալիա գազի մատակարարման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր: Դրա կարևորությունն այն է, որ Ռուսաստանին Դրիմի միանալուց հետո «Գազպրոմը» կարող է կառուցել Սև ծովի հատակով անցնող մի գազամուղ, որը կհասնի Բուլղարիայի Վառնա քաղաք: Դա հնարավորություն կտա գործի դնելու «Պոսեյդոն» նախագիծը: Վերջինս «ԻԹԳԻ» (*Interconnector Turkey–Greece–Italy, ITGI*) գազամուղի (այն մտնում է «Հարավային գազային միջանցք» նախագծի մեջ) ծովային մասի կառուցման նախագիծն է: Ըստ դրա՝ գազամուղը կանցնի Իոնական ծովի հատակով և կկապի Իտալիայի ու Հունաստանի գազափոխադրումային համակարգերը: «ԻԹԳԻ» գազամուղն ունի տարեկան 20 միլիարդ խորանարդ մետր գազ տեղափոխելու հզորություն և 800 կմ երկարություն, որից 600 կմ-ն անցնում է Հունաստանի տարածքով, իսկ 200-ը՝ Իոնական ծովի հատակով¹⁹: Այն սկսվում է հյուսիսային Հունաստանի Կոմոտինի քաղաքի մոտակայքում և հասնում մինչև իտալական Ապուլիա մարզը: Կոմոտինիում Թուրքիա–Հունաստան–Իտալիա միակցիչը կարող է միանալ Հունաստան–Թուրքիա գազամուղին, ինչի շնորհիվ կստեղծվի Հարավային Եվրոպա գազի արտահանման միասնական համակարգ:

Այս նախագիծը «Գազպրոմին» հնարավորություն կտա գազ արտահանելու հարավային ուղղությամբ: Այնուամենայնիվ, գազամուղի կառուցման մեկնարկի համար անհրաժեշտ է Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական համաձայնությունը²⁰:

1.4. Տնտեսական հարաբերությունների վերլուծության ամփոփում

Ամփոփելով՝ կարող ենք պնդել, որ ռուս-թուրքական հարաբերությունների բարելավման հիմքում դրված է լայնամասշտաբ տնտեսական համագործակցության ծրագրեր իրագործելու պատրաստակամությունը: Երկու պետությունների տնտեսական հարաբերությունների զարգացման համար անկյունաքարային նշանակություն ունեն «Թուրքական հոսք» գազամուղի և Ակույու ատոմակայանի կառուցման նախագծերը: Ավելին. Թուրքիան նպատակ ունի «Թուրքական հոսքի» շնորհիվ ոչ միայն մեծացնելու իր էներգետիկ անվտանգությունը, այլև տարածաշրջանում դառնալու գազային հանգույց, ինչը կհանգեցնի մեր այդ հարևան պետության աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դերի մեծացման: Ռուսաստանը, իր հերթին, Եվրոպայի գազային պահանջարկի անկման պայմաններում ավելի բարձր

¹⁹ Стu ««Газпром» предложил альтернативный маршрут экспорта газа в Европу». «ЭКСПЕРТ ONLINE», 27.04.2016 (<http://expert.ru/2016/04/27/gazprom/>):

²⁰ Стu «The occurrence of three sea – Gazprom sneaks into the Balkans through Greece and Italy», 25.02.2016 (<http://en.news-4-traders.ru/the-occurrence-of-three-sea-gazprom-sneaks-into-the-balkans-through-greece-and-italy.html>):

աշխարհաքաղաքական դիրք գրավելու նպատակով ձգտում է իր եվրոպական գազամուղային «քարտեզի» ընդլայնման և կարևորում է Թուրքիայի՝ որպես տարանցիկ երկրի դերը:

2. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2015 թ. նոյեմբերից հետո ռուս-թուրքական հարաբերությունների սրումն ունեցավ էական քաղաքական հետևանքներ: Այս համատեքստում և՛ Ռուսաստանը, և՛ Թուրքիան սկսեցին Հայաստանը դիտել որպես հակամարտությունում գերակայություն ցուցաբերելու ասպարեզ: Հայաստանը որպես հակամարտության դաշտ դիտելու Թուրքիայի փորձ կարելի է համարել ս. թ. փետրվարի 15-ին Թուրքիայի նախկին վարչապետ Ահմեդ Ղափուբազըլուի այն հայտարարությունը, թե Ռուսաստանը, աջակցելով Հայաստանին, վտանգում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը²¹:

Մյուս կողմից՝ ռուսաստանյան օդանավի խցման հաջորդ օրը ՌԴ Պետդումայի քննարկմանը ներկայացվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ²²: Իսկ փետրվարին ՌԴ Պետդումայի Կոմկուսի խմբակցությունը դիմեց Նախագահ Վ. Պուտինին և Արտաքին գործերի նախարար Ս. Լավրովին՝ կոչ անելով չեղյալ հայտարարել 1921 թ. մարտի 16-ին կնքված Մոսկվայի պայմանագիրը²³: ՌԴ արտաքին գործերի նախարարությունը խոստացավ դիմումը քննարկել օրենքով սահմանված կարգով:

Հուլիսի 27-ին հայտնի դարձավ, որ Թուրքիայի նախագահը նամակ է հղել իր ռուս գործընկերոջը՝ ներողություն խնդրելով ինքնաթիռը խոցելու համար²⁴: Հետագայում պարզվեց, որ այս հարցում միջնորդական դերակատարում է ունեցել Ղազախստանի Նախագահ Նուրսուլթան Նազարբաևը²⁵: Այսպիսով՝ Թուրքիան կատարեց Ռուսաստանի նախապայմանները:

Այս քայլին գնալու պատճառները մի քանիսն էին: Թուրքիան հայտնվել էր ծանր վիճակում՝ Արևմուտքի հետ լարվածության պայմաններում, ու

²¹ Տես «Ղափուբազըլու. Ռուսաստանն ու Հայաստանը վտանգում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»: «Ազատություն ռադիոկայան», 16 փետրվարի 2016 (<http://www.azatutyun.am/content/article/27555417.html>):

²² Տես «Российский законопроект о криминализации отрицания Геноцида: «Кнут» и «пряник» для Турции в одном флаконе». «PanARMENIAN Net», 26 ноября 2015 (<http://www.panarmenian.net/rus/details/201312/>):

²³ Տես «В Госдуму внесли законопроект о признании геноцида армян Турцией». «newsru.com», 25 ноября 2015 (<https://www.newsru.com/russia/25nov2015/genocide.html>):

²⁴ Տես «Turkish president apologizes for downing of Russian warplane last year». «The Washington Post», 27 June 2016 (https://www.washingtonpost.com/world/turkey-apologizes-for-shooting-down-russian-warplane-last-year/2016/06/27/d969e0ea-3c6d-11e6-9e16-4cf01a41decb_story.html):

²⁵ Տես *Murat Yetkin*. Story of secret diplomacy that ended Russia-Turkey jet crisis. «Hürriyet Daily News», 9 August 2016 (<http://www.hurriyetsdailynews.com/story-of-secret-diplomacy-that-ended-russia-turkey-jet-crisis.aspx?PageID=238&NID=102629&NewsCatID=409>):

կարիք ունեւ բարելավելու այլ բեւեռի հետ հարաբերությունները: Դրան գումարվում էր այն, որ ՌԴ տնտեսական պատժամիջոցների հետևանքով Թուրքիան կրում էր որոշակի վնասներ, հատկապես՝ զբոսաշրջության բնագավառում, սակայն ավելի կարևոր էին քրդական ու սիրիական գործոնները²⁶: Ռուսաստանն այս կամ այն կերպ աջակցում էր Սիրիայի քրդերին, որոնք Մոսկվայում բացեցին իրենց ներկայացուցչությունը, իսկ սիրիական ժողովրդական պաշտպանության քրդական ջոկատները Թուրքիայում գործող և այդ պետության դեմ պայքարող ու Մոսկվայի բարեհաճությունը վայելող Քրդստանի բանվորական կուսակցության ճյուղավորումն են: Դրա հետ մեկտեղ Ռուսաստանը Թուրքիայի համար փակել էր Սիրիայի երկինքը, ինչից հետո այս ճակատում հաջողություն ունենալը Անկարայի համար բացառվում էր: Մյուս կողմից՝ Ռուսաստանը հասել էր իր ցանկացածին՝ Թուրքիայի ներողությանը, ինչպես նաև Սիրիայում ուժերի հաշվեկշռի փոփոխությանը:

Տվյալ հանգամանքների բերումով սկսվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորումը: Օգոստոսի 9-ին տեղի ունեցան Թուրքիայի նախագահի այցը Սանկտ Պետերբուրգ և ինքնաթիռի խցումից հետո երկու նախագահների առաջին հանդիպումը²⁷: Քաղաքական առումով, չնայած առկա շահարկումներին, կողմերի միջև որևէ ռազմավարական դաշինքի ստեղծում տեղի չունեցավ, ինչը բնական էր: Պետք է նկատել, որ նման դաշինք գոյություն չունեւ նաև օդանավի միջադեպից առաջ: Կողմերը հիմնականում համաձայնություններ ձեռք բերեցին տնտեսական ու էներգետիկ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ:

Հաջորդ սպասվող օրակարգը պիտի լինեւ Պուտինի այցը Թուրքիա՝ օգոստոսի 29-ին երկու երկրների ֆուտբոլի հավաքականների խաղը համատեղ դիտելու համար: Սակայն այցը տեղի չունեցավ, ինչի հնարավոր պատճառներից կարող էր լինել Սիրիայի տարածք Թուրքիայի ներխուժումը: Ռուսաստանի արձագանքից կարելի է հասկանալ, որ Անկարան նախապես տեղեկացրել էր Մոսկվային: ԻՊ-ից բացի, նաև քրդական զինուժի դեմ այդ գործողությունները պետք է որ ավելի անհանգստացնեին Մոսկվային²⁸: Թեև Պուտին–Էրդողան հեռախոսազրույցի վերաբերյալ հաղորդագրությունը բովանդակային առումով շատ բան չի հուշում, սակայն կարելի է հասկանալ Ռուսաստանի դժգոհությունն ստեղծված իրավիճակից³⁰:

Երկու նախագահների հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 3-ին Չինաստանում՝ Մեծ քսանյակի շրջանակներում: Դատելով կողմերի

²⁶ Տես *Գ. Մ. Արշակյան*, Թուրք-ռուսաստանյան հարաբերությունները Հարավային Կովկասում 2002-2016 թթ. Թուրքիայի վարած քաղաքականության համատեքստում: «ՀԲ», 2016 հմ. 2:

²⁷ Տես «Resetting Turkey's Ties With Russia», 9 August 2016 (<http://www.theatlantic.com/news/archive/2016/08/turkey-russia-ties/495020/>):

²⁸ Տես «Russian Foreign Ministry voices concern to Turkey over its invasion of Syria», 31 August 2016 (<https://www.newcoldwar.org/russian-foreign-ministry-voices-concern-to-turkey-over-its-invasion-of-syria/>):

հանդիպման բովանդակությունից՝ նոր պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել³¹:

Ոստ վերը շարադրվածի՝ կարելի է եզրակացնել, որ ռուս-թուրքական հարաբերություններում տնտեսական ու էներգետիկ գործոնը կատարեց իր դերը երկկողմ հարաբերությունները ճգնաժամից դուրս բերելու առումով: Միևնույն ժամանակ, այդ գործոնների ազդեցությունը բավարար չէ աշխարհաքաղաքական ճգնաժամը հաղթահարելու և հակասություններն իսպառ վերացնելու համար:

ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից երկկողմ հարաբերությունների կարգավորումը նպաստավոր է հակամարտության մեջ Հայաստանի ներքաշունից գերծ մնալու համար: Երկկողմ հարաբերությունների հետագա սերտացման դեպքում կծագի ՀՀ քաղաքական տարաշարժի դաշտի սահմանափակման վտանգ, սակայն ներկայիս զարգացումները ցույց են տալիս, որ այդ վտանգը ռեալ չէ: Մեր կարծիքով՝ օդանավի միջադեպի հաղթահարումից հետո էլ Ռուսաստանը և Թուրքիան Սիրիայի, Ղրիմի, Ղարաբաղի հարցերում պահպանում են տրամազօրեն հակառակ դիրքորոշումներ, և միջնաժամկետ ապագայում դրանց էական փոփոխությունը քիչ հավանական է:

³⁰ Stu «Erdoğan, Putin agree over phone call to accelerate delivery of aid to Syria's Aleppo». «DAILY SABAH», 26 August 2016 (<http://www.dailysabah.com/diplomacy/2016/08/26/erdogan-putin-agree-over-phone-call-to-accelerate-delivery-of-aid-to-syrias-aleppo>):

³¹ Stu «Встреча с Президентом Турции Реджепом Тайипом Эрдоганом», 3 сентября 2016 (<http://kremlin.ru/events/president/news/52816>):

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

ОТНОШЕНИЯ РОССИИ И ТУРЦИИ В КОНТЕКСТЕ ПРОВОДИМОЙ ИМИ ПОЛИТИКИ В ЭНЕРГЕТИЧЕСКОЙ СФЕРЕ

А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, ученый-аналитик Группы стратегических игр и моделирования Центра региональных стратегических анализов ИНСИ НИУО МО РА, А. Г. ИСРАЕЛЯН, ученый-аналитик Центра региональных стратегических анализов ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Многовекторный анализ динамики экономических аспектов двусторонних отношений России и Турции показывает, что в сфере энергетики, несмотря на значительное совпадение интересов в плане обеспечения Турцией своей потребности в энергоносителях путем закупки их в России, а также участия российских организаций в развитии турецкой атомной энергетики, наблюдаются и элементы соперничества, обусловленные стремлением сторон к самоутверждению в качестве регионального лидера в данной сфере. Определенное совпадение экономических интересов

влияет на политический аспект взаимоотношений Турции и России, диктуя необходимость их урегулирования. Однако вследствие диаметральной противоположности позиций РФ и ТР в таких ключевых внешнеполитических вопросах, как отношение к Сирии, Крыму, конфликтам на Южном Кавказе, дальнейшее их сближение в геополитическом пространстве в среднесрочной перспективе представляется маловероятным.

INTERNATIONAL RELATIONS

THE RUSSIA–TURKEY RELATIONS WITHIN THE CONTEXT OF THEIR POLICIES IN THE ENERGY SPHERE

*A. G. DAVTYAN, PhD in Economics, Research Fellow, Strategic Gaming and Modeling Group, Center for Regional Strategic Analysis, INSS, NDRU, MoD, RA,
A. G. ISRAYELYAN, Research Fellow, Center for Regional Strategic Analysis,
INSS, NDRU, MoD, RA*

SUMMARY

The multi-vector analysis of the dynamics of economic aspects of Russian and Turkish bilateral affairs indicates that in the energy sphere, despite the considerable coincidence of interests in terms of providing Turkey with its supply of energy carriers via purchasing them in Russia, as well as the participation of Russian organizations in the development of the Turkish nuclear power engineering, still some elements of rivalry are being observed as well, which are up to the two sides' urge towards self-assertion as a regional leader in said sphere. The certain concurrence of economic interests effects on the political aspect of relations between Turkey and Russia, dictating the necessity of their settlement. However, the diametrically opposite positions of the Russian Federation and the Republic of Turkey in such foreign-policy key questions as the posture towards the Crimea and Syria, the conflicts in the South Caucasus, their future intimacy in the geopolitical space in mid-term perspective seems dubious.

ԿԻԲԵՌԶՍՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՔ

Ա. Հ. ՆԵՐՉԵԹՅԱՆ, ՀՀ Սկիյուռքի նախարարի խորհրդական, Տորոնտոյի համալսարանի «քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» մասնագիտացմամբ արվեստի պատվավոր բակալավր



Վերջին տասնամյակում աճել են տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) դերը և պետության ու հասարակության կենսագործունեության բոլոր բնագավառներ դրանց ներթափանցման աստիճանը՝ առաջ բերելով ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ նոր մարտահրավերներ ու սպառնալիքներ: ՀՀ հասարակությունը վերջին տարիներին նույնպես դարձել է կիբեռհարձակումների զոհ:

Այդ մասին արդեն բարձրաձայնում են տեղեկատվական անվտանգության ոլորտի մասնագետները՝ կիբեռհանցագործության տարբեր դրսևորումներին հակազդեցության միջոցների մշակումը համարելով արդիական պրոբլեմ¹:

Շատ փորձագետների կարծիքով կիբեռհարձակումների վնասները կարելի է համարել ռազմական գործողությունների հետևանքով առաջացած վնասներին հավասարագոր²: Մեր կարծիքով՝ կիբեռտարածությունում հակառակորդի ակտիվությունը կաշկանդելու և պետության համար կենսական նշանակություն ունեցող օբյեկտների վրա կիբեռհարձակումները կանխելու անհրաժեշտ գործիքներից է կիբեռզսպման քաղաքականությունը:

Ընդհանրապես զսպումը հակառակորդի անցանկալի ռազմաքաղաքական գործողությունների կանխումն է նրան անընդունելի վնաս հասցնելու սպառնալիքով³: Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարանում զսպումը օգտագործվում է քաղաքական համատեքստում, իսկ սաստումը՝ ռազմական⁴: Ջսպման տեսության արմատները քրեագիտությունում են: Այս տեսության վերաբերյալ դիտարկումներ կարելի է գտնել

¹ Տես Ռ. Այդինյան, ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման որոշ հարցեր: «ՀԲ», 2016, հմ. 1:

² Տես Pierluigi Paganini. Preventing and Recovering from Cybercrime, 4 November 2014 (<http://www.tripwire.com/state-of-security/incident-detection/preventing-and-recovering-from-cybercrime/>):

³ Տես Glenn H. Snyder. Deterrence and Power. «Journal of Conflict Resolution», 1960, Vol. 4, N 2; С. М. Минасян. Теория и практика военного и политико-дипломатического сдерживания применительно к Карабахскому конфликту (монографическое исследование). «ՀԲ», 2014, հմ. 1–2:

⁴ Տես Դ. Ա. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015:

Թոմաս Հոբսի, Կեսարե Բեկարիայի, Ջերեմի Բենթամի աշխատություններում: 20-րդ դարի կեսին զսպման տեսությունը (*containment* և *deterrence*) թափանցեց նաև քաղաքագիտություն ու դարձավ մեծ տերությունների ռազմավարական պլանավորման կարևոր և առանցքային մաս: Հայտնի ամերիկացի միջազգայնագետ Ռոբերտ Ջերվիսը զսպման տեսությունը համարում է միջազգային հարաբերություններում ամենաազդեցիկը⁵: Նշենք նաև, որ վերջին 60 տարիների ընթացքում միջուկային *սաստման* (*deterrence*) շնորհիվ հնարավոր է եղել խուսափել մեծ և լայնամասշտաբ պատերազմներից*:

Կիբեռզսպումը («*cyberdeterrence*») կիբեռտարածությունում հակառակորդի հարձակումների կանխմանն ուղղված գործողությունների, միջոցառումների, ձեռնարկումների համակարգ է: Մասնագիտական գրականության մեջ տարածված է կիբեռզսպման քաղաքականության վերաբերյալ երկու տեսակետ: Մասնագետների առաջին խումբը պնդում է, թե կիբեռտարածության կառուցվածքային յուրահատկությունների՝ որոշարկման ու դրանից բխող հաղորդակցման խնդիրների և լիակատար պաշտպանության անհնարինության պատճառով կիբեռհարձակումների դեպքում միջուկային զսպման քաղաքականության մեթոդաբանության կիրառումը իրատեսական չէ: Երկրորդ խումբը համարում է, որ հնարավոր է վարել կիբեռզսպման քաղաքականություն՝ իր առանձնահատկություններով և ուրույն տրամաբանությամբ հանդերձ:

ԿԻԲԵՐԶՍՊՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Զսպման քաղաքականությունը պետք է բավարարի երեք պահանջների. (1) պատշաճ մակարդակի կիբեռկարողության առկայություն, (2) քաղաքականության հասցեատիրոջ հետ հաղորդակցման առկայություն և (3) փոխհատուցման անխուսափելիության մեջ հակառակորդի համոզվածություն⁶: Ըստ այդմ՝ պետությունը պետք է ունենա հակառակորդին անընդունելի վնասներ պատճառելու *կիբեռկարողություններ*, կարողանա հակառակորդին *հաղորդել* պատասխան գործողություններով պայմանավորված նրան անընդունելի կորուստներ պատճառելու մասին և *համոզել* նրան, որ փոխհատուցումը չի հապաղի և կլինի անհամաչափ ու անկասելի:

Հայտնի է, որ ավելի քան 140 պետություններ սկսել են զարգացնել իրենց կիբեռկարողությունները և ստեղծել կիբեռզենքեր⁷: Սակայն միշտ չէ, որ պետությունները հրապարակում են իրենց կիբեռկարողությունների վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ: Մյուս կողմից՝ պետությունները

⁵ Stu Robert Jervis. Deterrence Theory Revisited. «World Politics», January 1979, Vol. 31, N 2:

* Հաշվի առնելով կիբեռհարձակումների լայն սպեկտրը՝ դերակատարների բազմազանությունը, դրանց կիրառումը մարտական և ռազմավարական գործողություններում, հողվածում լոգտագործվի զսպում տերմինը՝ և՛ ռազմական, և՛ քաղաքական իմաստներով:

⁶ Stu Kenneth Geers. The challenge of cyber attack deterrence. «Computer Law & Security Review», May 2010, Vol. 26, Issue 3 (<http://www.sciencedirect.com/science/article/pii/S0267364910000506>):

⁷ Stu Eric Talbot Jensen. Cyber Deterrence. «Emory International Law Review», 2012, Vol. 26 (http://law.emory.edu/eilr/_documents/volumes/26/2/symposium/jensen.pdf):

կիբեռզենքեր օգտագործելուց հետո սովորաբար պատասխանատվություն չեն ստանձնում, ինչպես էր, օրինակ, «Ստաքսնետի» (*STUXNET*)^{*} կամ Էստոնիայի վրա հարձակումների** դեպքում: Ուստի կիբեռկարողությունների իրական գնահատումը անհատ հետազոտողների համար բարդ գործ է:

Մասնագիտական գրականությունում բերվում են պետությունների կիբեռկարողությունների տարբեր գնահատականներ: Հաճախ օգտագործվում են պետությունների կիբեռանվտանգությունների՝ ՄԱԿ-ի հեռահաղորդակցությունների միջազգային միության (*ՀՄՄ, ITU*) գնահատումները, սակայն կիբեռանվտանգությունը կիբեռկարողությունների ամբողջական և համակողմանի չափորոշիչ չէ, օրինակ՝ 2014 թ. ՀՀ-ում կիբեռանվտանգության ընդհանուր վիճակը գնահատված է որպես բավարար, իսկ Ադրբեյջանինը՝ լավ⁸:

ՀՀ կիբեռկարողությունների զարգացման ցածր տեմպերը մեծապես պայմանավորված են այն հանգամանքով, որ մեր պետությունը չունի կիբեռանվտանգության ռազմավարություն, որն ապահովեր միասնական տեսլական ու քաղաքականություն, միջոցառումների ու ձեռնարկումների համակարգվածություն և համընդգրկունություն՝ ըստ հստակորեն սահմանված նպատակների, գերակայությունների և գործողությունների խիստ հաջորդականության:

Հետևություն (1): *Կիբեռզսպման քաղաքականությունը պետք է բխի կիբեռանվտանգության ազգային ռազմավարության դրույթներից և որպես հիմնարար սկզբունքներ ներառի կիբեռկարողությունների զարգացումը, կիբեռհակառակորդի հետ նպատակային հաղորդակցումը և փոխհատուցման անխուսափելիության մեջ նրա համոզվածությունը:*

Ըստ զսպման տեսության՝ պետությունները կարող են կիրառել զսպման երկու հնարավոր ռազմավարություն՝ բացասմամբ (*deterrence by denial*) և պատժմամբ (*deterrence by punishment*)⁹: Այս ռազմավարություններն իրար

^{*} 2010 թ. նոյեմբերին հայտնի դարձավ, որ մեկ տարի առաջ Իրանի համակարգչային համակարգերում հայտնաբերվել է «Ստաքսնետ» վիրուսը: Այդ վիրուսի կիրառման նպատակն էր Իրանի միջուկային օբյեկտներում հարյուրավոր ցենտրիֆուգները շարքից հանելը՝ դրանց շարժիչների արագությունը կարգավորող և էներգիա մատակարարող կոմպլեքտների պատման հաճախականությունը կտրուկ փոփոխելու միջոցով: Իրանն այդ ժամանակ միջուկային օբյեկտների համակարգիչները «Ստաքսնետ» վիրուսով վարակելու մեջ մեղադրեց ԱՄՆ-ին: Որևէ պաշտոնական տեղեկություն, որը հաստատեր այս կամ այն պետության կամ որևէ պետական դերակատարի պատասխանատվությունը «Ստաքսնետ» վիրուսի մշակման հարցում, դեռևս չկա:

^{**} 2007 թ. Էստոնիայում կիբեռհարձակումների հետևանքով երկու օր գերատեսչությունների վեբ կայքերը և բանկային համակարգը խափանված էին: Բանն այն է, որ «Տալլինի ազատագրման հուշարձանը» քաղաքի կենտրոնից տեղափոխվել էր զինվորական գերեզմանոց, ինչը առաջացրել է տեղի էթնիկ ռուս բնակչության զայրույթը: Թվային հետաքննությունը ցույց տվեց, որ Էստոնիայի վրա կիբեռհարձակումների սկզբնաղբյուրը Կրեմլն է: Սակայն մինչ օրս ՌԴ-ն հերքում է իր մասնակցությունը՝ պնդելով, որ Կրեմլի համակարգիչները այդ օրերին նույնպես կիբեռհարձակման զոհ են դարձել, և հանցագործները օգտագործել են դրանք հարձակման սկզբնաղբյուրը քողարկելու նպատակով:

⁸ Տես «GCI Interactive Comparison Tool» (http://www.itu.int/en/ITU-D/Cybersecurity/Pages/GCI_GLO_Graphics.aspx): 2016 թ. գնահատման արդյունքները դեռ չեն հրատարակվել:

⁹ Տես R. Powell. Nuclear deterrence Theory: The search for Credibility. Cambridge University Press, 1990, PP. 8–10:

չեն բացառում, և դրանց սահմանազատումը բավական նուրբ գործ է: *Բացասմամբ զսպումը ենթադրում է հակառակորդի համոզում այն բանում, որ պաշտպանության հաղթահարման հետ կապված նրա ծախսերը (վնասները) կլինեն էպես մեծ, քան հաղթահարման դեպքում ակնկալվող օգուտները:* Իսկ *պատժմամբ զսպումը ենթադրում է հակառակորդի համոզում այն բանում, որ հարձակման դեպքում նրան կհասցվի պատասխան հարված, որով նրան անխուսափելիորեն կպատճառվեն անընդունելի վնասներ (կորուստներ), ուստի պատժմամբ զսպման դեպքում զսպող պետությունը պետք է պարտադրաբար ունենա համապատասխան կիբեռնոլոգիայություններ:*

Մասնագիտական գրականությունում բացասմամբ և պատժմամբ զրույթները հաճախ դիտարկվում են իրարից անջատ¹⁰: Մեր կարծիքով՝ այս երկու հասկացությունները իրարից անջատ դիտարկելը մեթոդաբանական սխալ է: Քանի որ կիբեռնոլոգիայում լիակատար պաշտպանություն հնարավոր չէ, ակնհայտ է, որ «բացասմամբ զսպումը» առանձին չի կիրառվում: Բացի այդ, կիբեռնոլոգիայում հարձակվողն ունի կառուցվածքային առավելություն, նույնիսկ եթե նրա կենտրոնացված ակտիվները, ուժերն ու միջոցները ավելի քիչ են, քան պաշտպանվողինը: Հետևաբար քիչ հավանական է, որ միայն բացասմամբ զսպում կիրառելու դեպքում հավանական վնասները վախեցնեն հակառակորդին և նրան հետ պահեն հարձակումից: Այս առումով համակարծիք ենք Մ. Լիբիցկու հետ, որը կիբեռնոլոգիայում նվիրված իր հիմնարար աշխատությունում այս երկու եղանակները չի տարանջատել՝ պնդելով, որ կիբեռնոլոգիայում ընդհանուր նպատակներին հասնելու համար դրանք գործում են սիներգիկ՝ և՛ միասին, և՛ զուգահեռաբար¹¹:

Հետևություն (2): *Զսպումը պետք է կատարվի բացասման և պատժման մեթոդների համակցությամբ:*

Կիբեռնոլոգիայի քաղաքականությունը բխում է Ազգային անվտանգության, մասնավորապես՝ կիբեռնանվտանգության ռազմավարություններից: Հատկանշական է, որ 2015 թ. ԱՄՆ-ի պաշտպանական գերատեսչության կիբեռնազնայության փաստաթղթում նշվում է կիբեռնոլոգիայի քաղաքականության կարևորությունը, ինչպես նաև քննարկվում են առկա մեթոդաբանական խնդիրներն ու ղեկավարությունները, իրավական պրոբլեմները և այլն¹²:

ԿԻԲԵՐՆՈԼՈԳԻԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԿԻԲԵՐՉՍՊՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զսպման էությունից բխում է, որ դրա համար անհրաժեշտ է ունակ լինել որոշարկելու հարձակվողին, որպեսզի նրան հարձակման դեպքում հասցվի հակահարված: Հակառակորդի որոշարկումը կիբեռնոլոգիայի յուրահա-

¹⁰ Տես *Էրիկ Թալբոտ Ջենսեն*, Նշ. աշխ., *Նաև՝ Գլեն Հ. Սենիդեր*, Նշ. աշխ., *Քեննետ Գիրս*, Նշ. աշխ.:

¹¹ Տես *Martin Libicki*. Cyberdeterrence and Cyberwar. Prepared for the United States Air Force. RAND Corporation, 2009, P. 8:

¹² Տես «The DoD Cyber Strategy». The Department of Defense, April 2015 (http://www.defense.gov/Portals/1/features/2015/0415_cyber-strategy/Final_2015_DoD_CYBER_STRATEGY_for_web.pdf):

տուն կրճարին խնդիրներից է¹³: Ցանցային կառուցվածքն ու անանունությունը հնարավորություն են տալիս հակառակորդներին՝ թաքցնելու կամ կեղծելու իրենց ինքնությունն ու աշխարհագրական դիրքը: Նույնիսկ մեծ կիբեռհարձակումները*, որոնք ձեռնարկվել են ռազմական գործողությունների օպերատիվ մակարդակում, օրինակ, 2008 թ. ռուս-վրացական պատերազմում, մինչ օրս ապացուցողաբար չեն վերագրվել որևէ պետության¹⁴: Եթե անգամ հնարավոր է լինում թվային փորձաքննության միջոցով պարզել կիբեռհարձակման վայրը, դա դեռ չի հաստատում տվյալ պետության կամ կառավարության անմիջական ներգրավվածության փաստը:

Դրա վառ օրինակն է նաև 2007 թ. Էստոնիայում կիբեռհարձակումների հետևանքով երկու օր տևողությամբ պետական գերատեսչությունների վեբ կայքերի և բանկային համակարգի խափանումը: Էստոնիայի օրինակը շեշտում է կիբեռտարածությունում հարձակման միանշանակ որոշարկման պրոբլեմի (attribution problem) գոյությունը, այսինքն՝ հարձակման վայրի և հարձակվողի միջև կապի ապացուցման բարդությունը: Միննույն ժամանակ, սխալ կլինի որոշարկման գործընթացը ներկայացնել որպես բինար, այն է՝ հարձակում գործել է կա՛մ X դերակատարը, կա՛մ հայտնի չէ, թե ով: Դա հավանականությունների աղյուսակ է՝ համապատասխան հավաստիության աստիճաններով, և պետությունները, տրամադրելով անհրաժեշտ ռեսուրսներ ու ժամանակ, կարող են *բավարար աստիճանի հավաստիությամբ* կիբեռհարձակումը վերագրել կոնկրետ հակառակորդի¹⁵:

Որոշարկման խնդիրը խոչընդոտում է նաև զսպման քաղաքականության անհրաժեշտ բաղադրիչին՝ հաղորդակցմանը¹⁶: Իսկ եթե պետությունը չի կարողանում հակառակորդին հաղորդել իր պաշտպանական ու հարձակվողական կարողությունների և նրա համար հարձակման հետևանքով հնարավոր անընդունելի կրոսստների մասին, ապա զսպումը դառնում է անարդյունավետ: Սառը պատերազմի ժամանակ հակամարտող կողմերին հայտնի էր, որ միջուկային ուժի գործածումը կհանգեցնի զանգվածային փոխհատուցման:

Ի տարբերություն միջուկային ներուժից՝ կիբեռկարողությունների զարգացումը կամ կիբեռզենքի ձեռքբերումը շատ դյուրին են և սահմանափակված չեն միայն պետական դերակատարներով: Կիբեռանվտանգության

¹³ Տես *Էրիկ Թայրոտ Ջենսեն*, Նշ. աշխ.:

* Պենտագոնի «Օպերացիաներ կիբեռտարածությունում» կանոնադրությամբ կիբեռհարձակումը սահմանվում է որպես հարձակում, որն առաջացնում է կիբեռտարածության քայքայում, ոչնչացում կամ դրանում բնականոն գործունեության խաթարում, ինչպես նաև ձեռնածություն: Հատկանշական է, որ սահմանումը ներառում է նաև ձեռնածությունը կամ լրտեսությունը (տես «Cyberspace Operations». Joint Publication 3-12 (R), 5 February 2013 (http://www.dtic.mil/doctrine/new_pubs/jp3_12R.pdf)):

¹⁴ Տես *Lesley Swanson*. The Era of Cyber Warfare: Applying International Humanitarian Law to the 2008 Russian-Georgian Cyber Conflict. Loyola of Los Angeles International and Comparative Law Review, 2010:

¹⁵ Տես *Jonathan Solomon*. Cyberdeterrence Between Nation-States: Plausible Strategy or a Pipe Dream? «Strategic Studies Quarterly», Spring 2011, Vol. 5, N 1:

¹⁶ Տես *Քեննետ Գիրս*, Նշ. աշխ.:

ապահովման ոլորտի առաջատար «Սիմանտեկ» (*Symantec*) կազմակերպության մասնագետները պնդում են, որ այնպիսի կիբեռվտանգներ, ինչպիսին «Ստաքսնետն» էր, հնարավոր է տասը առաջատար մասնագետների ներգրավմամբ ստեղծել ընդամենը վեց ամսում¹⁷: Հետևաբար զսպման քաղաքականությունը ոչ միայն պետք է ուղղված լինի հակառակորդ պետությունների դեմ, այլև ներառի ոչ պետական, երրորդային դերակատարների:

Հետևություն (3): *Կիբեռզսպումը պետք է նախատեսի դերակատարների ավելի լայն սպեկտր՝ պետական և ոչ պետական դերակատարների, այդ թվում՝ անհատների ներառմամբ:*

Կիբեռտարածության առանձնահատկություններից է կրկնվող բնույթի հարձակումների մշտական առկայությունը: Միջուկային սաստումը նպատակաուղղված է միջուկային զենքի ցանկացած օգտագործման կանխմանը, քանի որ միջուկային զենքի նույնիսկ մեկ կիրառումը կհանգեցնի զանգվածային ոչնչացման, իսկ համաչափ է, որովհետև զենքը կիրառվում է միայն համաչափ սպառնալիքի դեպքում (պետությունների միջև միջուկային կամ լայնամասշտաբ պատերազմի ժամանակ): Մինչդեռ կիբեռզսպումը մեծ մասամբ չի կարող լինել մեկանգամյա, որովհետև կիբեռտարածությունում պատժիչ գործողությունները չեն կարող ոչնչացնել կամ փոխել հակառակորդի մարտական և ռազմավարական կարողությունները: Ռուստի այն *կրկնվող բնույթի է կամ համակցվում է այլ քաղաքական կամ ռազմական միջոցների հետ:*

Միևնույն ժամանակ, համաձայն պատերազմի միջազգային իրավունքի՝ կիբեռհատուցումը պետք է համապատասխանի կրած վնասին: Համաչափության ապահովման նպատակն է *ագրեսիայի ծավալման վերահսկումը*: Միջուկային պատերազմի դեպքում ագրեսիայի վերահսկման կարիք այլևս չի լինում, որովհետև այն ռազմատենչության ամենաբարձր կետն է: Նույնը չի կարելի ասել կիբեռզսպման համար (տես *գրաֆիկ*): Անհամաչափ պատասխանը կարող է հանգեցնել ագրեսիայի ծավալման և պատերազմի, որտեղ արդեն կօգտագործվեն սովորական սպառազինություն և սովորական նախանշանակման ուժեր: Իսկ թիրախի սխալ որոշարկումը էլ ավելի կբարդացնի խնդիրը: Մյուս կողմից՝ համաչափությունը կարող է նվազեցնել զսպման արդյունավետությունը՝ սահմանափակելով պետությունների զսպող գործողությունները:



Հետևություն (4): *Կիբեռզսպման քաղաքականությունը չի կարող լինել մեկանգամյա դրսևորմամբ, պաշտպանությունը և պատժիչ գործողությունները կրում են մշտական համաչափ բնույթ:*

Վերջին դիտարկումը ուղղված է կիբեռզսպման քաղաքականության անթաքույց (*explicit*) կամ թաքնված (*implicit*) լինելուն: Հատկանշական է, որ մինչ օրս միայն ԱՄՆ-ն է որդեգրել կիբեռզսպման հրապարակային, բաց քա-

¹⁷ Stu Josh Halliday. Stuxnet worm is the «work of a national government agency». «theguardian», 24 September 2010 (<http://www.guardian.co.uk/technology/2010/sep/24/stuxnet-worm-national-agency>):

ղաքականություն, որն ամրագրվել է Պաշտպանական գերատեսչության կիբեռազմավարությունում: Իսկ մի շարք պետություններ կողմ են կիբեռ-զսպման ծածուկ քաղաքականությանը, որը կարելի է բխեցնել կիբեռան-վտանգության ռազմավարությունից և պաշտպանական ոլորտի պաշտոնյա-ների հայտարարություններից:

Կիբեռզսպման քաղաքականության հրապարակային, կամ բաց, ու ծածուկ լինելը կապված է զսպման քաղաքականության երրորդ բաղադրիչի՝ փոխհատուցման անխուսափելիության մեջ հակառակորդի համոզվածությա-յան հետ: Եթե որևէ պետության վրա կատարվում է հաջող կիբեռհարձակում, իսկ նա չի կիրառում հակամիջոց և չի պատժում, ապա կիբեռզսպման քա-ղաքականությունը կորցնում է իր վստահելիությունը և դառնում ոչ պիտանի:

Լիբիցկին իր աշխատությունում կատարում է կիբեռզսպման հրապարա-կային և ծածուկ քաղաքականությունների վարկածային վերլուծություն՝ կի-րառելով որոշումների կայացման մատրիցը¹⁸: Քանակական վերլուծությունը փաստում է, որ կիբեռզսպման հրապարակային քաղաքականությունը կա-րող է լինել ավելի արդյունավետ: ԱՄՆ-ը՝ որպես կիբեռտարածությունում մեծ դերակատար, որն ունի հսկայական ռեսուրսներ, ենթարկվում է ավելի հա-ճախ և ավելի մեծ թվով դերակատարների կիբեռհարձակումների: Հետևա-բար ԱՄՆ-ի համար Լիբիցկու կատարած հաշվարկումներում մեծ նշանա-կություն ունի միջոցառումների իրագործումն ընդդեմ սխալ թիրախի: Իսկ ՀՀ հակառակորդները շատ ավելի քիչ են, հետևաբար սխալ արձագանքման ռիսկը նվազում է, իսկ անթաքույց կիբեռզսպման ռազմավարության նպատա-կահարմարության աստիճանը՝ բարձրանում:

Այսպիսով՝ սույն հոդվածում արտածվեցին կիբեռզսպման քաղաքակա-նության, մեր կարծիքով, հիմնական հայեցակարգային ուղեցիղները: Դրանց հաշվառմամբ հնարավոր է հետագայում գնահատել կիբեռզսպման մշակ-ված քաղաքականության իրագործելիության աստիճանը:

¹⁸ Տես *Մարտին Լիբիցկի*, Նշ. աշխ., էջ 195:

КИБЕРБЕЗОПАСНОСТЬ

КИБЕРСДЕРЖИВАНИЕ КАК ВАЖНЫЙ ИНСТРУМЕНТ ОБЕСПЕЧЕНИЯ КИБЕРБЕЗОПАСНОСТИ

*А. О. НЕРЗЕТЯН, советник министра Диаспоры РА, почетный бакалавр
искусств Торонтского университета по специальности
«политология и международные отношения»*

РЕЗЮМЕ

Непрерывное развитие информационных технологий приводит к возникновению новых угроз и вызовов национальной безопасности всех государств. В связи с этим появляется необходимость в постоянном обновлении инструментария их парирования с учетом специфики киберпространства. Одним из таких инструментов является методология сдерживания киберпространства.

Существуют два способа киберсдерживания (*cyberdeterrence*): воспре-
щающее (*by denial*) и карательное (*by punishment*). Суть первого способа
заключается в убеждении противника в том, что его потери при преодолении
им системы защиты будут существенно превосходить ожидаемые выгоды.
При использовании карательного сдерживания противнику внушается уве-
ренность в том, что при ответном ударе ему будет нанесен неприемлемый
ущерб. Эффективность сдерживания обеспечивается комбинированным
применением обоих способов.

В соответствии с этим политика сдерживания зиждется на трех
основополагающих принципах: обеспечение необходимого и достаточного
уровня кибервозможностей; обеспечение целевых коммуникационных связей
с противником для передачи ему сообщения об ущербности кибератаки;
убеждение противника в неотвратимости нанесения ему ответного неприем-
лемого урона.

CYBERSECURITY

CYBERDETERRENCE AS AN ESSENTIAL CYBERSECURITY TOOL

*A. H. NERZETYAN, Advisor to the RA Minister of Diaspora,
Honors Bachelor of Arts, Political science and international relations,
University of Toronto*

SUMMARY


The continuous development of information technology (IT) leads to the
emergence of new threats and challenges to the national security of all states.
In this regard, a need emerges to continuously update the instrumentality for
parrying them taking into account the specific nature of cyberspace. One of
these tools is the methodology of deterrence in cyberspace.

There are two methods of cyberdeterrence: prohibiting (by denial) and
punitive (by punishment). The essence of the first method is to persuade the
adversary that its loss in overcoming the protection systems will significantly
exceed the expected benefits. When using the deterrence by punishment
towards the adversary, confidence is instilled that in case of retaliatory strike
unacceptable damage will be done. The combined use of both methods
ensures the effectiveness of deterrence.

In accordance with this, the policy of deterrence is based on three fundamental
principles: provision of a necessary and sufficient level of cyber capabilities;
provision of targeted communication links with the adversary aimed at transmitting
messages about detrimental effect of cyber attacks; the adversary's belief in the
inevitability of responsive unacceptable damage.

**ԿՏԱՆԳԱԿՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽՈՒՄԸ
ՋԶԷՌ-440/270 ՌԵԱԿՏՈՐԻ ՃՆՇՄԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑԻՉԸ
ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՏՈՒՐԸ ՄԻԱՑՆՈՂ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ
ՎԹԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

*Ս. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, ՀՀ ՀԱԷԿ-ի միջուկային անվտանգության
և հուսալիության բաժնի պետի տեղակալ,
Ա. Դ. ՀՈՎՍԵԹՅԱՆ, «Էնջինիերինգ օֆ սեյֆթի» ՍՊԸ-ի միջուկային ինժեներ*



Ատոմակայանի էներգաբլոկի աշխատանքի անվտանգության ապահովման հիմնական սկզբունքների ու գնահատման մեթոդների իմացությունը հնարավորություն է տալիս գիտակցաբար ու գրագետ կերպով կատարելու հրահանգագրերի պահանջները, ոչ ստանդարտ իրավիճակներում

արագորեն գտնելու ճիշտ լուծումներ, սարքավորանքի խափանումների դեպքում կանխատեսելու հնարավոր վտանգավոր զարգացումները: Ըստ այդմ պետք է մանրակրկիտ կերպով վերլուծվեն ոչ միայն «բնականոն» վթարային պրոցեսները, որոնց դեպքում գործարկվում են անվտանգության նախատեսված համակարգերը, այլև համեմատաբար քիչ հավանական այն վթարների հետևանքները, որոնք առաջանում են սարքավորանքի անկախ համակարգերի ու տարրերի միաժամանակյա խափանման պատճառով:

Անվտանգության ապահովման գլխավոր սկզբունքներից մեկը վթարների կանխումն է, որի երաշխիքներն են սարքավորանքի բնականոն շահագործման համակարգերի հուսալիությունը և անձնակազմի որակավորումը:

Ներկայացնենք էներգաբլոկի առաջին կոնտուրից դեպի հերմետիկ գոտի ջրի արտահոսքով պայմանավորված վթարների հաշվարկումներ, որպեսզի վերլուծական եղանակով հիմնավորենք կանգնեցված ռեակտորի վթարի դեպքում նախատեսված հրահանգագրերի պահանջները: Որպես նման վթարի կոնկրետ օրինակ օպերատորի անհրաժեշտ գործողությունների որոշման նպատակով դիտարկվում է ճնշման փոխհատուցիչը (ՃՓ) և առաջին կոնտուրը միացնող խողովակաշարի վնասումը, որից հետո օպերատորը միացնում է վթարային սնուցման պոմպը (ՎՍՊ):

Նման վթարի հավանականությունը գնահատվում է որպես $5,05 \times 10^{-6}$ պատահար/տարի: Ութն այս արժեքը շատ փոքր է, սակայն նման վթարների ուսումնասիրությունը կարևոր է և պահանջում է մանրակրկիտ ու խորը վերլուծություն, քանի որ դրանց հետևանքները կլինեն աղետալի ինչպես կայանի, այնպես էլ շրջակա միջավայրի ու բնակավայրերի համար:

Հաշվարկումները կատարվել են Հայաստանի ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) ՋՋԷՌ-440/270 ռեակտորի (ջրա-ջրային էներգետիկ ռեակտոր) ակտիվ գոտու և 2-րդ բլոկի սառեցման հնարավորությունը, բնականոն ու վթարային սնուցման (լրասնուցման) համակարգերի արդյունավետությունը, ինչպես նաև վթարի դեպքում՝ առաջին կոնտուրի ջերմակրի պաշարի նվազման պարագայում, ցածր ճնշման պոմպերի գործարկմանն ուղղված՝ օպերատորի գործողությունները գնահատելու նպատակով: Իրադարձությունների մեկնարկի պահին բլոկը գտնվում է ենթակրիտիկական վիճակում. առաջին կոնտուրում ջրի ջերմաստիճանը 150°C է, և 6 ՊՇՊ-ներից (գլխավոր շրջանառու պոմպ) աշխատում են միայն 4-ը: Դիցուք, իրենց նախագծային գործառնությունները կատարող՝ անվտանգության և բնականոն շահագործման բոլոր համակարգերից չեն աշխատում.

- մինչև 95 կգու/սմ² P₁₄-ի դեպքում ռեակտորի պաշտպանության և ՎՍՊ-ների միացումը մեկուսականխող (բլոկավորող) համակարգերը (P₁₄-ն առաջին կոնտուրում եղած ճնշումն է),

- ռեակտորի պաշտպանության և մինչև 35 կգու/սմ² P_{աՇԿ}-ի դեպքում ՊՇԿ (գլխավոր շոգեկլուեկտոր) մեկուսականխող համակարգերը,

- ըստ P₁₄-ի ՓԿՏ-ների (փոխհատուցիչի կարգավորող տաքացուցիչ) ու ՓՄՏ-ների (փոխհատուցիչի մեկնարկային տաքացուցիչ) ավտոմատ միացման մեկուսականխման համակարգերը,

- մինչև 30 կգու/սմ² P_{աՇԿ}-ի դեպքում ՊՇԿ մեկուսականխման համակարգը,

- H₁₄-ից (ջրի նոմինալ մակարդակ) 200 մմ-ով բարձր H_{աՇԿ} (ջրի մակարդակը շոգեգներատորում) դեպքում ՊՇՊ անջատման մեկուսականխման համակարգը,

- առաջին կոնտուրում արտահոսքի առաջացման դեպքում ՊՍՍՀ (պատասխանատու սպառողների սառեցման համակարգ) մեկուսականխման համակարգը:

ՃՓ-ում ջրի մակարդակը մինչև 2560 մմ իջնելու և առաջին կոնտուրում միջին ջերմաստիճանը մինչև 150°C նվազելու դեպքում ՎՍՊ ավտոմատ միացման մեկուսականխումն անջատվում է¹:

Այդ պատճառով հաշվարկումները կատարվել են ՎՍՊ-ների ինչպես ավտոմատ կերպով միացված, այնպես էլ չմիացված դեպքերի համար: Օպերատորի գործողությունների վերլուծության ժամանակ հաշվի է առնվել մի քանի անկախ խափանումների հնարավորությունը:

Հաշվումների համար օգտագործվել է RELAP5/Mod.3.2 համակարգչային կոդը:

2-րդ բլոկի առաջին և երկրորդ կոնտուրների ջերմակիրների համակարգերը մոդելավորելու համար ընտրվել է 6 օղակով հանգուցավորման (նողալացման) սխեմա: Մոդելավորման ժամանակ պահպանվել են պահանջվող ընդհանուր կանոնները. օգտագործվել են խողովակաշարերի հիմնական

¹ Стu «Программа нормального останова блока № 2 Армянской АЭС». УЭ.ЭТД.17.ТОП-002:

չափերը, հատվածքները, բարձունքային նիշերը, ջերմային կառուցվածքների ջերմունակությունը և այլն:

Մոդելը մշակվել է այնպես, որ պիտանի լինի մի շարք վթարային իրավիճակների և անցումային պրոցեսների վերլուծության համար:

Ռեակտորի իրանի մոդելը մշակված է նրա հիմնական բաղադրատարրերի ջերմահիդրավիկ բնութագրերին և երկրաչափությանը խիստ համապատասխանությամբ: Իրանի մուտքային և ելքային խողովակների կցամասերը մոդելավորված են որպես ռեակտորի իրանի մաս՝ միացված գլխավոր շրջանառու հանգույցներին: Մուտքային և ելքային հանգույցների համար օգտագործվել են «լայնական հոսքի» («*Cross flow*») տիպի միացումներ, որոնք մուտքի և ելքի բարձունքային նիշերի հաշվառմամբ հնարավորություն են տալիս մոդելավորելու խողովակի կցամասերի տիրույթում տեղի ունեցող ֆազային անցումները և դրանց ազդեցությունը օղակի հիդրավիկայի վրա:

Ակտիվ գոտին մոդելավորված է որպես չորս (երեք վառելիքային և մեկ կողանցային) զուգահեռ կանալներ (խուղակներ) պարունակող չորս տիրույթներ: Վառելիքային են տաք, միջին և կարգավորող կասետների (հավաքվածքներ) կանալները: Վառելիքային կանալներն ըստ առանցքների բաժանված են 13 բաղադրատարրերի: Առաջին (ստորին) և վերջին բաղադրատարրերը ակտիվ գոտու չտաքացվող մասն են, մնացած 11-ը՝ տաքացվող: Կողանցային կանալը բաժանված է 7 բաղադրատարրերի: Քանի որ վառելիքային կասետները գտնվում են բեռնամփոփներում, վառելիքային կանալների և կողանցային կանալի միջև հոսքը չի մոդելավորվել:

1-ին կոնտուրի ջերմակրի համակարգը կազմված է վեց շրջանառու օղակներից (մոդելավորվել են բոլոր վեցը), որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է տաք գծից, շոգեգեներատորից և սառը գծից: Գծերին տեղակայված են գլխավոր անջատիչ փականները (ԳԱՓ), իսկ յուրաքանչյուր սառը գծում մոդելավորված է գլխավոր շրջանառու պոմպը: Ճնշման փոխհատուցիչը միացված է առաջին գլխավոր շրջանառու օղակի տաք գծին:

Ճնշման փոխհատուցիչը մոդելավորված է որպես «խողովակ» («*pipe*») տիպի մի շարք ուղղաձիգ գլանաձև տիրույթներ: Ճնշման փոխհատուցիչն ստորին մասում երկու «շնչող» խողովակաշարերով միացված է 1-ին գլխավոր շրջանառու օղակի տաք գծի չանջատվող մասին, իսկ վերին մասում՝ ներմղման խողովակաշարով 2-րդ շրջանառու օղակի սառը գծին:

ԳՇՊ-ն մոդելավորված է «պոմպ» («*pump*») տիպի տարրով: Պոմպի մոդելի ուղղությունը հորիզոնական է: Ջերմակրի հոսքը, պոմպի ճնշումն ու պտտման հաճախականությունը որոշվում են ըստ սկզբնական ցուցանիշների: Հետադարձ պտտում չի թույլատրվում:

Երկրորդ կոնտուրում ՇԳ-ն մոդելավորվում է առաջինին համապատասխան, որպեսզի երկրորդ կոնտուրում ստեղծվի ջրի շրջանառության հնարավորություն: Այդ կոնտուրի ծավալները որոշվել են ըստ 24x30 մմ ցանցում խողովակափունջ պարունակող ծավալի:

ՇԳ-ի և ԳՇԿ-ի միջև շոգեմուղները մոդելավորվում են «խողովակ» և «կափույր» («*valve*») տիպի մի շարք տարրերով, որոնք ներկայացնում են

ՇԳ ապահովիչ կափույրներով, արագագործ փակագատիչ կափույրներով (ԱՓԶԿ), գոլորշու հիմնական փականներով (ԳՀՓ), ԱՌԿ-Կ-ներով* (արագագործ ռեդուկցիոն կայանք) և ԱՌԿ-Մ-ներով** շոգեմուղների ռեալ ուրվագիծը: Մոդելում օգտագործված են խողովակների իրական երկարությունները և բարձունքային նիշերը: Անվանական հզորությամբ աշխատելու դեպքում ԳՇԿ-ում ճնշումը հավասար է մոտավորապես 4,41 ՄՊա-ի:

Յուրաքանչյուր շոգեմուղում մինչև ԱՓԶԿ-ները տեղակայված են երկու ապահովիչ կափույրներ, իսկ ԱՌԿ-Մ-ն և ԱՌԿ-Կ-ն միացված են ԳՇԿ-ին:

Օպերատորի գործողությունների ընտրության ժամանակ վթարները վերլուծվում են բարելավված իրատեսական մոտեցման կիրառմամբ: Դա նշանակում է, որ սկզբնական պայմանների նկարագրման համար օգտագործվում են բոլոր պարամետրների անվանական և ամենահավանական արժեքները: Այն դեպքերում, երբ հապաղումների հաշվառումը կարևոր է, վերցվում են այդ հապաղումների իրատեսական արժեքները: Հաշվարկներում ըստ վերլուծության մեթոդաբանության հաշվի են առնվում ինչպես անվտանգության ու կառավարման, այնպես էլ բնականոն շահագործման համակարգերը, քանի որ դրանք կարող են ազդել վթարի զարգացման վրա²:

Առաջին կոնտուրն ու ՃՓ-ն միացնող՝ 245 մմ արտաքին տրամագծով և պատի 18 մմ հաստությամբ խողովակաշարի վթարը հանգեցնում է 209 մմ տրամագծով երկկողմ հոսի առաջացման: Հետագուտվող պատահարի դեպքում զարգացման ընթացքը հետևյալն է.

- առաջին կոնտուրում տեղի է ունենում ճնշման անկում, իսկ ՃՓ-ում՝ ջրի մակարդակի նվազում,

- սնուցման պոմպի (ՍՊ) ծախսը չի բավարարում ՃՓ-ում ջրի մակարդակի պահպանման համար, և ՃՓ-ում մակարդակը մինչև 2,56 մ նվազելու դեպքում ԳՇԿ-ները մեկուսականիսման հետևանքով անջատվում են,

- ճնշման անկման պատճառով առաջին կոնտուրում սկսվում է շոգեգոյացում,

- եթե օպերատորին չհաջողվի կազմակերպել առաջին կոնտուրի սնուցում, ապա տեղի կունենա ակտիվ գոտու վնասում:


Հաշվարկման ժամանակ արվել է լրացուցիչ ենթադրություն, թե վթարի սկզբում բոլոր ԳՇԿ-ներն անջատվում են, ինչը պայմանավորված է ԳՇԿ-ների անջատման շահագործական հրահանգագրերի պահանջով առաջին կոնտուրում ճնշման և հագեցման ճնշման միջև 10 կգու/սմ²-ից քիչ տարբերության դեպքում:

* Դեպի կոնդենսատոր գոլորշու արտանետման արագագործ սարք:


** Դեպի մթնոլորտ գոլորշու արտանետման արագագործ սարք:

² Stu «Guidelines for Accident Analysis of WWER Nuclear Power Plants» (IAEA-EBP-WWER-01). Vienna, December 1995 (<http://www.iaea.org/inis/collection/NCLCollectionStore/Public/28/047/28047164.pdf>); «RELAP5/MOD3 Code Manual», NUREG/CR 5535, INEL-95/0174, Vol. 1-7, June 1995 and SCIENETECH, Inc., March 1998:


Մենք հաշվարկել ենք $\Delta\Phi$ -ն և առաջին կոնտուրը միացնող խողովակաշարի վթարման հետևանքները այն դեպքի համար, երբ վթարից հետո օպերատորը միացնում է մեկ ՎՄՊ (տես նկ. 1 – նկ. 6):



Նկ. 1. ΔP -ի փոփոխումը առաջին կոնտուրում



Նկ. 2. Ջրի հոսքն ակտիվ գոտով




Կանխման շնորհիվ միանում են բոլոր ՍՊ-ները (նկ. 5): Սակայն ջրի մակարդակը $\Delta\Phi$ -ում (նկ. 4) շարունակում է ընկնել և ՎՄՊ միացման պայմանին հասնելիս ՍՊ-ներն անջատվում են (նկ. 5):



Առաջին իսկ վայրկյանին առաջին կոնտուրի ΔP -ը նվազում է մինչև այն արժեքը, որը հագեցման ΔP -ը գերազանցում է 10 կգ/սմ²-ից պակաս չափով, և համաձայն առաջին կոնտուրի շահագործման հրահանգագրերի՝ ՎՄՊ-ները պետք է անջատվեն: Թեև օպերատորը չի հասցնի այդ կարճ ժամանակում անջատել ՎՄՊ-ն, ինչը կհանգեցնի առաջին կոնտուրից դեպի երկրորդը կատարվող ջրմահեռացման նվազեցմանը, ուստի կարագացնի ակտիվ գոտու վնասումը, այդուհանդերձ, ընդունվում է ՎՄՊ-ն անջատելու պահանջված որոշում: Ակտիվ գոտով և օղակներով ջրի հոսքը նվազում է մինչև 0-ն (նկ. 2):

1-ին կոնտուրում ΔP -ն կտրուկ անկման հետևանքով ջրի բնականոն շրջանառությունը խափանվում է, և ակտիվ գոտու ելքում տեղի է ունենում շոգեգոյացում (նկ. 3):

$\Delta\Phi$ -ում ջրի մակարդակը կտրուկ կերպով նվազում է (նկ. 4), և մեկուսա-



Նկ. 4. Ջրի մակարդակը $\Delta\Phi$ -ում



Նկ. 6. Ջրի մակարդակը ռեակտորում

մեկ ՎՍՊ գործարկմամբ հնարավոր է խուսափել ակտիվ գոտու վնասումից, որը կհանգեցնե՛ր շատ ավելի մեծ աղետի և ծանր հետևանքների: Քանի որ կան 4 ավտոմատ կերպով միացվող ՎՍՊ-ներ, և դրանցից որևէ մեկի չմիանալու դեպքում կմիանա մյուսը, ապա ատոմային էլեյտրակայաններում

1800-րդ վայրկյանին օպերատորը միացնում է մեկ ՎՍՊ, և 1818-րդ վայրկյանից ջուրը ՎՍՊ-ից լցվում է առաջին կոնտուր: Կոնտրվատիվ կերպով ընդունված է, որ օպերատորը միացնում է կենտ օղակների միացված կանալի ՎՍՊ-ն (հոսն առաջին օղակում է): Ջրի մատակարարումն սկսվելուց հետո ռեակտորում և ակտիվ գոտում ջրի մակարդակը աճում և կայունանում է (նկ. 6): 2100-րդ վայրկյանից հետո ակտիվ գոտու ելքում շոգեպարունակությունը նվազում է և կայունանում է 70 %-ի շրջանում:

Այսպիսով՝ հողվածում ներկայացված հաշվարկումների արդյունքներից պարզ է դառնում, որ ՍՊ-ներով (սնուցող պոմպ) մատակարարվող ջրի քանակը բավարար չէ, և անհրաժեշտ է գործարկել մեկ ՎՍՊ: ՎՍՊ միացումից հետո մատակարարվող ջրի քանակը ավելին է լինում, քան հոսով արտահոսքը, ինչը հնարավորություն է տալիս համակշռելու այն: Այսինքն՝

Ճնշման փոխհատուցիչը և առաջին կոնտուրը միացնող խողովակաշարում ջրահոսի ստեղծման դեպքում մեր առաջարկած եղանակի կիրառման շնորհիվ հնարավոր կլինի էապես բարձրացնել անվտանգության մակարդակը:

ЭНЕРГЕТИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ПРЕДОТВРАЩЕНИЕ ОПАСНЫХ ПОСЛЕДСТВИЙ В СЛУЧАЕ ПОВРЕЖДЕНИЯ ТРУБОПРОВОДА, СОЕДИНЯЮЩЕГО КОМПЕНСАТОР ДАВЛЕНИЯ С ПЕРВЫМ КОНТУРОМ РЕАКТОРА ВВЭР-440/270

С. А. САРГСЯН, заместитель начальника отделения по ядерной безопасности и надежности Армянской АЭС РА, А. Д. ОВСЕПЯН, ядерный инженер ООО «Энджиниринг оф сейфти»

РЕЗЮМЕ

Авторами было осуществлено программное моделирование аварии в герметической зоне первого контура реактора ВВЭР-440/270 атомной электростанции, а именно: разрыв дыхательной линии компенсатора давления с последующим включением оператором одного аварийного подпиточного насоса. На основе расчетов выработана методика, позволяющая повысить безопасность и эксплуатационную надежность реактора в отношении подобных аварий.

ENERGY SECURITY

PREVENTION OF HAZARDOUS AFTERMATHS OF THE DAMAGE OF THE PIPELINE CONNECTING THE PRESSURIZER WITH THE FIRST CIRCUIT OF THE WWER-440/270 REACTOR

S. A. SARGSYAN, Deputy Chief, Nuclear Safety and Reliability Department, Armenian Nuclear Power Plant, A. D. HOVSEPYAN, Nuclear Engineer, "Engineering of Safety" LLC

SUMMARY

Authors of the article conducted a software modeling of an accident in the containment of the first circuit of the WWER-440/270 in the nuclear power plant, namely, a surge line break of the pressurizer with a successive activation of one of the emergency charging pumps by the operator. A technique has been worked out upon the computations, which enables to raise the security and service reliability level regarding such accidents.

**ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ
ԼՈՒՐՋ ԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

*Հ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, արդարադատության գնդապետ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, ՌԴ ՊՆ Ռազմական համալսարանի
քրեագիտության ամբիոնի դոկտորանտ*



Սկզբնական շրջանում «պատերազմական հանցագործություն» ու «լուրջ խախտում» հասկացությունները միջազգային իրավունքում ունեին տարբեր իմաստներ: Սակայն «լուրջ խախտում» տերմինի նշանակության զարգացմանը զուգընթաց դրանց միջև տարբերությունը հետզհետե վերանում է: Որպեսզի հասկանանք, թե ինչպես է «լուրջ խախտում» հասկացությունը աստիճանաբար նույնանում «պատերազմական հանցագործություն» հասկացության հետ, անհրաժեշտ է կատարել դրանց համեմատական վերլուծություն, որովհետև ժնկյան կոնվենցիաների տեքստերից այդ հասկացությունների հարաբերակցությունը հնարավոր չէ պարզել:

Առաջին անգամ «պատերազմական հանցագործություն» տերմինը միջազգային իրավունքում գործածվել է Վերսայյան պայմանագրի (1919 թ.) 228-րդ հոդվածում, բայց՝ առանց բովանդակության սահմանման:

Մինչ երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելը միջազգային իրավունքում արդեն կար զինված հակամարտություններում* գործելու վարքականոն: Այդ ժամանակ պատերազմական հանցագործություն ասելով հասկանում էին այն արարքները կամ բացթողումները, որոնք խախտում էին միջազգային մարդասիրական իրավունքն ու միջազգային քրեական իրավունքով որակվում էին որպես քրեական արարք:

Եվ միայն երկրորդ համաշխարհային պատերազմի (1939–1945 թթ.) ավարտից հետո 1945 թ. օգոստոսի 8-ին հաստատված Նյու-Դելեյթայնի միջազգային ռազմական տրիբունալի Կանոնադրության 6-րդ հոդվածով Տրի-

* Միջազգային և ոչ միջազգային զինված հակամարտությունների վերաբերյալ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի մասին ավելի հանգամանորեն տես հեղինակի՝ «Միջազգային իրավաբանական պրակտիկայում զինված հակամարտությունների մեկնաբանումը և դրանց համակարգման նկատմամբ մոտեցումները»: «ՀԲ», 2015, հմ. 3, «Զինված հակամարտության բնույթը և դրա նշանակությունը միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կիրառման ծավալի որոշման համար»: «ՀԲ», 2015, հմ. 4, «Զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննությանը խոչընդոտող գործոններ»: «ՀԲ», 2016, հմ. 1, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում Ադրբեջանի զինված ուժերի կատարած պատերազմական հանցագործությունների որակման որոշ պրոբլեմներ»: «ՀԲ», 2016, հմ. 2 հոդվածները:– *Խնթ.*

բունալին հնարավորություն տրվեց դատապարտելու այն անձանց, որոնք ի շահ Առանցքի եվրոպական պետությունների կատարել էին պատերազմական հանցագործություններ, այն է՝ պատերազմի օրենքների կամ սովորույթների խախտումներ: Սակայն Կանոնադրության 6-րդ հոդվածում չէին տրվում ո՛չ պատերազմական հանցագործությունների սպառիչ ցանկը, ո՛չ այդ հասկացության բովանդակությունը:

1949 թ. Ժնևյան չորս կոնվենցիաներում առաջին անգամ մանրակրկիտ կերպով թվարկված են պատերազմական հանցագործությունները: Դրանցից յուրաքանչյուրը պարունակում է ռազմական գործողությունների վարման կանոնների ու միջոցների «լուրջ խախտումների» ցանկը, խախտումների, որոնք ներկայումս միջազգային իրավունքում միանշանակ կերպով գնահատվում են որպես պատերազմական հանցագործություններ:

Դիվանագիտական խորհրդաժողովի մասնակից նիդեռլանդական պատվիրակության առաջարկությամբ Ժնևյան կոնվենցիաներում առաջին անգամ հիշատակվում է նաև միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի «լուրջ խախտում» հասկացությունը¹: «Հանցագործություն» տերմինն օգտագործելու վերաբերյալ խորհրդային պատվիրակության առաջարկությունը մերժվեց, քանի որ տարբեր պետություններում հանցագործության սահմանումը տարբեր էր, իսկ Դիվանագիտական խորհրդաժողովն օժտված չէր միջազգային քրեական իրավունք ստեղծելու մանդատով²:

1949 թ. Ժնևյան կոնվենցիաների լուրջ խախտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ փաստաթղթերը որպես իրավական նորմեր բավարար չափով մշակված չեն, որպեսզի օրենսգիրք ծառայեն, քանի որ դրանցում արտացոլված չեն. հանցագործության սուբյեկտիվ կողմը, պատասխանատվության տեսակները (բացառությամբ կատարման և կատարելու հրամանի արձակման), պատասխանատվությունից ու պատժումից ազատող հանգամանքները, ընթացակարգի կանոնները և այլն: Քանի որ պատվիրակությունների միջև քրեական իրավունքի նման անհրաժեշտ դրույթների վերաբերյալ համաձայնություն չկար, որոշում ընդունվեց, որ դրանք «թողնված են ազգային օրենսդրությունը կիրառող դատավորների հայեցողությանը»³:

Միևնույն ժամանակ, լուրջ խախտումների համար Ժնևյան կոնվենցիաներով չէր նախատեսվում որևէ միջազգային քրեական պատասխանատվություն: Դեռ ավելին. լուրջ խախտումներ էին համարվում այդ Կոնվենցիաների պահանջների խախտումները, որոնք համարվում էին այնքան լուրջ, որ պե-

¹ Տես «Final Record of the Diplomatic Conference of Geneva of 1949». Berne, Vol. II, Sec. B, P. 85; *Jean S. Pictet*. Commentary, IV, Geneva Convention relative to the Protection of Civilian Persons in Time of War. Geneva, 1958, PP. 585–587:

² Տես «Final Record of the Diplomatic Conference...», Vol. II, Sec. A, PP. 100, 157, 177–178, 184, 349, 527, 645, 647, 673–674, 716, 718, 822; Vol. II, Sec. B, PP. 31–33, 85–87, 115–117, 132–133, 355–360, 363; *Jean S. Pictet*. Commentary, I, Geneva Convention for the Amelioration of the Condition of the Wounded and Sick in Armed Forces in the Field. Geneva, 1952, P. 371:

³ Տես «Final Record of the Diplomatic Conference...», Vol. II, Sec. B, P. 115:

տությունները համաձայնվեցին կիրառել ազգային քրեական օրենսդրությունը, հետախուզել կասկածյալներին և դատի տալ, կամ նրանց հանձնել այլ պետության՝ դատելու համար⁴: Ինչ վերաբերում է ժնկյան կոնվենցիաների այլ՝ ոչ լուրջ, խախտումներին, ներքին օրենսդրության պատժամիջոցների բնույթը մնում էր մասնակից պետությունների հայեցողությամբ*:

Այսպիսով՝ սկզբնական շրջանում լուրջ խախտումների վերաբերյալ նորմերը դիտվում էին որպես ներքին օրենսդրության նորմերը գործարկելու և կիրառումն ապահովելու միջազգային պարտավորություն, վերաբերում էին իրավագործությանն ու դատավարությանը և կարգավորում էին այն հարցը, թե ինչպես միջազգային իրավունքի որոշակի խախտումների դեպքում ազգային օրենսդիր ու իրավապահ մարմինները պետք է ապահովեն արդարադատությունը:

1970-ական թվականների կեսերին պատերազմական հանցագործությունների և լուրջ խախտումների հարաբերակցությունը դարձել էր թեժ բանավեճի առարկա: Լրացուցիչ արձանագրությունների մախագծերին նվիրված դիվանագիտական խորհրդաժողովում որոշ պետություններ լուրջ խախտումները համարում էին պատերազմական հանցագործության կարգախմբերից մեկը⁵, մյուսները շեշտում էին դրանց միջև եղած տարբերությունը⁶: Ժնկյան կոնվենցիաների 1977 թ. 1-ին լրացուցիչ արձանագրությունը լուրջ խախտումների ռեժիմին տվեց որոշակի հիմնավորվածություն, սակայն դրան վերաբերող միջազգային պայմանագրային իրավունքը դեռ չի դարձել ինքնուրույն քրեական օրենսգիրք⁷:

1949 թ. ժնկյան կոնվենցիաների և 1977 թ. լրացուցիչ արձանագրությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ գոյություն ունեն պայմանագրային մարդասիրական իրավունքի նորմերի երկու տեսակ, որոնք միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի «լուրջ խախտումներ» են: Առաջինը այն լուրջ (ծանր) խախտումներն են (*grave*), որոնք կատարվում են միջազգային զինված հակամարտության համատեքստում և համընդհանուր իրավասությամբ պատերազմական հանցագործություններ են, իսկ երկրորդը այն լուրջ խախտումներն են (*serious*), որոնք ներառում են ինչպես առաջին տեսակի, այնպես էլ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի այլ կոպիտ խախտումներ:

⁴ Stu *Michael Bothe*. The role of national law in the implementation of international humanitarian law. «Studies and Essays on International Humanitarian Law and Red Cross Principles». The Hague, 1984, PP. 302–303, 305:

* ժնկյան չորս կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածը, ինչպես նաև, համապատասխանաբար, 49-րդ, 50-րդ, 129-րդ և 146-րդ հոդվածները, իսկ 1-ին արձանագրության 86-րդ (1), 89-րդ հոդվածները դա թողել են անփոփոխ:

⁵ Stu «Акты Дипломатической конференции по вопросу о подтверждении и развитии международного гуманитарного права, применяемого в период вооруженных конфликтов, Женева (1974–1977 гг.)», т. VI. Берн, 1978, сс. 297, 308, CDDH/SR.44, ч. 18, 81:

⁶ Stu նույն տեղում, հ. VI, էջ 308, CDDH/SR.44, մաս 85, և հ. IX, էջ 281–282, CDDH/I/SR.61, մաս 4–5:

⁷ Stu նույն տեղում, հ. IX, էջ 48–49, CDDH/I/SR.45, մաս 19, 23:

Ընդ որում, 1-ին լրացուցիչ արձանագրության 89-րդ հոդվածում նշվում է, որ Կոնվենցիայի կամ Արձանագրության լուրջ (*serious*) խախտումների դեպքում պետությունները պարտավորվում են միջոցներ ձեռնարկել ինչպես համատեղ, այնպես էլ անհատապես, ՄԱԿ-ի հետ համագործակցությամբ և ՄԱԿ-ի Կանոնադրությանը համապատասխան:

Թվում է, թե տվյալ դրույթը հնարավորություն է տալիս համարելու, որ այն լուրջ՝ *serious*, խախտումների դեպքում, որոնք լուրջ՝ *grave*, խախտումներ չեն, պետություններն ունեն համընդհանուր իրավասություն սահմանելու ոչ թե պարտավորություն, այլ իրավունք⁸: Սակայն եթե նույնիսկ պատերազմի ընթացքում կատարված որևէ դաժանություն ժնկյան կոնվենցիաների կամ 1-ին լրացուցիչ արձանագրության գործողությանը ենթակա չէ, այնուամենայնիվ, այն կարող է սովորության իրավունքով որակվել որպես պատերազմական հանցագործություն. նման հանցագործությունը սահմանվում է որպես «պատերազմի օրենքների ու սովորույթների խախտում» (հենց այդ ձևակերպումն էլ կիրառվել է Նյուեմբերգյան դատավարության ժամանակ):

Միջպետական հակամարտությունների առնչությամբ պետությունները համաձայնվել են, որ այդ հանցագործությունների շարքին են դասվում 1907 թ. Հաագայի կոնվենցիայի և դրան կից «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների վերաբերյալ կանոնադրության» պահանջների խախտումները⁹: Նշենք, որ տարբեր խախտումների սահմանազատումը, դրանք լուրջ խախտումներ համարելը կամ չհամարելը հստակ կերպով սահմանված ու անվիճելի չեն: Ընդ որում, մեր կարծիքով, առավել լուրջ խախտումները նույնպես առաջ են բերում անհատական պատասխանատվություն¹⁰:

Վետագայում՝ 1979 թ., դիվանագիտական խորհրդաժողովում առաջին անգամ առաջարկվեց «լուրջ խախտումները» սահմանել որպես պատերազմական հանցագործություններ¹¹, և ըստ այդմ 1-ին լրացուցիչ արձանագրության 85-րդ հոդվածի 5-րդ կետում կատարվեց համապատասխան փոփոխություն, որը պետություններին պարտավորեցնում էր ապահովել դրանք կատարած անձանց քրեական հետապնդումը՝ սահմանված կարգով¹²:

1-ին լրացուցիչ արձանագրության 86-րդ հոդվածով պատասխանատվություն մտցվեց նաև միջոցներ ձեռնարկելու պարտավորության առկայության դեպքում անգործության համար և պետի պատասխանատվությունը ենթակայի խախտումը կանխելու կամ կասեցնելու նպատակով գործնականում բոլոր հնարավոր միջոցները չկիրառելու դեպքում, եթե պետը գիտեր կամ պետք է իմանար խախտման մասին:

⁸ Տես *Ж.-М. Хенкертс, Л. Досвальд-Бек. Обычное международное гуманитарное право. Нормы, т. I. МККК, 2006, сс. 776–780:*

⁹ Տես *Р. А. Адельханян. Военные преступления в современном праве. М., 2006, с. 38:*

¹⁰ Տես *С. Р. Ратнер. Категории военных преступлений. «Военные преступления. Это надо знать всем». Под ред. Ю. М. Колосова. М., 2001:*

¹¹ Տես «Акты Дипломатической конференции по вопросу...», т. X, с.130, CDDH/234/Rev.I, ч. 77:

¹² Տես նույն տեղում, հ. IX, էջ 46, CDDH//SR.45, մաս 11:

1993 թ. նախկին Հարավսլավիայի համար միջազգային քրեական տրիբունալի (ՀՄՔՏ) Կանոնադրության մեջ լուրջ խախտումները ներառվեցին 2-րդ հոդվածում, իսկ պատերազմական հանցագործությունները՝ 3-րդ, առանց նման տարանջատման պատճառների նշման: Դա հաստատում էր այն փաստը, որ լուրջ խախտումները դարձել են միջազգային հանցագործություն:

Միևնույն ժամանակ, Կանոնադրությունում չէին հիշատակվում այնպիսի կարևոր տարրեր, ինչպիսիք են պատասխանատվությունից ազատող սուբյեկտիվ կողմն ու հանգամանքները, և այդ բացը պետք է լրացվեր նախադեպային իրավունքով:

Այս մոտեցմամբ պատերազմական հանցագործությունների նյութական բովանդակությունը դառնում է ավելի անորոշ, քան լուրջ խախտումների պայմանագրային սահմանումը, ինչը վերջինիս տալիս է առավելություն¹³:

Ռուանդայի համար միջազգային քրեական տրիբունալի (ՌՄՔՏ) կանոնադրության 3-րդ հոդվածը առարկայական իրավասությանը վերագրեց այդ թվում նաև այն նորմերի լուրջ խախտումների ոչ սպառիչ ցանկը, որոնք ամրագրված են պատերազմի զոհերի պաշտպանության մասին 1949 թ. ժնկյան կոնվենցիաներում և ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների զոհերի պաշտպանությանը վերաբերող 1977 թ. 2-րդ լրացուցիչ արձանագրությունում:

Նման հանցակազմեր են ձևակերպված նաև Սիեռա Լեոնեի համար Հատուկ դատարանի Կանոնադրության 3-րդ հոդվածում և խառնակազմ դատարանների կանոնադրություններում:

Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի ստատուտում (1998 թ.) որպես պատերազմական հանցագործության կարգախմբերից մեկը թվարկվում են լուրջ խախտումները (սովորության իրավունքի համակարգից դուրս բերված, սակայն միջազգային սովորության իրավունքի հաշվառմամբ հիմնական պատերազմական հանցակազմերը ներառած): Ընդամին Ստատուտի 8-րդ հոդվածում որպես պատերազմական հանցագործություն են որակվում «միջազգային զինված հակամարտություններում օրենքների և սովորույթների լուրջ խախտումները» և «ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություններում օրենքների և սովորույթների լուրջ խախտումները»¹⁴, սակայն միջազգային զինված հակամարտության դեպքում կիրառելի դրույթների մոտ կեսը չի տարածվում ներքին զինված հակամարտության դեպքերի վրա:

ՄՔԴ Հռոմի ստատուտի լուրջ խախտումներին վերաբերող 8(2)(a) և այլ պատերազմական հանցագործություններին վերաբերող 8(2)(b) հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ կան այնպիսի իրավիճակներ, որոնց նկատմամբ կիրառելի են ինչպես լուրջ խախտումների, այնպես էլ պատերազմական հանցագործությունների վերաբերյալ դրույթները: Օրինակ՝ ռազ-

¹³ Տես «Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction (Appeals Chamber)». The Prosecutor v. Duško Tadic. aka. Dule. Case No. IT-94-1-A, 2 October 1995, para 94; *ժ.Մ. Հենկերս, Լ. Դոսվալդ-Քեյ, Նշ. աշխ., էջ 729–730*:

¹⁴ Տես «Римский статут МУС» (A/CONF.183/9) ([http://www.un.org/ru/law/icc/rome_statute\(r\).pdf](http://www.un.org/ru/law/icc/rome_statute(r).pdf)):

մագերու կանխամտածված սպանություն հիշատակվում է հոդված 8(2)(a)(I)-ում, որը նույնական է գերի հանձնված կոմբատանտի սպանության պատերազմական հանցագործությանը՝ հոդված 8(2)(b)(VI):

Միևնույն ժամանակ, կան բազմաթիվ փաստացի իրավիճակներ, որոնք լուրջ խախտումներ են, բայց չեն համապատասխանում ՄՔԴ Հռոմի ստատուտում որևէ պատերազմական հանցագործության սահմանմանը: Օրինակ՝ հոդված 8(2)(b)(VIII)-ում նշված այնպիսի լուրջ խախտումը, ինչպիսին պատանդ վերցնելն է, տարբերվում է հոդված 8(2)(b)-ում թվարկված ցանկացած պատերազմական հանցագործությունից: ՄՔԴ դատախազը ներկայացրել է մեղադրանքներ, որոնք հիմնված էին այնպիսի լուրջ խախտումների սահմանման վրա, ինչպիսիք են կանխամտածված սպանությունը և անմարդկային վերաբերմունքը, որոնք ավելի էին համապատասխանում հանցանք համարված փաստերին, քան ՄՔԴ Հռոմի ստատուտի՝ պատերազմական հանցագործություններին վերաբերող ցանկացած այլ դրույթ¹⁵: Ըստ այդմ՝ վերլուծության հիման վրա կարող ենք ասել, որ սովորության միջազգային իրավունքը և ՄՔԴ Հռոմի ստատուտի իրավական դրույթները զգալի չափով համընկնում են, թեև վերջիններս երբեմն ավելի նեղ են, քան համապատասխան նյութական նորմերը¹⁶: Այդուհանդերձ, այն պետությունները, որոնք չեն վավերացրել ՄՔԴ Հռոմի ստատուտը, կարող են հայտարարել, թե նրա որոշ ենթադատական դրույթներ չեն արտացոլում սովորության իրավունքով որակված պատերազմական հանցագործությունները, հատկապես նրանք, որոնք քաղված են 1-ին լրացուցիչ արձանագրությունից:

Այսպիսով՝ նախկին Հարավսլավիայի ու Ռուանդայի համար միջազգային տրիբունալների կանոնադրությունները և ՄՔԴ Հռոմի ստատուտը, որոնք միջազգային քրեական իրավունքի արդյունավետ գործիքներ են, հաստատում են, որ լուրջ խախտումներն այժմ արդեն ներառված են պատերազմական հանցագործության կարգախմբում:

Ներկայումս դիտվում է միջազգային և ոչ միջազգային հակամարտություններում կատարվող պատերազմական հանցագործություններին վերաբերող նորմերի փոխներդաշնակեցման ու միօրինակացման միտում, ինչն արտացոլվում է ժամանակակից կոդիֆիկացումներում: Միջազգային և ներքին բնույթի հակամարտությունների մերձեցման միտումը նախ արտահայտվել է նախկին ՀՄՔՏ պրակտիկայում¹⁷, իսկ ՄՔԴ Հռոմի ստատուտը միայն շարունակել է այդ ուղեգիծը: Միևնույն ժամանակ, միջազգային իրավական դոկտրինում արտահայտված է մեկ այլ կարծիք. «միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների միջև տարանջատումը, որը որոշ իմաստով հնացած է, պահպանվում է: Այդ տարանջատումը հակասում է ար-

¹⁵ Stu «Amended document containing the charges pursuant to Article 61(3)(a) of the Statute». The Prosecutor v. Germain Katanga and Mathieu Ngudjolo Chui, Case No. ICC-01/04-01/07. ICC, 26 June 2008, Annex 1A:

¹⁶ Stu *ժ.-Մ. Հենկերս, Լ. Ղոսվալդ-Բեկ*, Նշ. աշխ., էջ 736–758; «Римский статут МУС», ст. 8(2)(a) и (b); *Մայքլ Բոթ*, Նշ. աշխ., էջ 387, 396:

¹⁷ Stu «Decision on the Defence Motion for Interlocutory Appeal...», para 126:

դարադատության գաղափարին և... հավասարապես հակասում է տրամաբանությանն ու առողջ դատողականությանը»¹⁸:

«Պատերազմական հանցագործություն» և «լուրջ խախտում» հասկացությունների հարաբերակցության վերլուծությունում ենթադրություն էր արվել, թե պատերազմական հանցագործությունները կարող են կատարվել միայն ռազմական գործողությունների ժամանակ, իսկ լուրջ խախտումները կարող են կատարվել նաև դրանցից հետո¹⁹: Սակայն ըստ ՄՔԴ Հռոմի ստատուտի՝ ինչպես նյութաիրավական բնույթի լուրջ խախտումները, այնպես էլ պատերազմական հանցագործությունները կատարվում են միջազգային զինված հակամարտությունների ժամանակ, թեև այդ հասկացությանը վերագրված է լայն իմաստ, որը ներառում է բռնազավթումը²⁰:

Բոլոր լուրջ խախտումների ձևակերպումները սահմանափակվում են «հովանավորյալ անձանց» և «պաշտպանության ներքո գտնվող օբյեկտների» սահմանումներով, որոնք կան համապատասխան կոնվենցիաներում: 1-ին լրացուցիչ արձանագրությունը թեև ընդլայնել է այդ կարգախմբերի բովանդակությունը, բայց հովանավորյալ անձանց թվում չի ներառել մասնակից պետությունների քաղաքացիներին²¹:

Ժամանակակից սովորուբային միջազգային իրավունքում պատերազմական հանցագործությունների հնարավոր զոհերի ցանկն ավելի ընդարձակ է, քան լուրջ խախտումներին վերաբերող դրույթներում²²: Ուստի զինված հակամարտության զոհերի առնչությամբ միշտ կարելի է ներկայացնել մեղադրանք ոչ թե լուրջ խախտում, այլ պատերազմական հանցագործություն կատարելու մեջ:

Ժնևյան կոնվենցիաների համաձայն՝ լուրջ խախտում կարող է կատարել միայն այն անձը, որը պատկանում է զինված հակամարտության մյուս կողմին²³: Ուստի հանցագործի անձի պատկանելության տեսակետից պատերազմական հանցագործությունների և լուրջ խախտումների միջև տարբերություն չկա: Լուրջ խախտումների կատարումը հիմնավորելու համար անհրաժեշտ է ապացուցել, թե հանցագործին հայտնի էր, որ զոհը պատկանում է հակառակորդ կողմին, և որ տուժած անձը կամ օբյեկտը գտնվում էին 1949 թ.

¹⁸ Stu *E. Roucouas*. *Facteurs Priveeset Droit International Public*. Leiden, Boston, 2003, P. 378:

¹⁹ Stu *Ghislaine Doucet*. *La qualification des infractions graves au droit international humanitaire*. «Implementation of International Humanitarian Law». Dordrecht, 1989, P. 83:

²⁰ Stu *Knut Dörmann*. *Elements of War Crimes under the Rome Statute of the International Criminal Court*. Cambridge University Press. Cambridge, 2002, PP. 17–18, 128; *Horst Fischer*. *Grave breaches of the 1949 Geneva Conventions*. «Substantive and Procedural Aspects of International Criminal Law: The Experience of International and National Courts». The Hague, 2000, PP. 81–83:

²¹ Stu «Дополнительный Протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв международных вооружённых конфликтов (Протокол I)», ст. 11(4) и 85(2) (https://www.icrc.org/rus/assets/files/2013/ap_i_rus.pdf):

²² Stu *ժ.-Մ. Հենկերս, Լ. Դոսվայդ-Քեյ, Նշ. աշխ., էջ 733, Guénaél Mettraux*. *International Crimes and the Ad Hoc Tribunals*. Oxford, 2005, PP. 54–55:

²³ Stu *Michael Bothe, Karl J. Partsch and Waldemar A. Solf*. *New Rules for the Victims of Armed Conflicts: Commentary on the Two 1977 Protocols Additional to the Geneva Conventions of 1949*. The Hague, 1982, P. 115:

Ժնկյան կոնվենցիաների պաշտպանության տակ: Բացի այդ, լուրջ խախտումները սահմանափակվում են միջազգային զինված հակամարտությունների շրջանակներով, մինչդեռ մեծ թվով պատերազմական հանցագործությունների վերաբերյալ դրույթները կիրառելի են նաև այլ տեսակի զինված հակամարտությունների դեպքում:

«Լուրջ խախտում» հասկացությունը (1949 թ. տարբերակով) «պատերազմական հանցագործություն» հասկացության համեմատությամբ ունի միայն մեկ բացահայտ առավելություն. այն ընդունում են աշխարհի բոլոր պետությունները, և իրավակիրառման պրակտիկայում դրա գործածությունը պարտադիր է: Սակայն ժամանակի ընթացքում այդ առավելությունը փոքրինչ համահարթվել է, քանի որ որոշ լուրջ խախտումների բովանդակությունը (1979 թ. տարբերակով) ծայրաստիճան հակասական է, մինչդեռ այսօր լայնորեն տարածված է մեծ թվով հակաիրավական արարքների որակումը որպես պատերազմական հանցագործությունների:

Բացի այդ, լուրջ խախտումների բովանդակությունը ոչ այնքան լիարժեք կերպով է ձևակերպված, որքան պատերազմական հանցագործություններինը, ինչի պատճառով ազգային քրեական օրենսդրության շրջանակներում դրանք ավելի դժվար է մանրամասնել:

Ինչ վերաբերում է լուրջ խախտման կատարման ժամանակին, ապա 1949 թ. ժնկյան կոնվենցիաները և 1977 թ. 1-ին լրացուցիչ արձանագրությունը դրանց նկատմամբ միմիայն կիրարկվում են զինված հակամարտության կամ բռնազավթման հենց սկզբից և մինչև (կախված համապատասխան նորմից) ռազմական գործողությունների ընդհանուր ավարտը, բռնազավթման ավարտը կամ հակառակորդի ձեռքում գտնվող հովանավորյալ անձանց վերջնական ազատագրումը, հայրենադարձությունը կամ տեղավորումը²⁴:

Պատերազմական հանցագործությունների դեպքում, նախկին ՀՄՔՏ Բողոքարկման գրասենյակի կարծիքով, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը կիրառվում են «զինված հակամարտության սկզբից և շարունակում են կիրառվել ռազմական գործողությունների դադարեցումից հետո՝ մինչև խաղաղության ընդհանուր կնքումը»²⁵:

Համաձայն ժամանակակից միջազգային իրավունքի՝ պատերազմական հանցագործությունները կարող են կատարվել ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային հակամարտությունների ժամանակ²⁶, իսկ լուրջ խախտումներին վերաբերող դրույթները կիրառելի են միայն միջազգային զինված հակամարտությունների դեպքում*։ Ուստի միշտ հնարավորություն կա մե-

²⁴ Տես ժնկյան առաջին ու երկրորդ կոնվենցիաների 5-րդ հոդվածները և չորրորդ կոնվենցիայի 6-րդ հոդվածը, 1-ին լրացուցիչ արձանագրության 3-րդ ու 75(6)-րդ հոդվածները: Ժնկյան չորրորդ կոնվենցիայի 3-րդ ու 6-րդ հոդվածները չեն վերաբերում լուրջ խախտումների ռեժիմի կիրառելիությանը:

²⁵ «Decision on the Defence Motion for Interlocutory Appeal...», para 70:

²⁶ Տես «Римский статут МУС», ст. 8(2); «Decision on the Defence Motion for Interlocutory Appeal...», para 89:

* Ոչ ժնկյան չորս կոնվենցիաները, ոչ 2-րդ լրացուցիչ արձանագրությունը չեն բովանդակում դրույթներ, որոնք վերաբերեին ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների ժամանակ կատարվող լուրջ խախտումներին:

դադրանք առաջադրելու ոչ թե լուրջ խախտման, այլ պատերազմական հանցագործության կատարման մեջ²⁷:

Թեև ներկայումս պատերազմական հանցագործությունների և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի «լուրջ խախտումների» միջև եղած տարբերությունը միջազգային-իրավական ակտերում աստիճանաբար վերանում է, այդուհանդերձ որոշ տարբերություններ պահպանվում են, ինչը պայմանավորված է, առաջին հերթին, այն հանգամանքով, որ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի «լուրջ խախտման» դեպքում մեղավոր անձանց քրեական հետապնդումը պարտադրաբար ապահովվում է ազգային օրենսդրության մակարդակով, մինչդեռ պատերազմական հանցագործություններ կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկումը կարող են քրեական արդարադատության ազգային մարմինների հետ մեկտեղ կատարել արդարադատության միջազգային մարմինները²⁸:

Այսպիսով՝ «պատերազմական հանցագործություն» և «լուրջ խախտում» հասկացությունները միջազգային իրավունքում կիրառվել են որպես առանձին և բովանդակությամբ չհանընկնող տերմիններ: Ընդսմին «լուրջ խախտում» և «պատերազմական հանցագործություն» տերմինների միջև հիմնական տարբերությունն այն է, որ թեև երկու դեպքում էլ տեղի է ունենում միջազգային իրավունքի նորմի խախտում, սակայն լուրջ խախտումը առաջ է բերում քրեական հետևանքներ ըստ ազգային իրավունքի, իսկ պատերազմական հանցագործությունը՝ ըստ միջազգային իրավունքի:

²⁷ Stu M. D. Эберг. Поглощение серьезных нарушений нормами права, касающимися военных преступлений. «Международный журнал Красного Креста». Женева, 2009, № 873:

²⁸ Stu նույն տեղում:

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

СООТНОШЕНИЕ КОНЦЕПЦИЙ СЕРЬЕЗНОГО НАРУШЕНИЯ МЕЖДУНАРОДНЫХ НОРМ ГУМАНИТАРНОГО ПРАВА И ВОЕННОГО ПРЕСТУПЛЕНИЯ

*Г. М. ГРИГОРЯН, полковник юстиции, кандидат юридических наук,
докторант кафедры криминалистики Военного Университета МО РФ*

РЕЗЮМЕ

Согласно Женевским конвенциям (1949 г.) и Дополнительному Протоколу I (1977 г.) существуют две разновидности нарушений норм договорного гуманитарного права, которые являются «серьезными нарушениями» норм международного права: в первом случае серьезные нарушения («grave») совершаются в контексте международного вооруженного конфликта и являются военными преступлениями с универсальной юрисдикцией, а во втором – серьезные нарушения («serious»)

наряду с вышеуказанными «серьезными нарушениями» включают в себя и другие грубые нарушения норм международного права.

В 8-ой статье Римского Статута МУС (1998 г.) военные преступления понимаются как «серьезные нарушения законов и обычаев в международных вооруженных конфликтах» и «серьезные нарушения законов и обычаев в вооруженных конфликтах немеждународного характера».

В современном обычном международном праве перечень потенциальных жертв военных преступлений шире, чем в договорных положениях о серьезных нарушениях. Поэтому в случаях, касающихся жертв вооруженного конфликта, всегда можно предъявить обвинение в совершении военного преступления, а не серьезного нарушения.

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

THE CORRELATION OF THE CONCEPTS OF A SERIOUS VIOLATION OF INTERNATIONAL NORMS OF HUMANITARIAN LAW AND A WAR CRIME

*H. M. GRIGORYAN, Colonel of Justice, PhD in Law, Doctoral Student
in Criminalistics, Military University, Ministry of Defense,
the Russian Federation*

SUMMARY

According to the Geneva Conventions (1949) and the Additional Protocol I (1977), there are two kinds of violations of norms of the humanitarian law based on treaties, which are “serious violations” of international law: in the first case, grave violations are committed in the context of an international armed conflict and are war crimes with universal jurisdiction, and in the second – serious violations together with the above mentioned “grave violations” include other flagrant violations of international law.

In the Article 8 of the Rome Statute of the ICC (1998) war crimes are perceived as “serious violations of the laws and customs applicable in international armed conflicts” and “serious violations of the laws and customs of armed conflicts not of an international character”.

In contemporary customary international law the list of potential victims of war crimes is longer than that of in the treaty provisions on serious breaches. Therefore, in cases relating to the victims of an armed conflict, filing an accusation of a war crime, rather than of a serious breach is always possible.

**ՖԵՅՍԲՈՒՔ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ
ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ
ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, մայրո, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ավագ սպա

ՀՀ ազգային անվտանգության ապահովման համատեքստում տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրությունն¹ այսօր ստանում է ավելի ու ավելի մեծ կարևորություն, հատկապես՝ անընդհատ զարգացող սոցիալական մեդիայի ուսումնասիրությունը²:



Աշխարհում հինգ առավել այցելվող կայքերից մեկը Ֆեյսբուքն է³, որն ըստ այդ ցուցանիշի Գուգլ համաշխարհային որոնողական համակարգից հետո երկրորդն է: 2016 թվականի ապրիլ ամսվա դրությամբ Ֆեյսբուքն ակտիվ օգտատերերի թվաքանակով աշխարհում ամենահայտնի սոցիալական ցանցն էր⁴: Ավելին. այն վերածվել է մարդու էության և գործունեության վերաբերյալ համացանցային (*online*) անձնագրի⁵: Թեպետ Ֆեյսբուքի օգտատերերի 70 %-ը գտնվում է ԱՄՆ-ից դուրս, սակայն նրա 500 ճանաչված համալսարաններում անցկացված հարցման արդյունքներով պարզվել է, օրինակ, որ ընդունող հանձնաժողովի 10 %-ը նայում է դիմորդների Ֆեյսբուքի պրոֆիլները և ըստ դրա կատարում որոշակի եզրակացություններ: Թեև սկզբում Ֆեյսբուքը նախատեսված էր ուսանողների համար, սակայն այժմ այնտեղ գրանցված օգտատերերի 70 %-ը 26 տարեկանից բարձր տարիքի մարդիկ են: Միջին հաշվով մի օգտատերը Ֆեյսբուքի վրա օրվա ընթացքում ծախսում է մոտ 55 րոպե, մեկ ամսում

¹ Տես *Հայկ Քոթանջյան, Արթուր Աթանեսյան, Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ու գերակայությունների վերլուծությունը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում*: «ՀԲ», 2016, հմ. 1:

² Տես, օրինակ, *Արշեն Շահվերդյան, Բլոգ-կայքերը որպես սոցիալական համախմբման գործիք*: «ՀԲ», 2015, հմ 4:

³ Տես *Sarah Phillips. A brief history of Facebook. «The Guardian», 25 July 2007* (<https://www.theguardian.com/technology/2007/jul/25/media.newmedia>); *Nicholas Carlson. At Last – The Full Story Of How Facebook Was Founded. «BUSINESS INSIDER»* (<http://www.businessinsider.com/how-facebook-was-founded-2010-3#wecan-talk-about-that-after-i-get-all-the-basic-functionality-up-tomorrow-night-1>):

⁴ Տես «Most famous social network sites worldwide as of September 2016, ranked by number of active users (in millions)». «Statista» (<http://www.statista.com/statistics/272014/global-social-networks-ranked-by-number-of-users/>):

⁵ Տես *Якоб Штайншаден. Социальная сеть. Феномен Facebook. СПб., 2011*:

գրում է 25 մեկնաբանություն: 2016 թվականի հուլիս ամսին Ֆեյսբուքի լսարանը կազմել է 1 մլրդ 710 մլն օգտատեր: Սրանք այն մարդիկ են, որոնք իրենց պրոֆիլն այցելում են գոնե ամիսը մեկ անգամ: Նրանցից 35 մլն-ն ամեն օր փոխում կամ թարմացնում են իրենց գրառումները (Ֆեյսբուքյան ստատուսները): 2016 թ. մարտի 31-ի դրությամբ Ֆեյսբուքի օգտատերերի ամսական ակտիվությունը կազմել է 1 մլրդ 650 մլն մարդ, իսկ օրական ակտիվությունը՝ 720 մլն մարդ: Ֆեյսբուք սոցիալական ցանցը լայն կիրառություն ունի նաև բջջային հավելվածի միջոցով (մասնավորապես՝ սմարտֆոններում) և կազմում է ավելի քան 1,03 մլրդ մարդ: Ամեն օր Ֆեյսբուքի օգտատերերը թողնում են 6 մլրդ հավանության նշան («Like») և մեկնաբանություն, հրապարակում շուրջ 300 միլիոն լուսանկար: Ամսվա կտրվածքով տեղադրվող լուսանկարների թիվը հասնում է 2,5 մլրդ-ի: Ֆեյսբուքում գրանցված են 200 մլրդ ընկերական կապեր⁶: Միջին հաշվով Ֆեյսբուքյան մեկ օգտատերն ունի 130–200 ընկեր: 2011 թվականի հոկտեմբերին կայքի էջերի դիտումների թիվը կազմել է 1 տրիլիոն: 2015 թվականին կայքի տեսանյութերի օրական դիտման թիվը կազմել է շուրջ 8 մլրդ:

Այսպիսի վիթխարի լսարան և նյութերի տարածման հնարավորություններ ունեցող սոցիալական ցանցը հսկայական հնարավորություններ է ստեղծում նաև հայ օգտատիրոջ համար: «Ֆեյսբուքահայությունը» մեծ ակտիվություն է ցուցաբերում աշխարհի երևակայական (վիրտուալ) կյանքում⁷: Մեր հայրենակիցների մի զգալի մասը ամեն օրն սկսում է իր պրոֆիլի այցելությամբ, օրվա ընթացքում կատարում դրա բազմակի այցելություններ և ցուցաբերում զգալի ակտիվություն: Ֆեյսբուքում հայ օգտատերերի թիվն օրեցօր աճում է⁸: Ինչպես ամբողջ աշխարհում, մեզանում ևս տարբեր խնդիրների շուրջ ձևավորվում են Ֆեյսբուքահայության ձակատներ, խմբեր, ընկերակցություններ, որոնք միասնական քայլեր են ձեռնարկում, այդ թվում նաև համացանցում տարածվող հակահայկական քարոզչության դեմ⁹:

Ֆեյսբուքում հայ օգտատերերի տեղադրած ու տարածած հասարակական ու պետական ընդգրկմամբ ամենատարբեր ու բազմազան տեղեկույթի մեջ քիչ չեն զինվորական, բանակային ու անվտանգային թեմաներով նյութերը: Բանակի վերաբերյալ մտքերի, կարծիքների փոխանակման և նյութերի տարածման առումով նրանք հատկապես ակտիվանում են Ղարաբաղյան հակամարտության շփման գծում, սահմանամերձ գոտում և Արցախում իրադրության սրման և այլ իրավիճակներում: Ընդ որում, նկատելի են ոչ միայն դեպքերի զուտ լուսաբանումներ ու տարածումներ, այլև ստատուս-

⁶ Տես «Facebook Expansion Enables More People to Connect with Friends in a Trusted Environment». «Facebook Newsroom», 4 February 2016:

⁷ Տես ««Ֆեյսբուքահայություն». Իրական համայնք վիրտուալ տարածքում», 13.02.2011 (<http://www.media.am/armenian-facebook>), *Նաև*՝ «Ֆեյսբուքն, աշխարհն ու հայերը», 08.09.2015 (<http://m.mamul.am/am/post/49427>):

⁸ Տես ««Facebook»-ում հայերը շատանում են» (<http://armtimes.com/hy/article/41197>):

⁹ Տես «Ի՞նչ են փնտրում հայերը Ֆեյսբուքում» (<http://henaran.am/11491.html>):

ների տեսքով ձևակերպվող գնահատականներ ու տարբեր լրատվական կայքերում դրանց վերահրապարակումներ:

Այսպիսի ակտիվության մեծ աճ գրանցվեց, մասնավորապես, 2016 թ. ապրիլին Չորսորյա պատերազմի ժամանակ: ՊՆ պաշտոնական հիմնական տեղեկույթի տրամադրողներ էին ՊՆ լրատվական օղակը, որը պաշտոնապես լուրեր էր տարածում ԶԼՄ-ներին և դրանք տեղադրում ՊՆ պաշտոնակայքում, «Ռազմինֆո» կայքը, ԼԴՀ Պաշտպանության բանակի լրատվական օղակները: Հավաստի պաշտոնական տեղեկույթի տարածման արագ ու վստահելի ֆեյսբուքյան հարթակ էր հատկապես ՀՀ Պաշտպանության նախարարի մամլո քարտուղար Արծրուն Հովհաննիսյանի ֆեյսբուքյան էջը, որին հղում տալով՝ լրատվական կայքերը տարածում էին նորություններ մարտական գործողությունների, վիրավորների ու կորուստների, հաղթանակների ու թշնամու ուժերի ջախջախման վերաբերյալ:

Չորսորյա պատերազմի ամփոփմամբ ֆեյսբուքում հրապարակվեցին զանազան գնահատականներ, վերլուծություններ՝ մասնագետների և պաշտոնատար անձանց պրոֆիլներից¹⁰ մինչև անհատ քաղաքացիների ֆեյսբուքյան ստատուսներ և նաև կեղծանուն պրոֆիլներ («fake»): Այդ պրոֆիլներում հրապարակվող ստատուսները շատ անգամ վերահրապարակվում էին ԶԼՄ-ներում ու տարածվում դրանց կայքերի լսարաններում¹¹:

Ֆեյսբուքում տեղեկույթի վերահսկելիությունը բավական մեծ դժվարություն է ներկայացնում, քանի որ անհնար է անընդհատ հետևել, թե տվյալ պահին որ օգտատերը ինչ նոր պրոֆիլ կամ խումբ է ստեղծում: Դրան զումարվում է այն, որ հաճախ համացանցի սխալ օգտագործման հետևանքով տարածվում են վիրուսներ, որոնք գործնականում վտանգավոր են դարձնում տվյալ էջը և դրա միջոցով տարածվող տեղեկույթը¹²: Կա նաև հավանականություն, որ հաքերը կոտրել է տվյալ պրոֆիլը, և ներկայումս այն օգտագործվում է ստեղծողի կամքին հակառակ կամ առանց նրա իմացության¹³: Սակայն իրավիճակը ամբողջովին անկառավարելի կամ անվերահսկելի չէ¹⁴, պարզապես անհրաժեշտ է դաշտի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմակերպել վերահսկողական, կանխարգելիչ-բացատրական, անհրաժեշտության դեպքում՝ միջամտական աշխատանք, ինչպես, օրինակ, ապատեղեկատվություն կամ հակահայկական քարոզչություն տարածող

¹⁰ Տես, օրինակ, *Արծրուն Հովհաննիսյան*, Ապրիլյան չորսորյա պատերազմի վերլուծություն (<https://www.facebook.com/arcrun/posts/1022096627825945>):

¹¹ Տես, օրինակ, «Ապրիլյան պատերազմում հայկական զինուժը լուրջ դեմքեր է վերացրել (տեսանյութ)»: «real NEWS», 13.04.2016 (<http://realnews.am/2016/04/13/lurj-demqer-enq-veracrel/>):

¹² Տես *Սամվել Մարտիրոսյան*, Ինչպես ազատվել ֆեյսբուքյան վիրուսներից, 24.12.2015 (<http://www.banman.am/2015/12/how-to-remove-facebook-virus.html>):

¹³ Տես *Սամվել Մարտիրոսյան*, Ինչպես պաշտպանել Facebook պրոֆիլը հաքերներից, 30.01.2014 (<http://www.banman.am/2014/01/facebook.html>):

¹⁴ Տես *В. В. Карякин*. Геополитика третьей волны: трансформация мира в эпоху Постмодерна. М., 2013, с. 175:

Ֆեյսբուքյան էջերի վերաբերյալ բողոքների («Report») ուղարկումը, տվյալ էջերի հետևողական մշտագնումը:

Քարոզչության և տեղեկատվական հակազդեցության գործողությունների շրջանակներում ՀՀ ՊՆ և ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ համապատասխան մասնագետների միջոցով թիրախային և մասնագիտական խմբերի հետ տարվում է պլանային աշխատանք, ապահովվում է սոցիալական ցանցերի մշտագնում, դրանցում շահեկան դիրքորոշումներ և տեսակետներ տարածելու նպատակով պատրաստվում և շրջանառության մեջ են դրվում տեղեկատվական-քարոզչական հոդվածներ, հրապարակումներ, ռազմահայրենասիրական թեմաներով հղովակներ, ֆիլմեր, հաղորդաշարեր (մասնավորապես՝ Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող ավանդական «Ջինուժ» և «Մարտիկ», ինչպես նաև Հ1-ի 2016 թ. նոր եթերաշրջանում հեռարձակվող «Իմ բանակը»^{*} հեռուստահաղորդումների միջոցով, որոնք լայն արձագանք են ստանում նաև ֆեյսբուքյան տիրույթում): Սա նկատի ունենալով՝ մենք ուսումնասիրել ենք ինչպես վերահսկման ենթակա կամ նրա տիրույթում գործող ու համադասվող, այնպես էլ ՊՆ վերահսկողության տիրույթից դուրս գտնվող անհատական էջերը կամ նախաձեռնողական խմբերը: Ըստ տվյալ ուսումնասիրության արդյունքների մշակել ենք հետևյալ գործնական առաջարկությունները: Մեր կարծիքով՝ նպատակահարմար է.

1) ՊՆ համապատասխան մարմինների ուժերով մշակել ընդհանուր մոտեցումներ ՊՆ համակարգում ներառված և ֆեյսբուքում անձնական պրոֆիլներ ունեցող բոլոր զինծառայողների և քաղաքացիական ծառայողների համար, որպեսզի նրանք, որպես ընդունված սկզբունք, նշված յուրության ալիքներում տեղադրվող հղովակները, երգերը, առանձին ռեպորտաժներն ու «Ջինուժի» թողարկումները տեղադրեն իրենց ֆեյսբուքյան էջերում: Սա կնպաստի ինչպես ՀՀ ՊՆ և ՀՀ ՁՈՒ-ի՝ ֆեյսբուքից օգտվող զինծառայողների և աշխատողների համախմբմանը տեղեկատվական անվտանգության և տեղեկատվական հակազդեցության համատեքստում, այնպես էլ ՊՆ ֆեյսբուքյան հարթակների և յուրության էջերի դիտումների թվաքանակի կտրուկ աճմանը և նշված հարթակների տարածմանն ու վարկի բարձրացմանը այլ ֆեյսբուքյան հարթակներում և թեմատիկ խմբերում^{**},

2) մեծ ուշադրություն դարձնել ՀՀ Ջինված ուժերի գործունեությունը լուսաբանող յուրության հարթակներին և դրանցում տեղադրվող սոցիալական

^{*} «Իմ բանակը»՝ 14 մասից բաղկացած ֆիլմաշար, որը նվիրված է Հայոց բանակի 25-ամյակին: Արտադրողն է «Բարս մեդիան»՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ (<https://www.youtube.com/watch?v=i1-dA7OiiJk>):

^{**} Հոդվածի հեղինակը, օրինակ, արդեն մի քանի տարի է, ինչ իր գրական բլոգ-կայքում (<https://arlenshah.wordpress.com/>) ներկայացվող ռազմահայրենասիրական թեմաներով հեղինակային բանաստեղծությունները, գիտական հոդվածները և այլ նյութեր հրապարակում ու լայնորեն տարածում է նաև իր ֆեյսբուքյան էջում և ֆեյսբուքյան խմբերում՝ ընդհանուր առմամբ՝ շուրջ կես միլիոն օգտատիրոջ շրջանում (<https://www.facebook.com/ArlenShahverdyan>):

հոլովակներին, որոնցով ֆեյսբուքյան օգտատերերը կիսվում են իրենց խմբերում ու էջերում: Այս իմաստով նշենք, որ, օրինակ, «ՀՀ պաշտպանության նախարարություն» յուրօրյան ալիքը վերջին անգամ թարմացվել է միայն երեք տարի առաջ¹⁵: Տվյալ ալիքն ունի ընդամենը 96 բաժանորդագրված (գրանցված՝ *subscribed*) դիտող և 14811 դիտում (2016 թ. նոյեմբերի 10-ի դրությամբ): Դրան հակառակ, ավելի ինտենսիվորեն թարմացվում է ՊՆ «Ձինուժ» հեռուստածրագրի յուրօրյան ալիքը¹⁶, որը, սակայն, ևս ունի ընդամենը 353 բաժանորդագրված դիտող և ընդամենը 7149 դիտում (2016 թ. նոյեմբերի 10-ի դրությամբ),

3) ՊՆ համապատասխան մարմինների ուժերով մշակել հայկական բանակի թեմայով բազմաթիվ նոր հաշթեգների (*hashtag*)^{*} համախումբ (հնուստ օգտատերերի մասնակցությամբ) ու դրանք համակարգված ձևով օգտագործել ֆեյսբուքյան հարթակներում,

4) «Հայոց բանակ» ապրանքանիշի ձևավորմամբ և ֆեյսբուքի միջոցով բանակը խորհրդանշող ատրիբուտների ու տարբերանշանների տարածում ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում, այդ թվում՝ Երիտասարդության շրջանում հայկական «զինվորական» (*military*) ոճի ներմուծում և խրախուսում (շապիկներ, գլխարկներ, պայուսակներ, զրեճակներ, պիտույքներ և այլն), այդ ապրանքատեսակների վաճառքի կազմակերպում և ստացված հասույթի ուղղում բանակաշինությանը: Բանակի տարբերանշանով և բանակին առնչվող զանազան ապրանքների վաճառքը կարելի է կազմակերպել նաև համացանցային (*online*) ձևաչափով (ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում և Իսրայելում¹⁷),

5) ստեղծել և վարել Եռաբլուր հուշահամալիր-պանթեոնը, ՀՀ ու ԼՂ Ազգային հերոսներին ներկայացնող և ազգ-բանակ կապը արտացոլող այլ ֆեյսբուքյան պաշտոնական էջեր:

¹⁵ Տես «ՀՀ պաշտպանության նախարարություն» (<https://www.youtube.com/user/MODArmenia>):

¹⁶ Տես «Ձինուժ» (https://www.youtube.com/channel/UCh5dvIXECL-WSLwWsXl4_eg):

* Հաշթեգ՝ բառ կամ ֆրազ, որը ֆիքսվում է *hash* փոփոխականի կամ թվի նշանի [#] միջոցով: Օգտագործվում է միկրոբլոգային աշխարհում, ցանցային ծառայություններում, ինչպիսիք են՝ Ֆեյսբուքը, Գուգլը, Ինստագրամը, Թվիտերը և «Վ Կոնտակտե»-ն, որոնք այստեղ կարող են օգտագործվել մուտք անելով # տեքստի ցանկալի մասից առաջ: Որոշ դեպքերում դրանք հանդիպում են նախադասություններում (տես «Hashtag» (<http://www.merriam-webster.com/dictionary/hashtag>)):

¹⁷ Տես, օրինակ, «Armed Forces Gear» (<http://www.armedforcesgear.com/army/>); «Israel Military Products» (<http://www.israelmilitary.com/>); «Zahal. Israeli Tactical Gear» (<http://www.zahal.org/>):

ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

**К ВОПРОСУ РАСПРОСТРАНЕНИЯ В СОЦИАЛЬНОЙ СЕТИ FACEBOOK
ВОЕННОЙ ИНФОРМАЦИИ РА И МАТЕРИАЛОВ
НА АРМЕЙСКИЕ ТЕМЫ**

А. М. ШАХВЕРДЯН, майор, старший офицер НИУО МО РА

РЕЗЮМЕ

Анализ посещаемости социальной сети Facebook подтверждает важность использования огромных информационно-пропагандистских возможностей социальных медиа вообще и сети Facebook – в частности. Эти возможности целесообразно использовать для распространения информации военного характера в интересах укрепления обороноспособности государства путем упрочения связей «нация-армия». В связи с этим выдвигается ряд предложений, базирующихся на личном опыте автора и направленных на консолидацию и объединение ресурсов армянских пользователей социальной сети Facebook, служащих и работающих в системе МО и ВС РА, а также на повышение эффективности и адресности целевого использования возможностей социальных медиа и аналогичных платформ.

INFORMATION SECURITY

**ON THE ISSUE OF SHARING THE RA MILITARY DATA AND MATERIAL
ON ARMY TOPICS IN THE FACEBOOK SOCIAL NETWORK**

A. M. SHAHVERDYAN, Major, Senior Officer, NDRU, MOD, RA

SUMMARY

The trafficking analysis of the Facebook social network proves the importance of using the enormous information and propaganda capabilities of social media in general, and the Facebook network in particular. It is worthwhile to use these opportunities for sharing military data for the benefit of the enhancement of the state's defense capabilities via strengthening the "nation-army" link. In this regard, a number of suggestions are being made based on the author's personal experience and targeted at consolidating and pooling the resources of Armenian users of the Facebook social network, who either serve in or work for the MoD and Armed Forces of the RA, as well as at raising the efficiency and the target-oriented use of social media and similar platforms.

**ՆԵՅՐՈՑԻՐԿՈՒՆՅԱՏՈՐ ԱՍԹԵՆԻԱՅՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ
ՏԱԳՆԱՊԱՆՈՎՈՎԹՅԱՆ ԿԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

*Ս. Գ. ԳԱԼՍՅԱՆ, ք/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ԵՊԲՀ ՌԲՖ պետ, Ս. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, ք/ծ փոխգնդապետ,
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Թ. Թ. ՍԱԴՈՅԱՆ, ք/ծ մայրո, ՀՀ ԱԱԾ ՌԲՎ պետի տեղակալ*



Նեյրոցիրկուլյատոր (նյարդաշրջանառական) ասթենիան (ՆՑԱ, նախկինում՝ նեյրոցիրկուլյատոր դիստոնիա) կարելի է բնորոշել հետևյալ կերպ. սրտանոթային համակարգի ֆունկցիոնալ հիվանդություն, որը դրսևորվում է բազմաթիվ սրտանոթային, շնչառական և վեգետատիվ խանգարումների

ծնով, ունի բարորակ ընթացք՝ բարենպաստ ելքով, չի հանգեցնում սրտամկանախտի (կարդիոմիոպաթիա) և սրտային անբավարարության [1]:

Կուրոլջկինը, Վինոգրադովը և ուրիշներ ներկայացնում են 25 տարվա ընթացքում 11–20 տարեկան անձանց շրջանում որպես ՆՑԱ ախտորոշված 2500 դեպքերի դիտարկումների արդյունքները: Նրանք նշում են, որ առողջության մակարդակն զգալի չափով պայմանավորված է ստրեսային ազդակներին համակշիռ (կոմպենսատոր)-հարմարվողական համակարգերի պատասխանով [4]: Սրտի ռիթմի կայունությունը պահպանվում է կարգավորման կենտրոնական և ինքնավար շղթաներով պարա- և սիմպաթիկ մոդուլացիայով, ընդ որում, դրանք ավելի վառ են արտահայտված պարասիմպաթիկ տիպի հակազդականությամբ երիտասարդների շրջանում [5]:

Կա կարծիք, որ առավել հաճախ ՆՑԱ-ի պատճառ են լինում տազնապախոռով հակազդումները, որոնք ի հայտ են գալիս վաղ մանկական տարիքում ու դեռահասության շրջանում և պայմանավորված են միջավայրով, նույն տարիքի անձանց, ինչպես նաև ուսուցիչների հետ գծություններով, իսկ դասերով ծանրաբեռնվածության պարագայում դրսևորվում են տազնապախոռվության և սոցիալական ինքնամեկուսացման ձևերով [8]:

Գրականության բազմակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զինված ուժերի անձնակազմի շրջանում նեյրոցիրկուլյատոր ասթենիայի ընթացքի ինքնատիպությունը պայմանավորված է զինծառայողի օրգանիզմի վրա ռազմական ոլորտի այնպիսի անբարենպաստ գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են նյարդահոգեկան և ֆիզիկական գերլարվածությունը, սննդակարգի փոփոխությունը, բանակային գործունեության յուրահատուկ

պայմանները, կոնկրետ անձի համար ոչ սովորական կլիմայաաշխարհագրական իրավիճակը և այլն:

Ջինվորական ծառայությունը զինծառայողների առջև դնում է խիստ պահանջներ, որոնց կատարումը ենթադրում է աստիճանական հարմարում, երկարատև վարժանքներ և նպատակալացություն [7]:

Որոշ հետազոտողների կարծիքով՝ զինվորական ծառայությունը անձի զարգացման կարևոր, բայց դժվարին, հաճախ՝ արտակարգ մի փուլ է: Ընդամին բնավորության շեշտավորման (ակցենտուացիայի) հուզականային կամ նյարդահոգեկան անկայունության, հոգեֆիզիոլոգիական վիճակների ինքնակարգավորման ունակության ոչ լիարժեք զարգացման դեպքում ստրեսս-ծին գործոնների ազդեցությունը կարող է հանգեցնել կարգավորման մեխանիզմների խզման և զինծառայողների գործունեության ապահարմարվողականացման [6]:

Ի. Դիդենկոն նշում է, որ թեև կատարված են բազմաթիվ աշխատանքներ, սակայն դեռևս չկա այն հարցի վերջնական պատասխանը, թե ինչու զինվորական ծառայությունը՝ որպես արտակարգ իրավիճակ, մի դեպքում հանգեցնում է հարմարվողականության, իսկ այլ դեպքում՝ ապահարմարվողականության զարգացման [3]:

Այսպիսով՝ ՆՑԱ-ի պրոբլեմը բավական արդիական է և վերջնական լուծում չի ստացել, իսկ դրա վաղ ախտորոշման համար կարևորվում է հոգեհուզական անկայունությամբ անձանց հայտնաբերումը, որն ինքնին հույժ բարդ խնդիր է:

Ելնելով վերը շարադրվածից՝ մենք կատարել ենք մի հետազոտություն, որի նպատակն էր ՆՑԱ-ի դրսևորումների վերլուծությամբ հստակեցնել դրանց ձևավորման հարցում ֆիզիկական օղակների դերն ու նշանակությունը:

Ըստ այդմ՝ որպես հիմնական խումբ վերցրել ենք 18–27 տարեկան արական սեռի, ՆՑԱ-ի ախտորոշումով 92 հիվանդի, իսկ որպես ստուգողական խումբ՝ նույն տարիքի և սեռի 62 մարդու:

Որպես դիտարկման միավոր ընդունվել է հիվանդության պատմությունը: Տազնապախռովության վիճակը որոշվել է Սպիլբերգեր-Խամինի թեստով: Այն ունի 2 բաղադրիչ (տես աղ. 1).

- ռեակտիվ (հակազդումային) տազնապախռովություն (ՌՏ),
- անձնային տազնապախռովություն (ԱՏ):

Հակազդումային տազնապախռովությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$\text{ՌՏ} = \Sigma_1 - \Sigma_2 + 35,$$

որտեղ՝ Σ_1 = հմ. 3, 4, 6, 7, 9, 12, 13, 14, 17, 18 հարցերի պատասխանների գումարն է,

Σ_2 = հմ. 1, 2, 5, 8, 10, 11, 15, 16, 19, 20 հարցերինը:

Անձնային տազնապախռովությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$\text{ԱՏ} = \Sigma_1 - \Sigma_2 + 35,$$

որտեղ՝ $\Sigma_1 =$ հմ. 22, 23, 24, 25, 28, 29, 31, 32, 34, 35, 37, 38, 40 հարցերի պատասխանների գումարն է,

$\Sigma_2 =$ հմ. 21, 26, 27, 30, 33, 36, 39 հարցերինը:

Տազնապայտությունների վիճակը գնահատել ենք ըստ ստացված գումարային արժեքի.

- գումարային արժեքը փոքր է 30-ից՝ տազնապայտությունը փոքր է,
- գումարային արժեքը մեծ է 30-ից և փոքր 45-ից՝ տազնապայտությունը չափավոր է,

- գումարային արժեքը 45 և ավելի է՝ տազնապայտությունը մեծ է:

Վիճակագրական մեթոդներով [2] կատարվել են՝

- առանձին ցուցանիշների միջին թվաբանականի (M) և դրա միջին սխալի (m) որոշում,

- Ստյուդենտի գործակցի հաշվարկում:

Աղյուսակ 1

ՍՊԻԼԲԵՐԳԵՐ-ԽԱՆԻՆԻ ԹԵՍԸ

h/h	Հարցեր	ոչ	ավելի շուտ ոչ	ավելի շուտ այո	այո
1	Ես հանգիստ եմ	1	2	3	4
2	Ինձ ոչինչ չի սպառնում	1	2	3	4
3	Ես լարված եմ	1	2	3	4
4	Ես ափսոսում եմ	1	2	3	4
5	Ես ազատ եմ	1	2	3	4
6	Ես անտրամադիր եմ	1	2	3	4
7	Ինձ անհանգստացնում են հնարավոր անհաջողությունները	1	2	3	4
8	Ես հանգստացած եմ	1	2	3	4
9	Ես անհանգիստ եմ	1	2	3	4
10	Ես ունեմ ներքին բավարարվածության զգացում	1	2	3	4
11	Ես վստահ եմ	1	2	3	4
12	Ես նյարդայնանում եմ	1	2	3	4
13	Ես տեղս չեմ գտնում	1	2	3	4
14	Ես ավերից դուրս եկած եմ	1	2	3	4
15	Ես չեմ զգում հարկադրանք, լարվածություն	1	2	3	4
16	Ես ուրախ եմ	1	2	3	4
17	Ես մտահոգված եմ	1	2	3	4
18	Ես խիստ գրգռված եմ	1	2	3	4
19	Ես հրձկնում եմ	1	2	3	4
20	Ինձ հաճելի է	1	2	3	4

h/h	Հարցեր	գրեթե ոչ	երբեմն	հաճախ	գրեթե այո
21	Ես հաճույք եմ զգում	1	2	3	4
22	Ես արագ հոգնում եմ	1	2	3	4
23	Ես ուզում եմ լաց լինել	1	2	3	4

ՆՅԱՐԴԱՇՐՋԱՆԱՌԱԿԱՆ ԱՍԹԵՆԻԱՅՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

24	Ես ուզում եմ ուրիշների պես երջանիկ լինել	1	2	3	4
25	Հաճախ ես տանուլ եմ տալիս, քանի որ չեմ կարողանում արագ որոշումներ ընդունել	1	2	3	4
26	Սովորաբար ես ինձ առույգ եմ զգում	1	2	3	4
27	Ես հանգիստ եմ, սառնասիրտ և հավաքված	1	2	3	4
28	Սպասվող դժվարությունները սովորաբար անհանգստացնում են ինձ	1	2	3	4
29	Մանր բաների համար ապրումներ եմ ունենում	1	2	3	4
30	Ես լիարժեք կերպով երջանիկ եմ	1	2	3	4
31	Ես ամեն ինչ սրտիս մոտ եմ ընդունում	1	2	3	4
32	Ես իմ նկատմամբ վստահություն չունեմ	1	2	3	4
33	Ես ինձ սովորաբար անվտանգ եմ զգում	1	2	3	4
34	Ես ծգտում եմ խուսափելու կրիտիկական վիճակներից ու դժվարություններից	1	2	3	4
35	Ես ունենում եմ հուսահատության պահեր	1	2	3	4
36	Ես բավարարված եմ	1	2	3	4
37	Մանր բաներն ինձ շեղում են և անհանգստացնում	1	2	3	4
38	Իմ անհաջողություններից ունենում եմ ապրումներ, դրանք երկար ժամանակ չեմ մոռանում	1	2	3	4
39	Ես հավասարակշռված մարդ եմ	1	2	3	4
40	Ես խիստ անհանգստանում եմ, երբ մտածում եմ իմ գործերի մասին	1	2	3	4

Կլինիկական-լաբորատոր և գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա հիվանդները բաժանվել են 5 խմբի՝ գերլարված (հիպերտենզիվ) (40 հիվանդ), սրտային (28), սակավալարված (հիպոտենզիվ) (5), խառը (11) և սուբֆեբրիլ ջերմությամբ (8):

Աղյուսակ 2-ում ներկայացված են ՆՅԱ-ով հիվանդների՝ Սպիլբերգեր-խանինի թեստով հետազոտության արդյունքները:

Աղյուսակ 2

ՍՊԻԼԲԵՐԳԵՐ-ԽԱՆԻՆԻ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	Հիվանդների խմբեր (M±m)		
	Ստուգողական խումբ (n=62)	Թերապևտիկ բաժանմունքի հիվանդներ (n=45)	ՆՅԱ-ով հիվանդներ (n=92)
ՌՏ	28,3±1,7	32,5±1,3	35,6±2,9*
ԱՏ	29,6±2,6	34,8±2,2	37,2±1,6*

Ծանոթագրություն. * -ով նշված է իր խմբում ստուգողականի համեմատությամբ p<0,05

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ստուգողական խմբի համեմատությամբ.

- «թերապևտիկ բաժանմունքի հիվանդներ» խմբում արձանագրվում է և՛ ՌՏ, և՛ ԱՏ աճման միտում,

- ՆՅԱ-ի դեպքում ՌՏ-ն և ԱՏ-ն հավաստի կերպով աճում են, այսինքն՝ տվյալ անձի վիճակը պայմանավորված է ինչպես շրջապատի իրավիճակով, այնպես էլ անձնային ապրումներով:

Ըստ այդմ էլ կատարվել է հաջորդ վերլուծությունը (աղ. 3):

ՍՊԻԼԵԲՐԳԵՐ-ԽԱՆԻՆԻ ԹԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՆՑԱ-Ի ՁԼԵՐԻ

Հիվանդության անվանումը	Ցուցանիշներ (M±m)			
	Ստուգողական խումբ		ՆՑԱ-ով հիվանդներ	
	ՈՏ	ԱՏ	ՈՏ	ԱՏ
Գերլարված	28,3±1,7	29,6±2,6	35,1±2,1*	38,6±1,6*
Սրտային			36,1±1,8*	36,6±1,8*
Սակավալարված			33,4±1,7*	37,8±1,2*
Խառը			32,8±0,9*	34,5±2,3*
Սուբֆեբրիլ ջերմությամբ			37,3±2,9*	39,3±2,0*

Ծանոթագրություն. *-ով նշված է իր խմբում ստուգողականի համեմատությամբ $p < 0,05$

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես հակազդումային, այնպես էլ անձնային տազնապախռովության տեսակետից հետազոտված թվակազմերի շրջանում ՆՑԱ-ի բոլոր ձևերի դեպքում ցուցանիշը, ստուգողական խմբի համեմատությամբ, ունի հավաստի աճ:

Այդ պատկերը վկայում է, որ տազնապախռովության ոլորտում ամկա փոփոխություններն ունեն լուրջ պատճառներ և կարող են.

- մի կողմից՝ կապված լինել այն նոր պայմանների հետ, որոնցում հայտնվել է զինծառայողը,
- մյուս կողմից՝ պայմանավորված լինեն նրանց շրջանում ՆՑԱ-ի տարբեր ձևերի ի հայտ գալով:

Այսպիսով՝ Սպիլբերգեր-խանինի թեստն ունի մեծ զգայունություն և ՆՑԱ ունեցող երիտասարդ անձանց տազնապախռովության ոլորտի հետազոտման օբյեկտիվ մեթոդ է, հնարավորություն է տալիս հայտնաբերելու համակշռիչ-հարմարվողական մեխանիզմների հարմարվողականության և հյուծման սահմանագիծը: Անհրաժեշտ է շեշտել, որ ՆՑԱ ունեցող անձանց տազնապայմանության նմանատիպ բնույթի շեղումների հաշվառմամբ կարելի է ենթադրել, որ առկա են հարմարվողականության և դրա հյուծման միանման մեխանիզմներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Т. М. Бенца*. Нейроциркуляторная дистония. «Практическая ангиология», 2009, № 2 (21).
2. *С. Гланц*. Медико-биологическая статистика. М., 1998.
3. *И. В. Диденко*. Психофизиологические и психологические особенности адаптации военнослужащих на различных этапах служебно-боевой деятельности. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук. Ростов-на-Дону, 2007.
4. *А. А. Курочкин, А. Ф. Виноградов, В. В. Аникин, Е. В. Иванова*. Нейроциркуляторная дистония у детей и подростков - болезнь или пограничное состояние? «Педиатрия», 2003, № 2.
5. *Л. А. Михайлова*. Вариабельность сердечного ритма у юношей-подростков с различным типом вегетативной реактивности. «Педиатрия», 2015, № 2.
6. *И. Г. Мосягин, П. И. Сидоров, С. В. Маруняк*. Влияние психологических факторов на формирование адаптивных способностей у военнослужащих по призыву. «Естествознание и гуманизм». Сборник научных трудов. Томск, 2005, т. 2, № 1, сс. 56–57.

7. А. М. Мухаметжанов, Н. К. Смагулов, С. Б. Жаутикова, Ф. У. Умер, К. М. Жиенбаева. Актуальные вопросы заболеваемости военнослужащих срочной службы. Электронный научный журнал «Современные проблемы науки и образования», 2013, № 3 (<http://science-education.ru/ru/article/view?id=9242>).

8. С. А. Чекалова, Е. С. Богомолова, А. В. Леонов. Профилактика формирования синдрома вегетативной дистонии в инновационном учреждении интернатного типа. «Казанский медицинский журнал», 2009, т. 90, № 4.

ВОЕННАЯ МЕДИЦИНА

СОСТОЯНИЕ ТРЕВОЖНОСТИ У ЛИЦ С НЕЙРОЦИРКУЛЯТОРНОЙ АСТЕНИЕЙ

*С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник
ВМФ ЕГМУ, М. В. САРГСЯН, подполковник м/с, кандидат медицинских наук,
доцент, Т. Т. МАДОЯН, майор м/с, заместитель начальника ВМФ СНБ РА*

РЕЗЮМЕ

Изучено состояние тревожности у больных терапевтического отделения ЦКВГ МО РА с нейроциркуляторной астенией по тесту Спилберга-Ханина. Установлено, что данный тест является высокочувствительным объективным методом исследования состояния тревожности у лиц молодого возраста, позволяющим установить грань между компенсаторно-приспособительными механизмами адаптации и их истощением. Исходя из схожести характера изменений тревожности, можем предположить существование одних и тех же механизмов адаптации и истощения.

MILITARY MEDICINE

THE ANXIETY STATE IN PATIENTS WITH NEUROCIRCULATORY ASTHENIA

*S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, Doctor of Medicine, Professor, Head,
Department of Military Medicine, YSMU, M. V. SARGSYAN, Lieutenant Colonel
of Medical Service, PhD in Medicine, Associate Professor, T. T. MADOYAN, Major
of Medical Service, Deputy Head, Department of Military Medicine, NSS, RA*

SUMMARY

This article covers the studies of the anxiety state in neurocirculatory asthenia patients at the Department of Therapeutics, Central Clinical Military Hospital, MoD, RA, according to Spielberger-Hanin test. Said test proved to be a highly sensitive and objective method for studying the adolescents' anxiety state, which enables to fix the borderline between the compensatory and accommodation mechanisms of adaptation and their exhaustion. Pursuant to the similarity in the nature of changes in the anxiety, we may assume the existence of the same mechanisms of adaptation and exhaustion.

«ՖԱԳՈՏ» հակատանկային կառավարվող համալիրի հայկական արտադրության ջերմադիտակային նշանոց: Վերջին երկու տասնամյակում աշխարհի առաջատար պետությունների բանակները նախապատվություն են տալիս գիշերային մարտին: Պատճառն այն է, որ նրանք ապահովված են ջերմադիտակային սարքերով, ինչի շնորհիվ ստանում են մեծ մարտավարական առավելություն՝ գիշերը տեսնելով համարյա այնպես, ինչպես ցերեկը:

Ադրբեջանը, իր զինված ուժերը համարելով նման սարքերով, նույնպես փորձում է հայկական բանակի նկատմամբ առավելություն ստանալ հատկապես գիշերը: Դրա ամենաակնառու վկայությունը 2016 թ. Չորսոթյա պատերազմն էր, որն Ադրբեջանն սկսեց ապրիլի 1-ի գիշերը, և հաջորդ գիշերներն էլ մարտական գործողությունները չէին դադարում: ՌԻստի ակնհայտ է, որ հայկական բանակի համար հույժ կարևոր է ջերմադիտակային սարքերով համարումը, ընդսմին դրա ամենաշահավետ տարբերակը Հայաստանում նման սարքերի արտադրության կազմակերպումն է:

2016 թ. հայկական «Արագած» ՍՊԸ-ն* ներկայացրեց իր նոր արտադրանքը՝ «Ֆագոտ» հակատանկային կառավարվող համալիրի ջերմացույց՝ ջերմադիտակային, նշանոցը: Այս սարքը նախատեսված է գիշերը կամ վատ տեսանելիության պայմաններում թիրախը հայտնաբերելու, որոշարկելու և հակառակորդի տանկերի ու զրահատեխնիկայի վրա նշանառու կրակ բացելու համար:

Հայկական արտադրության նման նշանոցն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով ապահովվում է դրա առավելությունը.

ա) ինչպես գիշերային դիտումը, այնպես էլ նշանառումը կատարվում են «Ֆագոտ» ՀՏԿՀ օպտիկական համակարգի միջոցով, ինչը պահանջում է «Ֆագոտի» և նշանոցի օպտիկական համակարգերի լիակատար փոխհամաձայնեցում: Դա մեծ հմտություն պահանջող աշխատանք է, որը դժվարանում են կատարել նույնիսկ Հայաստանից ավելի զարգացած երկրներ,



Նկ. 1. Ջերմադիտակային նշանոցը աշխատանքային դիրքում

* Այն 1992 թ. հիմնադրել է Մարատ Ղարիբյանը: Ներկայիս տնօրենը՝ Հովհաննես Ղարիբյանը, նրա որդին է: Ընկերության գործունեության հիմնական ոլորտներն են հակատանկային կառավարվող համալիրների, ՀՕՊ-ի համալիրների հովաքցման համակարգերի նորոգումը և տեխնիկական սպասարկումը:

բ) նշանոցի օպտիկական համակարգը (գերմանիումից պատրաստված) մշակվում է հենց «Արագած» ՍՊԸ-ում: Նշենք, որ աշխարհի քիչ թվով պետություններ ունեն գերմանիումի մշակման տեխնոլոգիա և համապատասխան մասնագետներ, և տվյալ հարցում Հայաստանն այնպիսի երկրների շարքում է, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Իսրայելը, Բելառուսը: Գերմանիումի մշակման բարձր տեխնոլոգիայի կիրառման շնորհիվ կարիք չի առաջանում նշանոցում տեղադրելու մեկից ավելի ոսպնյակներ, ինչը հանգեցնում է խնայողության և սարքի զանգվածի նվազեցման,

գ) թեև միկրոճառագայթաչափական (միկրոբլոմետրային) մատրիցները, գերմանիումը, էլեկտրոնիկայի որոշ տարրեր ու որոշ քիմիական նյութեր ներմուծվում են արտերկրից, բայց արտադրությունը փակ ցիկլով կատարվում է տեղում: Ընդհանուր առմամբ լուծված են նաև արտադրության միջոցների թարմացման և մասնագետների պատրաստման խնդիրները,

դ) նշանոցը որակով չի զիջում համապատասխան արտասահմանյան արտադրանքին, սակայն 3-4 անգամ էժան է, արտադրությունն էլ՝ եկամտաբեր:

Հայկական ջերմադիտակային նշանոցի հիմնական մարտավարատեխնիկական բնութագրիչներն են.

- զանգվածը մարտկոցներով՝ 8,154 կգ,
- ալիքի աշխատանքային երկարությունը՝ 7 – 14 մկմ,
- թիրախի որոշարկման հեռավորությունը՝ 3000 – 3500 մ,
- պատկերի մեծացման բազմապատիկությունը՝ 1, 2 և 4 անգամ,
- դիտման անկյունը՝ 3,9°,
- ջերմաստիճանային լուծունակությունը՝ 1°C,
- սնուցման լարումը՝ 12 Վ (մարտկոցների լիցքավորումը՝ 220 Վ և 24 Վ),
- մարտկոցների լրակազմը՝ 3 հատ,
- տրամաչափումը՝ ավտոմատ,
- աշխատանքային բանելակարգի բերման ժամանակը՝ 15 վ,
- շահագործումը՝ պարզ,
- աշխատանքի եղանակային պայմանները՝ – 40°C-ից +60°C, 98 % հարաբերական խոնավություն, վատ տեսանելիություն՝ մշուշ, ծխամշուշ և այլն:



Նկ. 2. Ջերմադիտակային նշանոցի արտաքին տեսքը

Պատրաստեցին՝ Հ. Մ. ՂԱՐԻԲՅԱՆԸ, գնդապետ Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆԸ

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայր, Զ. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայր

ՀԱՅ-ՌՈՒՄԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

անկախ խափանում – независимый отказ; primary failure
 բեռնամփոփ – контейнер; container
 բռնազավթում – оккупация; occupation
 գիտատեխնիկական կարողության փշիացում – распыление научно-технического потенциала; dissipation of scientific and technical potential
 գլխավոր շրջանառու պոմպ – главный циркуляционный насос; reactor coolant pump
 դատավարություն – судопроизводство, процессуальное действие; proceedings
 դապում – 1. сдерживание, 2. военное сдерживание, устрашение – 1. containment, 2. deterrence
 – դապում բացասմամբ – воспрепятствующее сдерживание; deterrence by denial
 – դապում պատժմամբ – карательное сдерживание; deterrence by punishment
 – ռազմական դապում – տես *դապում 2*
 իրավագործություն – юрисдикция; jurisdiction
 իրավունք – право; law
 – նախադեպային իրավունք – прецедентное право; case law
 – սովորութային իրավունք – обычное право; customary law, common law
 լուծումնակրություն – разрешающая способность; resolving ability
 խառնակազմ դատարան – смешанный суд; mixed court, mixed tribunal

խորագնում – зондирование, зондаж; probing
 խորհրդատվություն – տես *խորհրդարկում*
 խորհրդարկում – консультация; consulting, consultation
 ծխամշուշ – смог; smog
 կանխական հիմնավորում – предварительное обоснование; preliminary ground
 կիբեռզենք – кибероружие; cyberweapon
 կիբեռզուսում – киберсдерживание; cyberdeterrence
 կիբեռկարողություն – кибервозможности; cyber capacity
 կիբեռհակառակորդ – киберпротивник; cyber adversary
 կիբեռհանցագործություն – киберпреступление; cybercrime
 կիբեռհատուցում – кибервозмездие; cyber-retaliation
 կիբեռռազմավարություն – киберстратегия; cyber strategy
 կիբեռտարածություն – киберпространство; cyberspace
 համակարգ – система – system
 – հանրային կառավարման համակարգ – система общественного управления; system of public administration
 – միացումը մեկուսականիտղ համակարգ – система блокировки включения; switch-on interlock system
 – քննողական համակարգ – поисковая система; search engine

համակցություն – комбинация; combination	problem
համընդհանուր իրավասություն – универсальная юрисдикция; universal jurisdiction	չափ – мера; measure
հանգուցավորման սխեմա – нодализацияная схема; nodalization scheme	պատերազմական հանցագործություն – военное преступление; war crime
հանցակազմ – состав преступления; corpus delicti	ջերմադիտակային նշանոց – տես <i>ջերմադիտակային նշանոց</i>
հարկային շրջանացում – налоговое районирование; regionalization of taxes	ջերմակիր – теплоноситель; coolant
հեռազննում – дистанционное зондирование; remote sensing	ջերմացուցային նշանոց – тепловизионный прицел; thermal imaging sight
հովանավորյալ անձ – покровительствоваемое лицо; protected person	ջրա-ջրային էներգետիկ քեմիկատ – водо-водяной энергетический реактор; Water-Water Energetic Reactor
ճնշման համակշիռ – компенсатор давления; pressurizer	սաստում – տես <i>զույգում 2</i>
ճնշման փոխհատուցիչ – տես <i>ճնշման համակշիռ</i>	վարկ – 1. престиж, авторитет, 2. кредит; 1. prestige, 2. credit
մարդկային կապիտալի արժեքավորում – эвальвация человеческого капитала; human capital evaluation	վերազգային տիեզերական տարածություն – наднациональное космическое пространство; supranational outer space
մենաշնորհ – монополия; monopoly	վերականգնողական տնտեսական աճում – восстановительный экономический рост; recovering economic growth
մենաշնորհատեր – монополист; monopolist	տեղեկության հագեցվածություն – информация насыщенность; information saturation
միկրոնառաքայրաչափական մատրից – микроболометрическая матрица; microbolometer matrix	տնտեսակարգ – экономический строй; economic system
միջոց – 1. мера, 2. средство – 1. measure, 2. facility	քաղաքականություն – политика; 1. politics, 2. policy
– ուղեծրային խորագնական միջոց – орбитальное средство зондажа; orbital probe facility	– անթաքայտ քաղաքականություն – явная политика; explicit politics
– ուղեծրային հեռադիտակային միջոց – орбитальное дистанционное средство наблюдения; orbital facility of remote sensing	– թաքնված քաղաքականություն – неявная политика; implicit politics
մշտազննում – мониторинг; monitoring	– հակազդող քաղաքականություն – реагирующая политика; reactive politics
շոգեգոյացում – парообразование; steam generation	– նախաձեռնող քաղաքականություն – предприимчивая политика; proactive politics
որոշարկման պրոբլեմ – проблема детерминирования; determination	քաղաքական օտարվածություն – политическая отчужденность; political alienation

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

авторитет – *см. престиж*
 водо-водяной энергетический реактор – ջրա-ջրային էներգետիկ ռեակտոր
 военное преступление – պատերազմական հանցագործություն
 восстановительный экономический рост – վերականգնողական տնտեսական աճում
 главный циркуляционный насос – գլխավոր շրջանառու պոմպ
 дистанционное зондирование – հեռազննում
 зондаж – *см. зондирование*
 зондирование – խորազննում
 информационная насыщенность – տեղեկության հագեցվածություն
 кибервозмездие – կիրենհատուցում
 кибервозможности – կիրենկարողություն
 кибероружие – կիրենոզենք
 киберпреступление – կիրենհանցագործություն
 киберпространство – կիրենտարածություն
 киберпротивник – կիրենհակառակորդ
 киберсдерживание – կիրենզսպում
 киберстратегия – կիրենռազմավարություն
 комбинация – համակցություն
 компенсатор давления – ճնշման համակշիռ, ճնշման փոխհատուցիչ
 консультация – խորհրդարկում, խորհրդատվություն
 контейнер – բեռնամփոփ
 кредит – վարկ
 мера – 1. չափ, 2. միջոց
 микроболометрическая матрица – միկրոճառագայթաչափական մատրից
 мониторинг – մշտազննում
 монополист – մենաշնորհատեր

монополия – մենաշնորհ
 наднациональное космическое пространство – վերազգային տիեզերական տարածություն
 налоговое районирование – հարկային շրջանացում
 независимый отказ – անկախ խափանում
 нодализация схема – հանգուցավորման սխեմա
 оккупация – բռնազավթում
 парообразование – շոգեգոյացում
 покровительствуемое лицо – հովանավորյալ անձ
 политика – քաղաքականություն
 – неявная политика – քաղքված քաղաքականություն
 – предприимчивая политика – նախաձեռնող քաղաքականություն
 – реагирующая политика – հակազդող քաղաքականություն
 – явная политика – անթաքույց քաղաքականություն
 политическая отчужденность – քաղաքական օտարվածություն
 право – իրավունք
 – обычное право – սովորության իրավունք
 – прецедентное право – նախադեպային իրավունք
 предварительное обоснование – կանխական հիմնավորում
 престиж – վարկ
 проблема детерминирования – որոշարկման պրոբլեմ
 процессуальное действие – *см. судопроизводство*
 разрешающая способность – լուծունակություն
 распыление научно-технического потенциала – գիտատեխնիկական կարողության փոշիացում

сдерживание – զսպում	средство – միջոց
– военное сдерживание – զսպում, սաստում, ռազմական զսպում	– орбитальное дистанционное средство наблюдения – ուղեծրային հեռադիտական միջոց
– воспреещающее сдерживание – զսպում բացասմամբ	– орбитальное средство зондажа – ուղեծրային խորագնական միջոց
– карательное сдерживание – զսպում պատժմամբ	судопроизводство – դատավարություն
система – համակարգ	тепловизионный прицел – ջերմացուցային նշանոց
– поисковая система – որոնողական համակարգ	теплоноситель – ջերմակիր
– система блокировки включения – միացումը մեկուսականխող համակարգ	универсальная юрисдикция – համընդհանուր իրավասություն
– система общественного управления – հանրային կառավարման համակարգ	устрашение – սմ. <i>военное сдерживание</i>
смешанный суд – խառնակազմ դատարան	эвальвация человеческого капитала – մարդկային կապիտալի արժեքավորում
смог – ծխամշուշ	экономический строй – տնտեսակարգ
состав преступления – հանցակազմ	юрисдикция – իրավագործություն

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

combination – համակցություն	ցասմամբ
consulting – խորհրդարկում, խորհրդատվություն	– deterrence by punishment – զսպում պատժմամբ
consultation – սեմ. <i>consulting</i>	determination problem – որոշարկման պրոբլեմ
container – բեռնամփոփ	dissipation of scientific and technical potential – գիտատեխնիկական կարողության փոշիացում
containment – զսպում	facility – միջոց
coolant – ջերմակիր	– orbital facility of remote sensing – ուղեծրային հեռադիտական միջոց
corpus delicti – հանցակազմ	– orbital probe facility – ուղեծրային խորագնական միջոց
credit – վարկ	human capital evaluation – մարդկային կապիտալի արժեքավորում
cyber adversary – կիբեռնակառակորդ	information saturation – տեղեկութային հագեցվածություն
cyber capacity – կիբեռնկարողություն	jurisdiction – իրավագործություն
cybercrime – կիբեռնհանցագործություն	law – իրավունք
cyberdeterrence – կիբեռնզսպում	– case law – նախադեպային իրավունք
cyber-retaliation – կիբեռնատուցում	– common law – սեմ. <i>customary law</i>
cyberspace – կիբեռնտարածություն	
cyber strategy – կիբեռնազմավարություն	
cyberweapon – կիբեռնզենք	
deterrence – զսպում, սաստում, ռազմական զսպում	
– deterrence by denial – զսպում բա-	

- customary law – սովորույթային իրավունք
- measure – 1. չափ, 2. միջոց
- microbolometer matrix – միկրոճառագայթաչափական մատրից
- mixed court – խառնակազմ դատարան
- mixed tribunal – see *mixed court*
- monitoring – մշտազննում
- monopolist – մենաշնորհատեր
- monopoly – մենաշնորհ
- nodalization scheme – հանգուցավորման սխեմա
- occupation – բռնազավթում
- policy – քաղաքականություն
- political alienation – քաղաքական օտարվածություն
- politics – քաղաքականություն
- explicit politics – անթաքույց քաղաքականություն
- implicit politics – թաքնված քաղաքականություն
- proactive politics – նախաձեռնող քաղաքականություն
- reactive politics – հակազդող քաղաքականություն
- preliminary ground – կանխական հիմնավորում
- pressurizer – ճնշման համակշիռիչ, ճնշման փոխհատուցիչ
- prestige – վարկ
- primary failure – անկախ խափանում
- probing – խորագնում
- proceedings – դատավարություն
- protected person – հովանավորյալ անձ
- reactor coolant pump – գլխավոր շրջանառու պոմպ
- recovering economic growth – վերականգնողական տնտեսական աճում
- regionalization of taxes – հարկային շրջանացում
- remote sensing – հեռազննում
- resolving ability – լուծունակություն
- search engine – որոնողական համակարգ
- smog – ծխամշուշ
- steam generation – շոգեգոյացում
- supranational outer space – վերագային տիեզերական տարածություն
- system – համակարգ
- economic system – տնտեսակարգ
- switch-on interlock system – միացումը մեկուսականխող համակարգ
- system of public administration – հանրային կառավարման համակարգ
- universal jurisdiction – համընդհանուր իրավասություն
- war crime – պատերազմական հանցագործություն
- Water-Water Energetic Reactor – ջրա-ջրային էներգետիկ ռեակտոր

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և զաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանքի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմասնագիտական հավաքումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях. Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿՆՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անրոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասարյան*
Խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Զ. Վ. Փիրոյան*

Չեզոքորոշ նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Մ. Ս. Ավետիսյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի,
Ն. Ս. Մկրտչյանի, Դ. Ս. Չիլինգարյանի, Թ. Դ. Չիլինգարյանի,
Լ. Հ. Պասիկյանի, Զ. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի,
Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Անգլերեն և ռուսերեն տեքստերի խմբագրումը՝ *Մ. Ս. Ավետիսյանի,
Դ. Ս. Չիլինգարյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պասիկյանի*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի*

և ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Շապիկի 4-րդ էջի գրառումը բերվում է ըստ
Գարեգին Նժդեհի, Հատընտիր: Ե., 2001, էջ 278:

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆԵՑՈՒ փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>
Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2016 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չեզոքափորձ՝ 70x100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դ-սախչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԷՅՁԻ ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում



ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը առաջնագծում
պարզևներ է հանձնում զինծառայողներին

ԼՂՀ, 2016 թ. հոկտեմբեր



... չե՛կ կարելի մարտի մյ՛ն,
որն է ու՛թեամբ մե՛մարտի է -
հա՛յկահա՛ն ոգի՛ն:

Նւժդեհ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ